ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ

II

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Վարդանանց խորհուրդը	3
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ.— Մայր Արոսը և անոր արժանաժառանգ Գահակալը	6
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ.— Մաղթանք ամանորի և Սուրբ Մեսրոպյան	11
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	13
ԹՂԹԱԿԻՑ.— Գրական-գեղարվեստական հանդես Ս. Էջմիածնում՝ նվիրված Սրբոց Վարդանանց անմահ հիշատակին	15
ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՅՆԹԱԲՅԱՆ.— «Վարդանանց պատմության» գաղափարական և գեղարվեստական արժանիքները	18
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Մակարավանք	22
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Շրջագայություն Հայոց ձորում	35
ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ	44
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	51
Տեսակցություն մը Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ Շավարշ վարդապետի հետ	54
Զակարդայի ու Սուրաբայայի հայերը	55
Խումբ մը սովետական մարզիկներ Փարիզի մեջ	55
Երգահան Օննիկ Պերպերյան Ֆիլադելֆիո մեջ	56
Խորեն Տեր-Հարությունյան ոսկե մեդալով կպարգևատրվի Ֆիլադելֆիոյ մեջ	57
Սովետահայ երգչուհի Զարուհի Դոլուխանյան կճայտ Փարիզի իր ունկընդիրները	57
ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.— Վանե-Վանյան, «Հարալեզներու հաշտությունը»	59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅՈՑԿԵՂԵՑՈՒ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԼՈՐԳԻԱ Զ.Ի

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ԱՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մեր ազգային-եկեղեցական տոների շարքում Վարդանանց տոնը բացառիկ տեղ է գրավում, որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության համաժողովրդական հերոսամարտ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հայ հավատացյալ ու հայրենասեր ժողովուրդը, միշտ էլ ազգային հպարտությամբ են նշել Վարդանանց հիշատակը, «որ կատարեցան ի մեծի պատերազմին»:

Վարդանանց ու Ղևոնդյանց պայծառ կերպարները՝ որպես քաջարի և հայրենասեր մարտիկների, սերունդներ են խանդավառել՝ պայքարելու հանուն Հայրենիքի ազատության, հանուն մեր նախնյաց հավատի, սրբության, հանուն մեր հոգևոր անկրկնելի արժեքների:

5-րդ դարը հայ ժողովրդի պատմության մեջ ու ազգային-եկեղեցական կյանքում, իր արժեքով, պատմական իրադարձություններով հարուստ, անմոռանալի մի ժամանակաշրջան է, որն իր անջնջելի ու խորը դրոշմն է դրել հայ ժողովրդի հերոսամարտերի պատմության վրա: Վարդանանց ոգին մեծ լուսարձակի նման լուսավորել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուղին 5-րդ դարից մինչև այսօր:

5-ՐԴ ԴԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՋԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՄԱՆԱՎԱՆԴ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆ է: Պայքար գրչով և սրով հանուն Հայրենիքի, հանուն հայ ժողովրդի հոգևոր ու քաղաքական արժեքների, պայքար հանուն հայ հողի, ջրի, ազատության և անկախության:

Եթե հնություն ունի հայ ժողովրդի պայքարի պատմությունը: Սկսվում է այն ազատության համար մղված պայքարի մի դասական դրվագով, երբ ավանդական Հայկ նահապետը, իր մի քուռ քաջերով, առաջին անգամ մեր պատմության մեջ, խիզախում է Բելի բռնության դեմ, որ հանդգնել էր խախտել հայրենի հողի անձեռնմխելիությունը. «Եւ Հայկն ոչ հնազանդեցաւ ի ծառայութիւն Բելի և ո՛չ մեծարէր զնա աստուածորէն ջրով...»:

Հայրենասիրությունը, Հայրենիքի, հոգևոր արժեքների, հոգու ազատության ու անկախության համար պայքարը կարմիր թելի նման անցնում է հայ ժողովրդի պատմության միջով, հազարամյակներով՝ Հայկի օրերից մինչև նոր ժամանակները:

Ու Վարդանանց պատերազմը այդ պայքարի ամենաուշագրավ մեկ հանգրվանն է: Վարդանանց պատերազմը «եղել է, կա և կմնա առնավետ ազգապանծ էջը հայոց պատմության, հոգեզմայլ մի էջ, որ դարեր անընդհատ ոգեշնչել ու մխիթարել է հայազգ սերունդներին և ազգային-քաղաքական առաքինության ուղիներ պատգամել Հայրենիքին, Ազգին և Եկեղեցուն»,— գրում է ազգիս հայրենասեր ու մեծագործ Հայրապետը Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակի առթիվ իր հայրենաշունչ կոնդակում:

Վարդանանց պատերազմը կարելի չէ լրիվ հասկանալ ու գնահատել, առանց ծանոթանալու քաղաքական այն իրադրության հետ, որոնք գոյություն ունեին 5-րդ դարում, ինչպես և ծանոթանալու հասարակական-գաղափարական այն հոսանքների հետ, որոնք ուժ և հպատակություն տվին շարժմանը:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի շնչի տակ 5-րդ դարում հասակ էր բաշել հավատի ու հայրենասիրության տիպար, խոստումնալից ու շնորհալի մտավորականների մի ստվար սերունդ, որ սրությամբ կատարեց իր պարտքը Հայրենիքի և եկեղեցու հանդեպ: Նրանք գիր ու գրականություն ստեղծեցին, հայրենասիրական վառ շնչով երկեր գրեցին, անձնուրաց արիությամբ ծառայեցին հայ ժողովրդին և կազմակերպված դուրս բերեցին նրան պայքարի՝ պարսիկների դեմ: Նրանք հավասար չափով բաժանեցին հայ ժողովրդի ողբերգությունն ու տխուր հակատագիրը:

Սխալ կլիներ Վարդանանց պատերազմը բնութագրել որպես զուտ կրոնական կամ զուտ քաղաքական պատերազմ:— Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը առանձին վերցրած: Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի ազգային-կրոնական և քաղաքական իրավունքների պաշտպանության պատերազմ էր, «Հայոց պատերազմ», ինչպես այն ճշգրտորեն բնորոշել է Եղիշեն:

Վարդանանց պատերազմը «հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պանծալի բարձունքն է հանդիսանում, հերոսական արտահայտությունը հայ ազգի բարոյական բարձր նկարագրի, հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնուրաց հերոսության, հոգեվոր նվիրվածության և մարտական կորովի» (Գեորգ Զ. Կաթողիկոս):

Պարսից արքունիքը իր հարվածն ուղղեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դեմ, որովհետև 5-րդ դարում նա մեծ ազդեցություն ուներ հասարակական լայն շրջանում և իր դիրքերում հաստատ կանգնած անվախ հայտարարում էր. «Ցայսմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել, ո՛չ երեշտակք, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր և ո՛չ ջուր...»:— Անա թե ինչո՞ւ պարսից արքունիքը իր ծուլողական քաղաքականությունն իրականացնելու համար իր առաջին հարվածն ուղղում էր դեպի Եկեղեցին: Հազկերտն աշխատում էր ջնջել հին հրիտոնեությունը, ապա անցնել հայ ժողովրդի ձուլմանն ու ոչնչացմանը:

Իր ոճրային ծրագիրն իրականացնելու համար, Հազկերտն սկսում է հին ծանրացնել հարկերը: «Ո՞վ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից. և ո՛չ ըստ արքունի արժանաւորութեան առնուին. այլ հինաբար յափշտակելով. մինչդեռ հեռեանք իսկ մեծապէս զարմանային թէ՝ ուստի՝ այս ամենայն գանձ ելանէ. զիա՞րդ չէն կացցէ աշխարհն Հայաստանեայց».— պատեցած պատմում է Եղիշեն:

Սասանյան Պարսկաստանի այս քաղաքականության դեմ ծառացավ հայ ժողովուրդը կուռ միասնությամբ և հաստատուն կամքով: Զենք վերցրին հասարակության բոլոր խավերը՝ նախարարները, շինականները, հոգևորականները. «Ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքաջանալից և զմեղակեցաց, Երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին, և ո՛չ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց, պատրաստ ի սպանանել և ի մեռանել»,— գրում է Եղիշեն:

Հայ ժողովուրդը սակայն Ավարայր է գնացել հաղթելու և ապրելու համար. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեթ ժառանգեսցուք»:

Ավարայրն է՛լ ավելի է համախմբել հայ ժողովրդին իր Հայրենիքի և եկեղեցու շուրջ: Հայությանն կյանքին, նրա ազգային սպառնացող մեծ ու համատարած աբեմավիրը առաջ էր բերել ժողովրդական հերոսություն, անձնուրացություն: Ավարայրում կռվող և արյուն թափող հայ ժողովուրդը շատ լավ էր հասկանում, թե ինչի՞ համար է նա կռվում: «Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ո՛չ երկնչի ի նմանէ»: Ընդհակառակը՝ հավասար չափով հարվածում էր և՛ ժողովրդին, և՛ եկեղեցուն, և՛ շինականին, և՛ նախարարին: Հենց դրա համար էլ ամբողջ երկիրն ու ժողովուրդը ներշնչված էին մի բարձր հայրենասիրությամբ, որի մեջ իրար էին կցորդված Հայրենիքի սերն ու հավատի նվիրվածությունը:

Թշնամին հարձակվում էր ավազակի պես, արյունով ու երկաթով պարտադրում իր քաղաքականությունն ու կամքը մեր երկրին, քանդում, ավերում մեր ցանկալի երկիրը, արյուն ու արցունք թողնում իր ետևից, գերում, ենչում դաժանորեն, քանդելով այն, ինչ հայկական է, ինչ հայ մշակույթի, հայ հոգու կենիքն ու ինքնուրույնությունն էր կրում:

Ավարայրը մարտահրավեր էր պարսից բռնակալության դեմ, հանուն հայ հոգու ազատության, հանուն Հայրենիքի գաղափարի, հանուն հայ ջրի, հայ հողի, հայ հավատի, մարտահրավեր՝ «Հայոց պատերազմի և վասն Հայրենեաց»: Հայ ժողովուրդը չընդունելով իր հոգու վրա ո՛չ մի երկրավոր տեր ու տնօրեն, իջավ մարտի դաշտ հաղթելու վճռականությամբ և հավատով համակված:

Ավարայրը «խելագար ու հուսահատ մի պատերազմ» չէր երբեք, ինչպես աշխատում են այն ներկայացնել ոմանք, պաշտպանելով Վասակի «հաղթական հերոսությունը»:

Ավարայրում կռվող հիմնական ու դեկավար ուժը հայ ժողովուրդն է, որը իր կամքն է թելադրում: Զկար՝ թագավորություն, նախարարության մի մասը դավաճանում էր, մի ուրիշ խումբ տատանվում. ԿԵՆԴԱՆԻ ԷՐ ՍԱԿԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՎ ՀՈԳԵՊԵՍ ՔԱՋԱՐԻ. նա իր սեփական ձեռքերում վերցրեց իր Հայրենիքի բախտը և հարևան վրաց ու աղվանից ժողովուրդների հետ «կամաւ և յօժարութեամբ և երդմամբ» դաշն կապած, իբրև Ավարայր կռվելու այն ազնիվ զգացումով, որ անփառունակ կյանքից փառավոր է հերոսական մահը «վասն Հայրենեաց» և լավ է մեռնել կանգնած, սուր ի ձեռին՝ մարտի դիրքերում, քան սողալ անարգ թշնամու ոտքերի տակ:

Ավարայրում պատերազմը տանուլ տվեց Պարսկաստանը: Ավարայրում չպարտվեց հայ ժողովուրդը: Ավարայրից հետո, իր անմատչելի սարերի գլխին նստած, է՛լ ավելի վճռական կերպով շարունակեց իր պայքարը հայ ժողովուրդը, մինչև որ վերջին պարսիկն էլ դուրս շպրտվեց հայ հողից: Իբրև հայ ժողովրդի ցասումնալից և պատժիչ ձեռք պարսից բռնակալության և ազգային ներքին դավաճանների գլխին:

Վասակները արդարանալիք չունեն պատմության և սերունդների դատաստանի առաջ:

451 թվականի մայիսի 26-ն է... Ժամանակը գարնանային է և դաշտերը ծաղկալից: Տղմուտ գետի երկու ափերի վրա իրար դեմ կանգնել են երկու բանակներ, ինչպես Դավիթը՝ Գողիաթի դեմ: Դավթի պարսատիկի քարի մեջ ժողովրդի անխոցելի սիրտը կա: Հայրենասերների բանակը Վարդանի գլխավորությամբ եկել է Ավարայր՝ պաշտպանելու իր երկրի ազատությունը: Վարդանը հայ ժողովուրդը ինքն իսկ է, որը արդարացի ազատագրական պայքար է մղում բռնության դեմ: Երկրորդ բանակին առաջնորդել է նվաճողական ոգին, բռնությունը. նա եկել է ավարի տալու խաղաղասեր ու աշխատունակ հայ ժողովրդի արդար վաստակը:

Վարդանը, որպես մարմնացումը հաղթության, հայրենասիրության, խիզախության, վրեժի ու ցասման, խռխռտ ու անվեհեր, ազատագրական մարտի է տանում հայ ժողովրդի քաջարի կորյուններին՝ Սասանյան ճափշտակիչների դեմ:

Վարդանի և 1.036 քաջերի հերոսական մահով, «որք զանուանս իւրամանչիւր ի դպրութեան կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծի պատերազմին», իբրև պատմության վարագույրը Ավարայրի վրա... Հետագա դարերում հայ ժողովրդի և նրա երկրի վրայով եկան ու անցան մեծ արհավիրքներ...: Շատ ժողովուրդներ հեռացան պատմության բեմից, սակայն ազատասեր հայ ժողովուրդը ապրելու, հարատևելու համար կամքով լցված, պահեց իր գոյությունը և հարատևեց:

Վարդանանք հայրենասիրության, խիզախության խորհրդանշան հանդիսացան: Ամեն անգամ, երբ օտար բռնակալները փորձել են ձեռք բարձրացնել հայ ժողովրդի ազատության դեմ, Վարդանանց կերպարը խանդավառել է հայ սերունդներին՝ մարտի դուրս գալու հորից՝ վճռելու Հայրենիքի բախտը և իրենց հակատագիրը: Վարդանանց և Ղևոնդյանց հերոսական կերպարը մինչև այսօր էլ հպարտությամբ է լցնում ամեն հայրենասեր հայու սիրտը:

ՓԱՌՔ ՎԱՐԴԱՆՆԵՐԻ ԾՆՈՒՆԴ ՏՎՈՂ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ:



ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ԵՎ ԱՆՈՐ ԱՐԺԱՆԱԺԱՌԱՆԳ ԳԱՀԱԿԱԼԸ

(Խմբագրական «ՀԱՍԿ»ի)

Երկրորդ անգամ ըլլալով պատեհություն ունեցանք այցելելու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, 1945-ին գացեր էինք որպես ուխտավոր՝ հերկրպագություն մեր հայրենի սրբություններուն, ընկերանալով Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Վեհին՝ Տ. Գարեգին Կաթողիկոսի։ Այս անգամ (1953) գացինք Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Վեհափառ Հայրապետի հատուկ հրավերին վրա, Հայաստանյայց Եկեղեցվո աստվածաբանության մասնավոր դասընթացք մը ավանդելու Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին մեջ։

Հոգեկան անպատում հրճվանքով համակվեցանք վերատեսնելով կանգուն և հոգևոր կյանքով շեն Ս. Էջմիածինը՝ համայն հայության «Սրբություն Սրբոցը», որուն կաթողիկեն վսեմաբար կոթողացած է Հայոց աշխարհի կապույտին մեջ, որպես իրավ հավերժություն ու մարմնացյալ խորհրդանշան հայուն անառիկ ու անմար հավատքին։ Այդ հինավուրց Տաճարին խորհրդաստող կամարներուն ներքև, Աստվածորդվույն Իջման սեղանին առաջ, առավոտ և երեկո անխափան արարողությունները կպաշտվին հավատացյալներու հոծ բազմության մը ներկայության։ Սոսկ իրողություն մը մատնանշած վըլլանք, եթե դիտել տանք, թե շատ ավելի մեծ թիվով ժողովուրդ կհաճախեն Ս. Էջմիածին և Հայաստանի բացված ու գործող եկեղեցիները, քան արտասահմանի մեր նվիրապետական Աթոռներու մայր տաճարները և կամ ծխական եկեղեցիները։ Ավելին՝ այն կանոնավորությունը, ճշտությունը, ժամերգությանց և արարողությանց ամբողջական կատարումը, դոր տեսանք Մայր Աթոռեն ներս, ինչպես նաև ա՛յլ եկեղեցիներու մեջ, դժվարավ պիտի գտնեինք ո՞րևէ տեղ, ո՞րևէ նվիրապետական կամ ծխական եկեղեցիե ներս։ Հայաստանի հեռավոր վայրերուն մեջ, մեր այցելությանց ատեն ակամատես եղանք հայ քահանաներու և վարդապետներու, որոնք երկյուղածորեն և անձանձիր, ամեն օր՝ առավոտ և երեկո կկատարեն եկեղեցական ժամերգությունները. ու հայ տաճարները միշտ բաց են աղոթող հայ հոգիներուն համար։ Տեղին է հոս

հիշել և մա՛նավանդ շեշտել, որ Մայր Հայրենիքի այդ եկեղեցականներուն նվիրումն ու երկյուղածությունը և պահպանողական ոգին պետք է որ օրինակ հանդիսանան արտասահմանի հայ հոգևորականության, մանավանդ Եվրոպայի և Ամերիկայի եկեղեցականներուն, որոնք լուր օրերու ժամերգությունը խափանելն զատ, ըստ կամս կրճատած են նույնիսկ կիրակնօրյա արարողությունները։

գործեր ալ կկատարեն։ Վեհափառ Հայրապետին ծրագիրն է, որ սարկավագներեն հաջողագույնները դրկե արտասահման, Գերմանիա կամ Անգլիա, աստվածաբանական և եկեղեցական ուսմանց մեջ ավելի խորանալու համար։ Ան կուզե, որ սարկավագները պատրաստվին իր և էջմիածնի ինքնուրույն թվականներու հույլ մը գիտուն և հավատավոր հոգևորականներու օրինակով, ինչպես Գարեգին Կաթողիկոսի, Կարապետ և

Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը Երևանի Ս. Զորավար եկեղեցու առջև մի խումբ հավատացյալների հետ

Կարելի՞ էր միթե հոգևին չհրճվիլ, տեսնելով Ս. Էջմիածնի Տաճարի կողքին բարձրացած Հոգևոր Ճեմարանի սիրուն շենքը, ուր երեսունչորս ժառանգավորներ կուսանին՝ նվիրվելու Հայաստանյայց Ս. Եկեղեցվո ծառայության։ Ասոնցմե տասնմեկ հոգիներ սարկավագ են, որոնցմե երեքը, եռանդուն և շնորհալի տղաք, իրենց ուսումը կշարունակեն Մոսկվայի Ռուսական Աստվածաբանական Ճեմարանին մեջ։ Մյուսները կգտնվին Մայր Աթոռ և մտավորական ղեկավարված աշխատանքի դուրս վանական-վարչական

Տիրայր եպիսկոպոսներու, Կոմիտաս վարդապետի և այլն։ Մոտ երկու ամիս Ճեմարանի մեջ մեր տված աստվածաբանական դասախոսությանց առթիվ նկատեցինք, որ ուսանողներ ավելի խոր պատրաստություն ունին հայագիտական ուսմանց մեջ, քան աստվածաբանական գիտելյաց։ Այս իսկ պատճառով նորին Վեհափառությունը մտադրած է արտասահմանեն 2—3 կրոնագետ, աստվածաբան եկեղեցականներ հրավիրել Էջմիածին՝ սույն կարիքը բառնալու համար։ Սակայն երեսունչորս ուսանողներ, թե իսկ

ամենքն ալ եկեղեցական ըլլան, ի՞նչպես պիտի կարենան մեր եկեղեցվո ծով կարիքները հոգալ։ Այս դժվարության առաջը առնելու համար Սրբազնագույն Հայրապետը ծրագրած է Ճեմարանը նյութապես ապահովել և եռապատկել աշակերտներու թիվը։ Լիահույս ենք, որ իր ծրագիրը անպայման կիրագործվի։ Այն պարագային, երբ Ճեմարանը իր բոլոր դասարանները լրիվ ունենա, Վեհափառ Կաթողիկոսը նախկին շենքը պիտի տրամադրե իր սաներուն։ Ներկայիս իր թույլտվությամբ և համաձայնությամբ տեղական իշխանության հետ ան կգործածվի իբրև տասնամյա դպրոց Վաղարշապատի աշակերտներուն։

Գեորգ Վեհափառի ջերմ փափագն է նաև, որ արտասահմանեն աշակերտներ գան և ուսանին Հոգևոր Ճեմարանին մեջ։ Այս աշակերտները իրենց ուսումը լրացնելե և եկեղեցական ձեռնադրվելե ետք՝ ազատ պիտի ըլլան պաշտոնավարելու Խորհրդային Միության կամ արտասահմանի թեմերուն մեջ, ըստ հարմարության պարագային։

Մոտ տասը տարիե ի վեր կանոնավոր և ճոխ բովանդակությամբ Մայր Աթոռը կհրատարակե իր պաշտոնաթերթը՝ «Էջմիածին» ամսագիրը։ Հազարավոր օրինակներ կղրկվին Սփյուռքի և Խորհրդային Միության թեմերուն։ «Էջմիածին» ամսագիրով վ մանավանդ, որ հայ հավատացյալներ Հայաստանի և Ռուսաստանի սահմաններեն ներս հայ ազգային-եկեղեցական կյանքի իրադարձությանց տեղյակ կմնան։ «Էջմիածին» պարբերաթերթը կտպվի Երևանի մեջ, որովհետև Մայր Աթոռը տպիչ և տողաշար մեքենաներ չունի։ 1945-ին, ազգային-եկեղեցական համագումարին, պատգամավորներեն մին խոստացավ տպագրական մամուլ մը նվիրել Աթոռին, բայց դժբախտաբար, պարագաներու բերմամբ չկրցավ իր խոստումը կատարել։ Անհրաժեշտ է հետևաբար Մայր Աթոռը օժտել էլեկտրական տողաշար մամուլով և տպիչ մեքենայով մը։ Աթոռ մը, մանավանդ Ս. Էջմիածնի նման, չի կրնար իր կրթական և հոգևոր գործն ու առաքելությունը կատարել առանց արդի տպարանական հարմարագույն սարքվածքի։ Արտասահմանի հայ բարեպաշտ և հայրենասեր ազգայիններու լուրջ նկատառման կհանձնենք սույն խնդիրը։ Նվիրատուներ հավերժ կունենան «հիշատակ» ի Ս. Էջմիածին։

Վերջին քանի մը տարիներու ընթացքին, Ս. Էջմիածին ունեցած է դարձյալ իր ճոխ մատենադարանը և նաև փոքր ձեռագրատուն մը, ուր հարյուրե ավելի ձեռագիրներ մեծ խնամքով կպահպանվին և բանասիրական աշխատանքներու համար կօգտագործվին։

Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, որ կբաղկանա եկեղեցական և աշխարհական անդամներե, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կունենա իր կանոնավոր նիստերը։ Խորհուրդը կգրաղի հրնդհանուրն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո բոլոր թեմական խնդիրներով և կընե պատշաճ տնօրինություններ։ Անոր բոլոր անդամներն ալ զգոն, փորձառու, կիրթ և հեռատես անձնավորություններ են։ Խորհուրդը իր աշխատանքները կկատարե լուրջ ու արդարամիտ քննարկությամբ և օրինակելի կանոնավորությամբ։

Խորհրդային Միության թեմերուն՝ Երևանի, Թիֆլիսի, Նոր-Նախիջևանի, Շիրակի և Գանձակի առաջնորդները կնշանակվին Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմե և վավերացմամբ Վեհափառ Հայրապետի։ Եկեղեցիներու վերաբացման և քահանաներու նշանակման հարցերը, ինչպես նաև միաբանության, Հոգևոր Ճեմարանի և ուսուցիչներու վերաբերյալ խնդիրներ դարձյալ Խորհուրդի կարդադրությամբ կտնօրինվին։ Նորին Ս. Օծության ջանքն է արտասահմանի թեմերուն հետ կանոնավոր հարաբերություններ պահել և կատարել այն տնօրինությունները, որոնք Իր հեղինակության և իրավասության շրջանակին մեջ կգտնան։ Քաղաքական ավելի նպաստավոր պայմաններ անշուշտ կարելի պիտի դարձնեն ավելի օրինավոր և սերտ կազմ մը տալ այս հարաբերություններուն։

Միաբանությունը ունի չորս եպիսկոպոս, վեց վարդապետ, քահանաներ և սարկավագներ, ամենքն ալ իրենց սիրտն ու միտքը ի սպաս դրած Մայր Աթոռի պահպանության և պայծառության։ Քիչ է այս թիվը. մեր սրտագին մաղթանքն է, որ միաբանությունը աճի թե՛ քանակով և թե՛ որակով, որպեսզի

կարենա եկեղեցիներուն հովիվներ և քարոզիչներ, և վանքերուն վանահայրեր հասցընել։ Խորհրդային իշխանությունը Գեղարդի և Խոր-Վիրապի վանքերը իրենց ստացվածքներով հանձնած է Ս. Էջմիածնի։ Այս վանքերը ունին իրենց առանձին վանահայրերը։ Կիպրոսի օրեր հարյուրավոր հավատացյալներ ուխտի կերթան այդ սրբավայրերը։ Մայր Հայրենիքի թեմերուն առաջնորդները սոսկ հոգևոր գործերով կզբաղին և ազատ են արտասահմանի հայ եկեղեցականներու ազգային այլազան խնդիրներու տաղտուկեն և մտահոգություններեն։

Ս. Էջմիածնի Մայրավանքին Ծաղկյա փոքր դահլիճի մը մեջ գիրքերու և նամակներու դեզերուն քով՝ գրասեղանի մը առջև հակած եռանդագին կաշխատի Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս, Հայոց ազգին Սրբազնագույն Հայրապետը։ Ուսումնվեցամյա այս պատկառելի, իմաստուն և ազնվական առաքինություններով օժտված Հովվապետը թերևս ավելի եռանդուն, ժրաջան, տոկուն և հարատև աշխատող է, քան մեր տարեց կամ երիտասարդ եկեղեցականներեն որևէ մեկը։ Կարելի չէ այս մեծանուն եկեղեցականին առաքինությունները մի առ մի թվել, կամ Անոր ղեկավարելու ու առաջնորդելու ձիրքերը ներկայացնել, և կամ ամեն դասակարգի մարդոց հետ Անոր ուղիղ և ազնվական վարվեցողությունը նկարագրել։ Կբավե միայն սա իրողությունը մատնանշել, թե ազգին Վեհափառ Հայրապետը աշխարհի ներկա քաղաքական աննպաստ և դժվարի պայմաններուն մեջ ավելի արդյունավոր գործ կկատարե և ավելի կպայծառացնե Իր Եկեղեցին, քան շատ շատեր դյուրագույն և լավագույն պայմաններու մեջ։ Ապագա պատմագիրին կմնա ըսել, թե Խորեն Կաթողիկոսի մահեն ետք ինչպիսի՞ վճռական դեր կատարեց Գեորգ Վեհափառը Ս. Էջմիածնի պահպանման և վերակազմության գործին մեջ։ Մեծ մարդոց մեծությունը ընդհանրապես ավելի կհայտնվի իրենց մահեն ետք. Գեորգ Վեհափառը այն քիչերեն է, որոնք ի կենդանության իսկ կպարտադրեն մեզ ճանչնալ իրենց բովանդակ մեծությունը։

Այսպիսի ընտրելագույն և անստգյուտ Հայրապետի մը, զոր շատ իրավամբ «Էջմիածին» ամսագիրը (սեպտ. 1953) կանվանե «Լուսատու փարոս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, և Անոր Գահին՝ համազգային նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ինչպես բազմիցս ըսած ենք, ամբողջ հայությունը պետք է կապվի ազգային-հոգևոր կապով։ Լուսավորիչի Գահը և անոր արժանաժառանգ Գահակալը անհրաժեշտ է, որ ամբողջ հայության սիրուն, հարգանքին և հոգածության առարկաները հանդիսանան։ Ս. Էջմիածինը բովանդակ հայության եկեղեցական-ազգային կյանքի դարավոր կեդրոնը եղած է և այդպիսին կմնա։ Մենք կապված ենք անոր իբրև մեր հավերժության աղբյուրին։ Մեր այդ վերաբերումը անկախ է և դուրս կմնա քաղաքական ու իրավակարգային ամեն տեսակ նկատումներե և պայմաններեն։ Հայաստանյայց Եկեղեցվո տեսակետը այս մասին եղած է միշտ ավետարանական և առաքելական և այդպես ալ պետք է որ շարունակվի, այսինքն՝ «տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։

Ս. Էջմիածնի նյութական ամբողջ հոգը ուսումնվեցամյա Հայրապետի ուսերուն վրա ծանրացած է։ Խորհրդային Միության թեմերու մոմավաճառությունեն դոյացած հասույթներով կապրին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողներն ու ուսուցչական կազմը։ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սոսկ ռուսահայոց համար չէ, այլ՝ համայն հայության։ Հայաստանյայց Եկեղեցվո բոլոր թեմերուն և անոնց առաջնորդներուն ավագ պարտականությունը պետք է որ ըլլա իրենց նյութական աջակցությունը բերել Մայր Աթոռին։ «Լուսավորիչի լոմաբյի կանոնավոր տուրքի դրությունը անհրաժեշտ է, որ դարձյալ վերարծարծվի և վերահաստատվի բոլոր թեմերուն մեջ։ Հայաստանի կառավարությունը դրամական մասնավոր դյուրություն տված է Ամենայն Հայոց Հայրապետին համար։ Նորին Սրբությունը Իր անունով կրնա Երևանի դրամատան մեջ որևէ գումար ի պահ ունենալ, որևէ նպատակի համար գործածվելու, առանց գումարի արժեզրկման։ Անկե դատ Վեհափառ Հայրապետը իրավունք ունի արտասահմանեն Իր բերել տված որևէ ապրանքին համար մաքս չվճարել։ Օգտվելով

Իրեն տրված այս առանձնաշնորհումներեն հարկական իշխանության կողմե, պետք է, որ արտասահմանի հայեր նյութական օժանդակության մեջ պարտազանց չգտնվին հանդեպ Մայր Աթոռին և անոր Սրբազնագույն Գահակալին։

Նորին Ս. Օծությունը Իր գահակալության օրեն իսկ չերմորեն ցանկացած է, որ Մայր Հայրենիքի և արտասահմանի հավատացյալներու ներկայության, մյուռոնօրհնության վեհաշուք արարողությունը կատարե և միանգամայն գումարե ազգային-եկեղեցական ժողով Մայր Աթոռի մեջ, մասնակցությամբ նվիրապետական Աթոռներու և թեմերու պատգամավորներուն։ Իր այս իղձերը, որոնք իղձերն են նույնպես համայն Հայության, տակավին չեն իրականացած։ Բայց Վեհափառ Հայրապետը կհավատա, որ անոնք ոչ հեռավոր ապագայի մը մեջ կիրականանան՝ աշխարհի ընդհանուր քաղաքական կացության բարեբաստիկ մեղմացումով։ Հայաստանի կառավարությունը ոչ միայն որևէ արգելք չունի պատգամավորներու և ուխտավորներու այդ առթիվ Մայր Հայրենիք այցելության դեմ, այլև պատրաստ է ընծայել ամեն կարգի դյուրություն։

Ամենեն էական հարցերը, որոնցմով մտադրվված է Նորին Սրբությունը, Ս. Էջմիածնի Տաճարին վերանորոգությունը և Հայրապետական Աթոռի իրավանց ապահով շարունակությունն են։ Տաճարի վերանորոգության համար մեծանուն բարերարին խոստումի իրագործման դժվարությունները հարթված են արդեն, որով ի մտոտ այդ խնդիրը իր վերջնական լուծումը կգտնե։ Վեհափառ Հայրապետը նկատի ունենալով Իր հառաջացյալ տարիքը, իբրև խոհեմ և հեռատես առաջնորդ, Մայր Աթոռի իրավունքներու և առանձնաշնորհմանց անայլայլ պահպանության համար Իրմե ետը անհրաժեշտ ապահովիչ կարգադրությունները ձեռք բերած է։

Նորին Վեհափառությունը Իր հոգատար ուշադրությունեն բնա՛վ չէ հեռացուցած Հայաստան ներդաղթող մեր հազարավոր հայրենակիցները, որոնք ներկայիս, ինչպես անձամբ հաստատեցինք, առհասարակ լավ պայմաններու մեջ են և եռանդով նվիրված են հայրենաշեն աշխատանքի։ Որպես Հովվապետ բովանդակ հայության՝ Նորին Ս. Օծությունը հուսալից աչքերով կնայի մոտավոր և հեռավոր արտասահմանի Իր ցիրուցանված հոտին ավելի սերտ և հոծ ապագա համախմբումին հայրենի հողին վրա՝ Ս. Էջմիածնի և Արարատի հովանիին ներքև։

Ամանորի և Ս. Մնդրյան տոնին առթիվ մեր սրտագին աղոթքին հետ համայն հայության մաղթանքը կմատուցանենք.

— Երկա՜ր կյանք Հայոց Սրբազնագույն Հայրապետին և անսասան պահպանում մեր Մայր Հայրենիքի և հանուր հայության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, հունվար, 1954)



ՔԱՐՈԶ

ԴԻՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ՄԱՂԹԱՆՔ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ*

Սիրելի՛ ունկնդիրներ.

Կիլիկիո Կաթողիկոսության Սրբազան Տեղապահը մեզ պաշտոն հանձնեց այսօր ձեզի խոսելու սույն ողիոկայանին՝ շնորհավորելու ձեր նոր տարին և Ս. Ծննդյան տոնը, մաղթելով բոլորիդ երջանիկ և բարեբաստիկ օրեր երկնավոր Հոր շնորհովը լեցուն։

Այս առթիվ նաև պիտի ուզեինք հաղորդել ամենուդ Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին՝ Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին մաղթանքն ու օրհնությունը։ Այս ամառ բարեբախտությունը ունեցանք Նորին Ս. Օծության հրավերով այցելել Ս. Էջմիածին՝ մեր սուրբ հավատքին դարավոր վառարանը, և այդ առթիվ Հոգևոր Ճեմարանին մեջ որոշ դասընթացք մը ընելու Հայաստանյայց Եկեղեցվո աստվածաբանության մասին։ Երբ կպատրաստվեինք վերադառնալ Անթիլիաս, Նորին Վեհափառությունը մեզ թելադրեց, որ ամենուրեք, հայ ժողովուրդի բոլոր զավակներուն հաղորդենք իր հայրական և հայրապետական օրհնությունները։

Նորին Սրբությունը սրտեռանդն կմաղթե ամբողջ հայության՝ Աստուծո օրհնությունը, կաղոթե, որ ամենակալն Աստված հայ ժողովուրդը պահե անսասան, անոր մեջ զարգացնելով ճշմարիտ սիրո, եղբայրության, նկեղեցասիրության և հայրենասիրության զգացումներն ու դիտակցությունը, որպեսզի ան իր նախնյաց թողած բարի անունը, բարեպաշտությունը և հավատարմությունը անկեղծ և հաստատուն պահե։

Նորին Սրբությունը կմաղթե, որ ամեն հայ, ուր որ գտնվի, միշտ հավատարիմ ըլլա Հայաստանյայց Ս. Եկեղեցվուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր ազգային սրբությանց և ավանդությանց ու հայության հոգիին։

Վեհափառ Հայրապետը կմաղթե, որ բարձրյալն Աստված միշտ անսասան պահե մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքությունները, ինչպես նաև մեր բոլոր առաջնորդական աթոռները և զորացնե զանոնք իրենց աստվածային առաքելության մեջ։ Վեհափառը կմաղթե նաև, որ հայ ժողովուրդը, ո՛ր երկրին մեջ ալ ապրի, միշտ հավատարիմ մնա այդ երկրի պետության, և հոն իր կազմած համայնքին բոլոր անդամները անկեղծ և հավատարիմ քաղաքացիներ ըլլան այդ երկրին ու պետության։

Նորին Վեհափառությունը կաղոթե աշխարհի ճշմարիտ խաղաղության և մարդոց ու ժողովուրդներու միջև իրական հաճության համար, որով պայմանավորված է անոնց երջանկությունը։ Նորին Ս. Օծությունը ջերմագին կաղոթե նաև, որ Քրիստոսի Ծնունդը մեզ բոլորիս համար ըլլա ներքին ու հոգևոր

* Խոսված Բեյրութի ողիոկայանեն, 3 հունվար 1954, կիրակի։

վերածնունդ մը։ Հոգեկան վերահորդում մը, որպեսզի մարդացյալ Աստվածը ճշմարտապես գահակալե մեր հոգիներուն մեջ, որով և հայության հոգիին մեջ։

Նորին Վեհափառության օրհնության ու մաղթանքին հանգեպ, մենք վստահորեն սրտակցաբար համայն հայության կուգանք մատուցանել մեր սրտագին աղոթքը. Ո՛վ մեր հայրերուն Աստվածը, երկար կյանք շնորհե ազգիս Սրբազնագույն Հայրապետին, կյանք՝ որպեսզի իրմով մենք ևս ապրինք, կյանք՝ որպեսզի իրմով Հայաստանյայց Ս. Եկեղեցին գոյատևե։

Մաղթանք մըն ալ մեր Աթոռին կողմե. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը իր վտարանդի դժբախտ օրերուն, այնքա՜ն սրտագին հյուրընկալված այս գեղեցիկ և ապաքնչական երկրին մեջ, կաղոթե անոր բարգավաճման և այժմ իրեն հայրենակից ժողովուրդին բարօրության ու երջանկության համար։ Այս առթիվ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը կուզե հայտնել նաև իր սիրելի հոտին, որ իր սրբազան ուխտն է հոգևին կատարել իր պարտավորությունները հանդեպ հայ ժողովուրդին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և հայ մշակույթին։

Քառորդ գարե ի վեր Կիլիկյան Աթոռը Անթիլիաս հաստատված իր հոգևոր, կրթական և մշակութային գործունեությամբ մեծապես օգտակար հանդիսացավ ո՛չ միայն մեր թեմի հոտին, այլ նաև արտասահմանյան թեմերուն։ 1954-ի այս ամանորի սեմին կսիրենք գիտակցիլ, թե ցարդ կատարվածը լոկ սկզբնավորություն մը պետք է նկատել ավելի ընդարձակ և ավելի բեղուն գործունեության։

Ամանորի առթիվ վերջին մաղթանք մըն ալ, սիրելի՛ ժողովուրդ, պիտի ուզեի ընել ձեր կողմե՝ ձեզի համար, ամենուս համար. Աստված արժանի Գահակալով մը օժտե Կիլիկիո թափուր Աթոռը, Եղիայի մաշկյակը Եղիսեի վրա հանգչեցնե։ Մեր օրերուն, պարագաներու բերումով, Կիլիկիո Կաթողիկոսությունը կոչված է մեծ դեր կատարել հայ ժողովուրդի եկեղեցական և ազգային կյանքին մեջ։ Ահա թե ինչու ո՛չ միայն մեր թեմի հայությունը, այլ համայն ազգը, ի սփյուռս աշխարհի և Մայր Հայրենիքի մեջ սրտեռանդն կբաղձա ու կաղոթե, որ Կիլիկիո Գահին վրա բազմի վեհաշնորհ եկեղեցական մը՝ միր մշակ, հավատարիմ Հայաստանյայց Եկեղեցվո ավանդությանց և սրբությանց և միասնականության, սրտեռանդն ջանադիր Հայաստանյայց Եկեղեցվո և ազգի մշակույթին և արժանավոր հաջորդ երջանկահիշատակ Գարեգին Հայրապետին։

Մեծի Տանն Կիլիկիո նոր Աթոռակալի ընտրության սա հառաջիկա տարվույն համար, մենք կհավատանք մեր ժողովուրդի ուղիղ դատողության, և դժվարին վայրկյաններուն մեջ հատվածական նկատումներ մեկդի դնելով, բոլորս կաշխատինք անոր միասնական գործունեության՝ հոգատ ազգին ու եկեղեցվույն գերագույն շահերուն ու բարիքին։

Հակառակ մեր ծանրաթախիծ սուգին, որ այնքան ուժգնորեն հարվածեց այս Աթոռը, մենք հավատարիմ կմնանք նվիրապետական այս Գահին վրա այնքան արժանիորեն բազմած Հայրապետներուն հոգիին ու իդեալին։ Ու կշարունակենք իրենց գործը սրտագին նվիրումով, իրենց միշտ կենդանի մտածումով առաջնորդված։ Իրենց հիշատակը կբերե մեզի օրինակը, օրինակը անխոնջ աշխատության, օրինակը սրբազան կյանքի։ Այսպես, երբ ամանորը կբացվի, թեպետ թափուր կգտնենք Գահը, բայց իրենց կյանքն ու գործը կլուսավորեն մեր ճամբան, իբրև ուխտակից հետևորդներ քալելու սրբությամբ, հույսով ու հավատքով։

Ամանորի և Ծննդյան առթիվ մեր հոգևոր մաղթանքն է, որ մեր թեմերուն բոլոր զավակները ընթանան և գործեն ճշմարիտ օրինակովը մեր փառապանծ նախնիներուն և այս Աթոռի հայրապետներուն, ի փառս Մայրենի Ս. Եկեղեցվո։

Ամանորի առթիվ, երբ սովորություն է ապագա գործունեության համար որոշումներ տալ, պիտի ուզեինք, որ բոլորս ուխտենք ճշմարիտ սիրով սիրել մեր Մայրենի Ս. Եկեղեցին, մեր Մայր Աթոռն ու Հայրենիքը, մեր սրբություններն ու ավանդությունները, մեր ստեղծագործությունները։ Ուխտե՛նք հավատարիմ մնալ մեր լույս հավատքին, մեր նախնիքներու վեհական հոգիին. այդ ուխտով և անոր գործադրությամբ է, որ պիտի արժևորի մեր կյանքը։

Աղոթե՛նք, որ Աստուծո հաճությունը և օրհնությունը ըլլա գորավիգ մեր բարի կամեցողության և խորհուրդներուն։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ

Հունվարի 13-ին, Տիրոջ անվանակոչության օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Ներկա էր հավատացյալների մեծ բազմություն։ Սուրբ պատարագը մատուցեց Մայր Աթոռի միաբան բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը։

❖❖❖

Հունվարի 14-ին, Ս. Հովհաննու Կարապետի ծննդյան տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը։

❖❖❖

Հունվարի 28-ից մինչև փետրվարի 11-ը Հոգևոր Ճեմարանում անց կացվեցին սաների ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ցուցաբերած ուսումնական առաջադիմության ստուգողական աշխատանքները։ Ստուգման արդյունքները դոհացուցիչ են։

❖❖❖

Փետրվարի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց խաղաղության կողմնակիցների ֆինլանդական պատգամավորությունը, որի կազմում կային հասարակական գործիչներ, գրողներ, արվեստագետներ և հոգևորականության ներկայացուցիչներ։ Պատգամավորությունը գլխավորում էր Հովիվ Արմաս Տոյսանը։

Հյուրերին վանքի բակում ջերմորեն ընդունեցին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը և մի քանի այլ միաբաններ։ Հյուրերը առաջնորդվեցին Մայր Տաճար, որի կառուցվածքի, ճարտարապետության և մանրանկարչության մասին մանրակրկիտ բացատրություններ տվեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Հյուրերը մանրամասն բացատրություններ լսեցին նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում։

Ապա հյուրերը այցելեցին Վեհարան, ուր նրանց ցույց տրվեցին այնտեղ պահվող մի շարք դեղարվեստական իրեր։ Հյուրերը, դիտելով 17-րդ դարի հայ նկարիչ-բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի մանրանկարչական նուրբ արվեստը, որով նկարազարդված է Վեհարանի Մաղկյա դահլիճի առաստաղը, հայտնեցին իրենց հիացմունքը։

Վերջում հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին Ս. Էջմիածնի միաբանությանը՝ ցույց տրված սիրալիր ընդունելության համար։

❖❖❖

Փետրվարի 14-ին, կիրակի օրը, Տյառնընդառաջի տոնակատարության առթիվ, Մայր Տաճարում Ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Տաճարը լիքն էր ուխտավորների բազմությամբ։ Օրվա պատարագիչն էր բարեկրոն Տ. Նահապետ աբեղա Մուրադյանը։

❖❖❖

Փետրվարի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Եղբայրական Վրացական ռեսպուբլիկայի մայրաքաղաք Թբիլիսիի Պետական համալսարանի մի շարք դասախոսներ և ուսանողներ։ Այցելուները մեծ հետաքրքրությամբ դիտեցին Մայր Տաճարը իր հնադարյան եկեղեցական իրերով ու սպասներով հանդերձ, եղան եկեղեցա-հնագիտական թանգարանում։ Հյուրերին բացատրություններ էր տալիս Մայր Տաճարի ավագ լուսարար բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը։

❖❖❖

Փետրվարի 20-ին, շաբաթ օրը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը սարկավագ ձեռնադրեց Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքի ընթացավարտ սան, Ս. Հովհաննես եկեղեցու դպրապետ Սարգիս Անդրեասյանին։ Հաջորդ օրը սրբազան հայրը սարկավագ Սարգիս Անդրեասյանին և նրա հետ Սարկավագ Հովհաննես Կարապետյանին (Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի ընթացավարտ) ձեռնադրեց քահանա պահելով նրանց անունները։

Ձեռնադրության ժամանակ խարտավիլակություն էր անում Մայր Աթոռի միաբան բարեկրոն Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Ներկա էր հավատացյալների հոծ բազմությունն։ Օծումից հետո սրբազանը հակիրճ քարոզ խոսեց հետևյալ բնաբանով. «Քահանայք Ո զգեցցին զարդարութիւն և սուրբք Ո ցնծալով ցնծացեն»։ Նա բնորոշեց այն սուրբ և վեհ պարտականությունները, որ դրվում են քահանայի վրա։ Սրբազանը խրատեց նորընծա քահանաներին՝ հավատարիմ լինել իրենց ուխտին։

Իրենց քառասունքը անց կացնելուց հետո, նորընծա քահանաները կնշանակվեն իրենց պաշտոններին՝ համապատասխան եկեղեցիներում։

❖❖❖

Փետրվարի 21-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Սուրբ պատարագը, հարազատների ցանկությամբ, նվիրված էր 1953 թվականի փետրվարի 19-ին վախճանված հոգեյուրս Տ. Վարդան քահանա Վարդերեսյանի տարելիցի հիշատակին։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը, որը դրվատեց հանգուցյալ քահանայի հոգեկան բարեմասնությունները, բնորոշելով նրան որպես հայ քահանայության տիպարի։ Վերջում կատարվեց հոգեհանդիսատ միաբանության մասնակցությամբ, իսկ հավարտ ժամակարգության տեղի ունեցավ գերեզմանօրհնեք հանգուցյալի դամբանի վրա, որը գտնվում է Ս. Գայանեի վանքի բակում։

❖❖❖

Փետրվարի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ շուքով տոնվեց «Սրբոց Վարդանանց զօրավարաց հազար երեսուն և վեց վկայից» տոնը։ Մայր Տաճարը լիքն էր հավատացյալների խուռն բազմությամբ։ Ավագ սեղանի վրա մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր բարեկրոն Տ. Կոստանդին արեղա Թառվանյանը։ «Հայր մերոյ ասաց Մայր Աթոռի ավագագույն միաբաններից գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը հավուր պատշաճի քարոզեց։ Սրբազան հայրը հակիրճ, բայց պատկերավոր ոճով բնորոշեց Վարդանանց խոշոր դերը հայոց պատմության մեջ։ «Վարդանանք, —ասաց նա,— նահատակվեցին Հայրենիքի և Ս. Եկեղեցու նվիրական դաղափարների պաշտպանության համար։ Դարերով հայ ժողովուրդը չի մոռացել և չի մոռանա իր ազատության, իր անկախության համար մարտնչողներին։ Հայոց Եկեղեցին նրանց սրբերի կարգն է դասել մատուցելով ամեն տարի սուրբ պատարագ նրանց հիշատակին։ Սուրբ պատարագից հետո, ամբողջ միաբանության մասնակցությամբ, կատարվեցին հոգեհանդստյան սրբազան արարողություններ՝ Ս. Վարդանանց հազար երեսունվեց վկաների հիշատակությամբ։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՕՆՄԱՆ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Եարվարի 25-ի վաղ առավոտյան, Միածնաէջ Մայր Տաճարում, աղոթքով ու պատարագով նշելուց հետո Վարդանանց պատերազմի 1.036 նահատակների անմահ հիշատակը, երեկոյան ժամը 8-ին Էջմիածնի միաբանության եպիսկոպոս, վարդապետ, քահանա և սարկավագ անդամները, Հոգևոր Ճեմարանի սաները, ուսուցչական կազմն ու աշխարհական հանդիսականների մի կոկիկ բազմություն՝ հավաքվել էին Հոգևոր Ճեմարանի դահլիճը, Հայրենիքի ու հայ ժողովրդի ազատության համար, 1.500 տարի առաջ, Ավարայրի դաշտում զոհաբերված Վարդանանց հերոսների սրբազան գործը մի անգամ ևս պանծացնելու դրական-գեղարվեստական հանդեսով, որը կազմակերպվել էր Հոգևոր Ճեմարանի վերատեսչության կողմից։

Նախագահության սեղանի շուրջը զգայի էր բացակայությունը մեծ Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսի, որ հիվանդության պատճառով չի կարողացել մասնակցել և հաստատ անշուշտ հետևում է գիշերվա այս պահին հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պաշտպանության ի խնդիր մարտիրոսացած հերոսների ի հարգանս կատարվող այս հանդեսին։

Ներկա գտնվող հյուրերի մեջ է ժամանակակից հայ գրականության մեծանուն ներկայացուցիչը՝ Ավետիք Իսահակյանը— Վարպետ հայ բանաստեղծության։ Նրա հետ միասին, նախագահության սեղանի առաջ տեղ էին գրավել նաև գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ տիար Մինաս Մինասյանը։

Ճեմարանի երգիչ խմբի կողմից խանդավառորեն և հոտնկայս երգված Սովետական Հայաստանի Հիմնից հետո, վերատեսուչ տիար Մինասյանը իր բացման խոսքում ցայտեցրեց բնազդական կոիվների և գիտակցական գոյամարտերի տարբերությունը, թվեց Թել Հսկայի բռնակալության դեմ Հայկ Նահապետի, Շամիրամի դեմ՝ Արա Գեղեցիկի, հռոմեացիների դեմ՝ Տիգրան Մեծի, ավելի ուշ պարսկական, բյուզանդական, արաբական, սելջուկյան ու տաճկական բռնակալ տիրապետությունների դեմ ամբողջ հայ ժողովրդի մղած ազատամարտերը, նշեց անունները հերոսական հայաքաղաքների՝ Զեյթունի, Սասունի, Վանի, Եդեսիայի, Մուսա-լեռան (Ջեբել-Մուսա) և Հաջընի, որտեղերի բնիկ հայերը, գեռևս մոտիկ անցյալում, անօրինակ քաջությամբ են կռվել անհամեմատորեն գերազանց թվով ջարդարարների դեմ և հաճախ հաղթել նրանց, ընդգծեց Հայրենական Մեծ պատերազմի ընթացքին կարմիրբանակային հայ զորքերի և զորավարների սխրագործությունները հիտլերյան հորդաների դեմ և ի վերջո հարգանք ընծայեց հայ ժողովրդի և Հայաստանի այսօրվա

փայլուն իրականությունը— այն է՝ հզոր Սովետական Միության 16 ռեսպուբլիկաների միջև հավասարազոր ռեսպուբլիկա լինելու փաստը— ապահովելու համար, ազատության արյունոտ Ճանապարհի վրա դիտակցաբար զոհաբերված հայտնի թե անհայտ հերոս նահատակների հիշատակին։

Ներսես Շնորհալի հայրապետի Վարդանանց հիշատակին ձոնած «Նորահրաշ պսակատրա» սքանչելի շարականից հետո, խոսք առավ Ճեմարանի դասախոսներից Արթուն Հատիտյանը։

Դասախոս Հատիտյանի ծափահարված բանախոսությունից բացի, գեղեցիկ շարադրություններ կարդացին Սարդիս սարկավագ Սարգսյանն ու Ռուբեն սարկավագ Մարտիրոսյանը։ Սարգիս սարկավագը, «Ժողովրդի դերը Վարդանանց պատերազմին» թեմայով իր ուսումնասիրության մեջ նշելով այն հանգամանքը, թե այդ հերոսամարտը մի համաժողովրդական բողոք էր անազատության դեմ, մի տարերային ապստամբություն՝ բռնակալության դեմ, ցայտեցրել էր այն կարևոր դերը, որը կատարել էր հայ ժողովուրդը, սկսյալ փափկասուն տիկիններից մինչև հասարակ շինականն ու հոգևորականը, ճգնաժամային այդ տարիներին ի հայտ բերելով նկարագրի մեծությունը։ Իսկ Ռուբեն սարկավագը, «Վարդանը և Վարդանանք հայ պոեզիայում» ուսումնասիրությամբ հետաքրքիր աշխատանք էր կատարել, ցույց տալով, թե Վարդանանց թեմատիկան ի՞նչ տիպականացում, ի՞նչ գույն ու երանգ է ստացել տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր հեղինակների կողմից, սկսյալ 5-րդ դարի ոսկեծղի եղիշեից, 12-րդ դարի Ներսես Շնորհալի կաթողիկոսից, մինչև 19-րդ դարի Ղևոնդ Ալիշանը, Ռափայել Պատկանյանը, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանը, Պետրոս Դուրյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Ցեյնկյանը և մինչև ժամանակակից Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Թեքեյանը, Դերենիկ Դեմիրճյանն ու Նարի Զարյանը, որի հետևյալ տողերը մնում են անջնջելի պատգամ՝ գալիք հայ սերունդների համար.

«Արյան մառախուղից
ելնում է Վարդանի պատկերը սեգ
եվ աչք մեզ մեկնած՝ կրկին գոչում է.
—Հայ քաջե՛ր, հառա՞ջ...»։

Հոգևոր Ճեմարանի սան Հ. Դանիելյանը զգացմունքով կարդաց Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից մի հատված։ Ընթերցման դաշնամուրով ընկերակցում էր հանդեսի երաժշտական բաժնի դեկավար կոմպոզիտոր Հրանտ Գեորգյանը։ Եղիշեի «Տիկնայք փափկասուն Հայոց աշխարհին» հատվածը կարդաց ուսանող Ա. Սանթուրյանը, իսկ Բաֆֆու «Դավիթ-Բեկ» վեպից մի հատված կարդաց ուսանող Հ. Կարաոզլանյանը։ Արևմտահայ բանաստեղծ Վ. Թեքեյանի «Նորհուրդ Վարդանանցի» արտահայտիչ ընթերցումը կատարեցին Հ. Դանիելյանը և ուսանող ընկերները։ Իսկ ինքնագիր բանաստեղծություններ կարդացին Փայլակ սարկավագ Այնթաբյանը («Իմ ժողովրդի ներոսամարտը») և Վաչագան Հովհաննիսյանը («Վարդանանց հիշատակին»)։ Երկարատև ծափահարության արժանացավ բանաստեղծ Նարի Զարյանի «Զայն հայրենական» քերթվածը, արտասանված ուսանող Իշխան Մելքոնյանի կողմից։ Հանդիսականները հաճույքով ունկնդրեցին նաև բացի «Բամ, փոռոտան» և «Գոլգոթի ճնար» խմբերգներից, Ժ. Սեքզենյանի երգած «Իմ Հայրենյաց նոգի Վարդան», «Ռեց. ամպերը...» և «Ուռենին» (Ավետիք Իսահակյանի) մենակատարները, ինչպես նաև Հակոբ քահանա Հակոբյանի երգած «Սիփանա քաջեր»ը և Հոգևոր Ճեմարանի սան Արտաշես Բալաքանյանի դաշնամուրի վրա նվագած ինքնաստեղծ «Քայլերգ»ը։

Այսքան ճոխ հայտագրի կանոնավոր ու անթերի կատարման համար շնորհավորելի են և՝ Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, և՝ հանդեսին մասնակցողները, և՝ գեղարվեստական բաժնի դեկավար Իգնատիոս սարկավագ Մարտիրյանը։

***

Հավարտ հանդեսի, Ճեմարանի վերնահարկի դահլիճում, վերատեսչության կողմից պատրաստված թեյասեղանի շուրջ, կրկին առիթ ստեղծվեց վայելելու ընկերակցությունը հայ բանաստեղծության Վարպետի։ Ներկաների անունից վերատեսուչ տիար Մինասյանի խնդրանքով թեյասեղանի նախագահությունը վարեց Վարպետը։ Նա նշե-

յուց հետո, թե Վարդանանց հիշատակը սիրելի է եղե՝ յուրաքանչյուր հայի համար ամեն տեղ և ամեն ժամանակ, արնշատություն մաղթեց ազգընտիր Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսին։ Ապա Վարպետը խոսքը տվեց վերատեսուչ տիար Մինասյանին, որ ներկաներին հավաստիացրեց, թե Վեհափառ Հայրապետը, թեև մարմնով բացակա, բայց հոգով ու սրտով ներկա էր այս հանդիսության ու կարդաց Վարդանանց և Ղևոնդյանց 1500-ամյակի առթիվ (1950 թ.) գրված կոնդակից երկու հատված, ներկաների հիշողության մեջ վերազարթեցնելու համար այն, թե Հայրենասեր Հայրապետը ինչպե՞ս է բնորոշում Ավարայրը։

Ահա՛ այդ հատվածները.

«Ավարայրը հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհազույն ու պանծալի բարձունքն է հանդիսանում, հերոսական արտահայտությունը Հայ Ազգի բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնուրաց հերոսության, հոգևոր մշակույթի, նվիրվածության և մարտական կորովի»։

«Ավարայրի հերոսամարտը հոգեզմայլանհասանելի բարձունքն էր ազատագրական մաքառման.— ահա թե ինչո՞ւ նա եղել է, կա և կմնա առհավետ ազգապանծ էջը Հայոց պատմության. հոգեզմայլ մի էջ, որ դարեր անընդհատ ոգեշնչել և մխիթարել է հայազգ սերունդներին և ազգային-բաղաքական առաքինության ուղիներն է պատգամել Հայրենիքին, Ազգին և Եկեղեցուն»։

Կարճ ուղերձներ արին նաև Ֆ. Բոլչանյանը, Հ. Արամյանը, Սահակ սրբազանը, Գեորգ վարդապետը և ուրիշներ, առողջություն և երկար կյանք մաղթելով Վեհափառ Հայրապետին։

ԹՂԹԱԿԻՑ

ՎԱՀԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՅՆԹԱՐՅԱՆ

ԵՂԻՇԵԻ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

(Շարադրություն՝ կարդացված Սրբոց Վարդանանց հիշատակին Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի կազմակերպած հանդեսում)

Վեպի քան հապար հինգ հարյուր տարիների գլանք ունեցող, հայ ժողովրդի համար անսահմանորեն սիրելի այս ստեղծագործությունը հոյակապ է իր գաղափարական և գեղարվեստական արժանիքներով։ Մեր խոնարհ նախնիքներից նա մեզ ավանդ է տրվել տրպես պաշտելի նշխարք, որն ամենայն հարազատությամբ բյուրեղացրել է հայ ժողովրդի հայրենասիրական, ազատասիրական և եկեղեցասիրական աննկուն ոգին։ Նվիրական այս գլուխգործոցը հայ երախտագետ ժողովրդի համար հանդիսացել և այժմ էլ հանդիսանում է այն ակնաղբյուրը, որտեղից միշտ էլ ներշնչվել է նա Հայրենիքի և ազատության համար մղած իր հերոսական պայքարներում։ Վարդանանց հերոսամարտը մեր պատմության փառապսակն է, իսկ նրա գեղարվեստական հոյակապ վերարտադրությունը՝ Եղիշեի դյուցազներգությունը՝ մեր հին մատենագրության ոսկետառ էջը։ Եվ այս փաստը միանգամայն պայմանավորված է նրա գաղափարական ու գեղարվեստական բարձր արժանիքներով։

Բանասիրության մեջ երկար վիճարկվել է այն հարցը, թե արդյոք Եղիշեն առաջին հերթին պատմի՞չ է, թե բանաստեղծ, այս բառերի իսկական առումով։ Այս վեճն ինքնին վկայում է Եղիշեի ստեղծագործության բարձր արվեստի մասին։ Հեղինակավոր մի շարք հայագետներ ճշմարտացի դիտել են, որ Եղիշեի պատմությունը «դյուցազներգություն» է, գեղարվեստական ընդհանրացումներով. բանաստեղծական ջերմ շնչով ու եռանդով լցված մի հիանալի «քերթված»։ Իր գեղարվեստական բարձր արժանիքներով նա առանձնացած փայլուն երևույթ է մեր պատմագրության մեջ։

Եղիշեն ունի չափազանց կիրթ ճաշակ, որը ձուլվելով մշակված մտածելակերպի և անկեղծ ու վարակիչ հուզականության հետ, այդ ստեղծագործությանը ավել է առանձին հմայք ու արժեք։

Եղիշեի հիանալի աֆորիզմները, դարձվածքները սրբագործվելով դարերի ընթացքում հնչում են բյուրեղացած պատգամների պես։

Եղիշեն իր ապրումներն ու գաղափարները չի թվում սոսկ որպես փաստական արձանագրություն։ Իր մեծ տաղանդի ամբողջ տարողությամբ տալով Վարդանանց հերոսամարտի նկարագրությունը՝ հայ ժողովրդի անձնուրաց հերոսությունը, մարտական փորձը, հայրենասիրությունը, նա վարպետորեն կարողանում է նույն զգացմունքները ներարկել ընթերցողի հոգու մեջ։ Նա դեպքերը նկարագրելիս հուզվում է, թախծում, զայրանում է, ատում, ոգևորվում է, հիանում, գովում ու դատապարտում է այնպիսի անկեղծությամբ և դյուրազգաց ոգով, որ հապար հինգ հարյուր տարիների ընթերցողներից ե՞չ մեկը անհաղորդ չի մնացել հեղինակի ապրումներին։

5-րդ դարի ազատագրական պայքարի վճռական պահին, երբ հայ ժողովրդի համար արդեն սրոշակի կերպով պարզ էր «լինել թե չլինելու» ողբերգությունը, լուսնեղեն տեսիլքի նման հայտնվում է Եղիշեն, իր հետ բերելով ամենքիս հայտնի հետևյալ նվիրական պատգամը. «Մահ իմացեալ անմահութիւն է»: Վախենալու կամ նահանջելու էլ ի՞նչ առիթ ուներ հայ ժողովուրդը, երբ նա գիտակցված կերպով էր դիմավորում մահը. չէ՞ որ «Ոչ գիտէ զմահն, ո՛չ ելեկեցի ի նմանէ»,— պատգամում է դարձյալ նույն Եղիշեն։

Հայրենիքին սպառնացող վտանգը, հայ ժողովրդի հոգու նվիրական խորան Հայաստանյայց Եկեղեցին ավերելու սպառնալիքները, հայ ժողովուրդը ապդովին ընդունելու հոխորտանքները—ոչնչով չկարողացան սասանել հայ մարդկանց անձուրաց ոգին ու արիությունը։ Իրենց Հայրենիքը, Ազգն ու Եկեղեցին պաշտպանելու անհողդողդ վճռականության առաջ պարսիկներն անգամ ստիպված եղան խոստովանելու, որ հայերն թիչ-որ ամբոխնակ մարդիկ են՝ «Ո՛չ ի կապանաց զանգիտեն և ո՛չ ի սանդեանաց երկրեցին...Զմահ Ման զկեանս ընտրեն։ Ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել»։

Եղիշեն հավաստիացնում է, որ չնայած հայերը դիտակցում էին պարսիկների թվական առավելությունը իրենց համեմատությամբ, սակայն այդ երբե՛ք երկյուղ չէր ներշնչում նրանց սրտերում և պատրաստ էին «ի սպանանել և ի մեռանել»։

Ազատագրական մաքառման այդ հերոսական և բախտորոշ դրվագների բնութագրության ժամանակ Եղիշեն չի զլանում իր ուղղակի միջամտությունը, որպեսզի ավելի ներգործի զայիք սերունդների հոգիների վրա, պատվաստի նրանց անձնուրաց հավատարմությամբ պայքարելու և զոհվելու դատումները, հայրենի հողը, ազգային արժանապատվությունը, Եկեղեցին, կրոնը պահպանելու համար։

Հայ ժողովրդի սխրագործությունների մի հիանալի դրվագ է Ավարայրի ճակատամարտին նախորդած Բաղրևանդի դիմադրությունը։ Եղիշեն մեծ խանդավառությամբ է գրվատում այդ դեպքի իրադարձությունները, որոնք սրտառուչ տպավորություն են թողնում ընթերցողի վրա։

Բանաստեղծ պատմիչը խորունկ ատելությամբ է համակում հետևորդ սերունդներին՝ որպեսզի Հայրենիքի բոլոր դույնի թշնամիների հանդեպ։ Նա ուշադրություն է դարձնում արյան վերջին կաթիլը անհողդողդ պայքար մղել Հայրենիքի թշնամիների հանդեպ։ Եղիշեի բորբոքած այդ ատելությունը բոլոր ժամանակների համար անհրաժեշտ է և ճշմարիտ՝ հաղթել կարենալու համար, ժողովուրդը պետք է դիտենա ատել ամենանահաշտ կերպով իր թշնամի ցարավի բոլոր ոսոխներին։

«Երկիրդ բերահատուրեան է նշանակ. գրեբահատուրիւն մեր ի մէջ վաղ մերձեցար, ընդ նմին և երկիրդն փախիցէ ի մտաց և խորհրդոց մերոց»,— խոսում է Եղիշեն հայոց քաջամարտիկ սպարապետի բերանով։ Իր նվիրական Հայրենիքն ու նրա սրբությունները կյանքի գնով պաշտպանելու համար զենք վերցրած ժողովուրդը չէր կարող թերահավատ լինել իր գործի արդարության, իր հաղթանակի հանդեպ։ Այդ թերահավատության բացարձակ բացակայությունն էր, որ նրանց սրտերը լցրել էր արիությամբ, աննահանջ կորովով, որը միահյուսվելով իր գործի արդարությունը լիապես դիտակցած համոզմունքի հետ, մեր ժողովրդին տարավ դեպի հերոսականություն։ Այդ անսասան հավատով էլ պայմանավորվում է հայ ժողովրդի պատմական և բարոյական հաղթանակը։

Ազգային ինքնագիտակցությունը, առանց նեղմիտ սահմանափակումների, Վարդանանց հերոսամարտի օրերին հատկապես, բարձր է եղել հայ ժողովրդի հասկացողության մեջ։ Նա շատ լավ գիտեր, թե ինքն էլ ապրելու իրավունք ունի, ինքն էլ է սահմանել իր գեղեցկությունները և ինքն էլ պետք է վայելի դրանց բարիքները, ուստի և ինչո՞ւ նահանջել հաղկերտյան սպառնալիքների առաջ, ինչո՞ւ սրբապղծվեն հայի նվիրական տաճարները, ինչո՞ւ թույլ տալ, որ հայ հոգը նվաճվի ասար հարստահարողներից։ Եղիշեն բազմիցս խթանում է հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, որպեսզի նրան ներշնչի իր իրավունքներն ու նվաճումները ոչ ոքի չզիջելու համար հաստատակամությամբ և անվեհեր արիությամբ. «Զայսմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ և զառն հաւատամք»։

Եղիշեն իրավացի կերպով ճակատագրական նշանակություն է տալիս հզոր թշնամու դեմ ազգային միասնական ճակատ կազմակերպելու խնդրին։ Թշնամուն ամենայն պատրաստակամությամբ դիմավորելու համար անհրաժեշտ պայման է համախմբվածությունը մի դրոշի ներքո։ Հայրենիքին սպառնացող վտանգի ճակատագրական ոստաններին հայ ժողովրդի լայն շրջաններում հաճախ է հանդես գալիս անխախտ միասնականություն, կուռ համախմբվածություն։ Այդ միությունը հատկապես նկատելի է Վարդանանց պատերազմի հերոսական օրերին, երբ հայ ժողովուրդը միաձույլ, գրանիտյա ամ-

ությամբ պաշտպանեց իր սրբություններն ու իրավունքները, թեև իր վարար արյունով ներկեց իր իսկ հողը։ Ահա՛, թե ինչո՛ւ Եղիշեն ամենայն իրավասությամբ և անկեղծությամբ ջատագովում է ազգային միասնական ճակատը և համախմբվածությունը։

Եղիշեն վրդովմունքով և ատելությամբ է խոսում բոլոր այն վասակների մասին, որոնք ոտնձգություններ էին անում՝ չլատելու և կազմալուծելու հայ ժողովրդի միասնականությունը հօգուտ օտար նվաճողների։ Եղիշեի այդ անհաշտ ատելությունը թշնամիների հանդեպ այնքան է մերվել հայ ժողովրդի զգացմունքների հետ, որ հազար հինգ հարյուր տարի առաջ նրա դատապարտածները նույն խստությամբ դատապարտվում են այսօր հայ ժողովրդի կողմից, որպես ազգային ոճրագործ դավաճաններ։ Որքա՜ն իրավացի պիտի լիներ բանաստեղծ պատմագիրը, որ նրա ժամանակին դիտած դավաճան անհատը հետագայում պիտի դառնար դավաճան անհատականություն։

Եղիշեի ազգային միասնականության ջատագովությունը, իհարկե, չի սահմանափակվում այդ միասնականությանը քար գցող պատակտիչ դավաճանների դատապարտությամբ, այլ հատկապես ամբողջականանում է այդ միասնականությունը խարսխող առաքինիների փառաբանությամբ։ Մեծապես նախանձախնդիր լինելով համազգային միասնականության, հատկապես այդ առաքինիներն են Եղիշեի ջատագովության կենդանի արտահայտիչները։ Նրանք են, որ անձնուրաց նվիրվածություն են ցուցաբերում Հայրենիքի պաշտպանության վեհ գործին և դրանով իսկ առավել ևս ամրացնում ազգային պաշտպանության ճակատը, լավ գիտակցելով, որ առանց այդ հանգամանքի իրենք արդեն իսկ դատապարտված կլինեն պարտության։

Ավարայրի պատմական հերոսամարտը դրսևորեց մեր ժողովրդի միասնական, անքակտելի կարողությունը, վիթխարի սխրագործությունների ընդունակ անհողդողդ ոգին և արիությունը, հայրենասիրությունը, ազատասիրությունը, եկեղեցասիրությունը, որոնք այնքան վառ գույներով և հուզականությամբ վերարտադրել է պատմիչը։ Մամիկոնյանների դյուցազնական քաջագործությունները նկարագրված են մեծ ոգևորությամբ, կրքոտ խանդավառությամբ, ի հակակշիռ Վասակների ազգուրաց դավաճանությանը։ Այս երկու եղբերի (կամ թշնամությանց) միաժամանակյա նկարագրությունը առիթ է տվել բանաստեղծ մատենագրին՝ առավել թանձր գույներով դրսևորելու իր գաղափարները ու աշխարհայացքը և, ի միջի այլոց, համազգային միասնական ճակատի վիթխարի առավելությունը Հայրենիքի պաշտպանության վեհ գործում։

Եղիշեի մոտ խոշոր առավելություն է հայ անվեհեր կանանց ռազմաբեմի վրա հանդես բերելը։ Նրանց ինքնանվեր պատրաստակամությունը, Հայրենիքի պաշտպանության համար զենք վերցրած իրենց ամուսիններին օգնելու անընկճելի կամքը, հիանալի շարքաշությունը Եղիշեն այնպիսի անկեղծությամբ, այնպիսի հիացմունքով և, վերջապես, այնպիսի կենդանի գույներով է հասցրել մեզ, որ մենք այսօր հիանալ միայն կարող ենք։

Գաղափարական վերլուծման ժամանակ առանձնապես ակնառու է Եղիշեի անսայթաք լավատեսությունը։ Ամբողջ ստեղծագործության մեջ դուք չեք գտնի հուսահատական մի որևէ արտահայտություն, մի որևէ ճիչ։ Թեև ճիշտ է, որ Եղիշեն երբեմն ողբում է, սակայն այդ էլ նրա համար միմիայն, որ դրանով ավելի՜ ևս բորբոքի գալիք սերունդների հայրենասիրությունը, ազատասիրական զգացմունքները, հայրենական սրբությունների անաղարտության հանդեպ ունեցած նախանձախնդրությունը, հոգեկան կորովն ու արիությունը։

«Ոչ յօժարիցեմք զշուառութիւն մերոյ ազգիս ողբալ»,— խոստանում է Եղիշեն իր պատմության հենց սկզբում։ Եվ նա հավատարիմ է իր խոստմանը։ Նա խորունկ թախիծով է նկարագրում հայ ժողովրդի մարտիրոսությունը, տառապանքը, դավաճան տարրերի ազգակործան քաղաքականությունը և նրա հետևանքները, սակայն այդ բոլորի հանդեպ ունի այնպիսի հզոր պատվարներ, ինչպիսին են հայ ժողովրդի հերոս որդիների դյուցազնական ոգին և արիությունը, որտեղից էլ բխում է նրա պատճառաբանված և առողջ լավատեսությունը։

Հակառակ թշնամիների թվական խիստ գերազանցությանը, իր Հայրենիքի պաշտպանության համար զենքի դիմած ժողովրդի առաջ Եղիշեն այսպես է խոստովանեցնում հզոր հակառակորդին. «Մ՝ կարիցէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակմանդ»։ Եվ Եղիշեն չէր սխալվում։ Նա հավատացած էր, որ հայ ժողովուրդը մղում էր ազատագրական արդարացի պատերազմ, պաշտպանում էր Հայրենիքի սրբազան հողը, որովհետև այդ հավատքը ժողովրդինն էր, և իսկապես այդ հավատքով էլ հայ ժողովուրդը բարոյապես հաղթեց Ավարայրում։ Եղիշեի լավատեսությունը ճշմարտացի է, և այդ իսկ պատճառով դարեր շարունակ ուժ ու վստահություն է ներշնչել հայ ժողովրդին։

Եղիշեն մեծ վարպետությամբ գեղարվեստականորեն մշակել և շաղկապել է դեպքերն ու դեմքերը։ Դեպքերի հաջորդական զարգացումը տեղի է ունենում դեմքերի ան-

հրաժեշտ միջամտությամբ։ Հաճախ այդ զարգացումը առաջ է գնում դրամատիկ ձևով, երբ դեմքերը իրենք են խոսում ու գործում առանց հեղինակի անմիջական միջամտության, մի բան, որը պատմագրությունից ավելի վիպասանություն է։ Դեպքերի և դեմքերի այսօրինակ զուգորդությունը միանգամայն գեղարվեստագետ պատմիչի տաղանդի ծնունդ է։

Եղիշեի մոտ, այլ կերպ ասած, կերպարները կամ հերոսները ընտրագրված են առանց արտաքինի նկարագրության։ Եղիշեն վարպետ է նրանց հոգեկան աշխարհի համայքը կամ այլասերվածությունը դրսևորելու մեջ։ Նա հատկապես պրպտում է ու վերլուծում բացասական կերպարների ներաշխարհը և վերջիններիս գատապարտում անխնա ցասումով։ Ընթերցողը անմիջապես զգնկատի նրանց նենգությունը, ստորությունը, դաժանությունը, հայրենադավ և ազգուրաց ոգին, նրանց մարդատյաց բնավորությունը։

Եղիշեն ընթերցողների հոգիների մեջ արդահատանք և ատելություն է առաջացնում այդ վատերի հանդեպ, իսկ մյուս կողմից սեր և պատկառանք է ներշնչում դրականների կամ լավերի հանդեպ։ Հայրենիքի պաշտպանության, հայ ժողովրդի ազատության, Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու շինության և անսասանության համար իրենց կյանքը նվիրաբերած քաջամարտիկ հերոսները անջնջելի տպավորություն են թողնում։ Նրանց ուղղակի բնութագրության մեջ Եղիշեն քիչ ժլատ է թեև, սակայն նրանց վեհանձն բնավորությունը, արիությունը, անաղարտ հոգին աճեցրել և զարգացրել է գործողությունների մեջ, հերոսամարտի դաշտ բոպեներին։

Եղիշեն իր կերպարների հաջող գեղարվեստական անհատականացման շնորհիվ մեզ թողել է անուններ, որոնցից յուրաքանչյուրը մի իդեոլոգիական ուրույն ամբողջություն է։ Վաղուց է հազկերաը նույնացել բռնակալության հետ, Միհրներսեհը՝ նենգության, Վասակը՝ ազգուրաց դավաճանության, Վարդանը՝ հայրենասիրության, ազատասիրության ու խիզախության, Ղևոնդը՝ հայրենի սրբությունների հանդեպ եղած նախանձախնդրության և նրանց պաշտպանության հետ։

Եղիշեին հաջողվել է կերտել ժամանակի առաջ չնահանջող իր ստեղծագործությունը՝ մասնավորապես իր ճշմարտացիության շնորհիվ։ Այդ ստեղծագործությունը զուրկ է արվեստականությունից, և այդ իսկ պատճառով հեղինակի խոհերն ու զգացմունքները խիստ տպավորիչ են և վարակող։ Չես կարող չատել նրանց, որոնց Եղիշեն ինքն ատում է, չես կարող չսիրել նրանց, որոնց Եղիշեն ինքը սիրում է, չես կարող չթախծել, երբ ինքը Եղիշեն թախծում է, չես կարող չզայրանալ, երբ ինքը Եղիշեն զայրանում է, վերջապես չես կարող չոգևորվել, չհպարտանալ, երբ ինքը Եղիշեն այդ բոլորը ապրում է։ Եղիշեի «Վարդանանց պատմության» գեղարվեստական առավելագույն արժանիքը, մեր համեստ կարծիքով, հենց դրանումն է։

Հայ ժողովուրդը երախտագետ է Եղիշեի հանդեպ և, կարծես Եղիշեի համար հատուկ մի գեղեցիկ բառ է ստեղծել — «ոսկեծղի»։ Մեր ժողովուրդը արժանավայել կերպով գնահատել է Եղիշեի «ոսկեծղի» լեզվի և ոճի չգերազանցված գեղեցկությունը։ Այդ լեզուն հոյակապ է, վայելուչ, հղկված, ճոխ, յի քնարերգությամբ, ունի բյուրեղյա պարզություն և դիպուկություն։ Եղիշեի ոճը նույնպես հոյակապ է, կենդանի, գունագեղ, կշռադատված, զուրկ շինծու խրթնաբանություններից, դյուրասահ և ճկուն։

Եղիշեն լեզվի և ոճի խոշոր վարպետ է։ Նրանից ազդվել և սովորել են հետագա բոլոր հայ մատենագիրները։

«Ավարայրի բլբուլ» հորջորջումը ժողովուրդն է տվել Եղիշեին։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ

1. ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոնդրկովկասյան երկաթուղու Ալեքսանդրապոլ կայարանից, ասֆալտապատ խճուղով դեպի Իջևանի շրջկենտրոնը գնալիս, ուշադիր ուղևորը աջ կողմից, անտառապատ լեռան դեպի դաշտ առաջացած բարձունքի վրա, կնկատի վերասլաց մի շենք. դա պատմական Մակարավանքի Մեծ եկեղեցու գմբեթն է։

Դեպի հուշարձանը տանող ճանապարհը Մուռ կամուրջից[1] (Мурзов мост), գյուղամիջյան ճանապարհով գնում է 3 կիլոմետր հեռու գտնվող, սարի ստորոտում, այգիների մեջ փռված Աչաջուր գյուղը։ Մինչև այգեստան ճանապարհը հարմարեցրած է ավտոմեքենաների հաղորդակցության համար, իսկ ճանապարհի մնացած՝ խիստ թեքությամբ վեր բարձրացող՝ մասը կարելի է դնալ ոտքով, սայլով կամ դրաստով։

Հուշարձանը՝ ավելի ճիշտ՝ այդ անունով կոչվող հուշարձանների խումբը, գտնվում է գյուղից արևմուտք, 2,5—3 կիլոմետր հեռավարությամբ, Նալբանյան (Պայտաթափ) լեռան լանջի բարձրության երկրորդ կեսում, երկու ձորակների մեջ ձգվող, մի կարճ լեզվակի վրա։ Շուրջը մարդու ձեռքով նվաճված դարավոր անտառի վերջին ալիքն է. խիտ աճած մատղաշ ծառերի, թփուտների և մոշի մացառի խճճված պուրակներ։ Մեկընդմեջ, մարդու գոտկատեղին հասնող, ծաղկաշատ խոտով պատած բացատներ են. տեղ-տեղ շրջապատի վրա իշխում են հսկա ծառերի սաղարթները։ Երբեմն պատահում են հասկերի ծանրությունից պառկած ցորենի արտեր։ Այստեղ բնության և մարդու անվերջ պայքարի առաջավոր դիծն է։ Բավական է, որ թուլանա մարդու պայքարի թափը, և ահա բնությունը արագությամբ հարձակման է անցնում, ոչ միայն վերադրավելով յուր կորցրած դիրքերը, այլև ոտնակոխ անելով և կլանելով մարդակերտ ամեն ինչ։ Այս բանն ավելի աչքի է ընկնում, երբ մոտենում ես հուշարձանին։

Ահա, անտառային, դեպի վեր՝ արևմտակողմ՝ բարձրացող կածանը մի փոքրիկ պտույտով թեքվում է դեպի արևելք։ Պտույտի եզրին աճել է մի հինավուրց հսկա ծառ, որի ամեհի, հզոր արմատների վրա բարձրացած մնացել է մի խաչքարի միակտուր մեծ պատվանդանը։ Քիչ հեռվում, նույն ծառի տակ, ընկած է յուր գահից ցած գլորված խաչքարը։ Ծառի արմատները նստած են այն ժայռին, որի վրա տեղավորված է եղել խաչքարն յուր պատվանդանով։ Այս ծա-

1. Ի դեպ, պետք է ասել, որ նախկին Մուռ կամուրջից քիչ վերև (գետի հոսանքով), Սովետական իշխանության օրոք, Ազատ գետի վրա, կառուցված է մի նոր, լայն, գեղեցիկ կամուրջ։ Այնպես որ, ներկայումս «Մուռ կամուրջ» անունը մնում է իբրև հնի վերապրուկ։

ից դեպի հուշարձանը տանում է մի կարճ և լայն ճանապարհ, որն ավելի նման է շրջակա կանաչի մեջ բացված մի առնելի, որի ծայրին վանքի դլխավոր մուտքն է՝ կամարակապ դարբասը։ Դեռ կանգուն է շերտաքարերից, կրաշաղախով շինված աղեղնաձև թաղը։ Դարբասի երկու կողմից, մուտքի կողերը կազմող ժայռերի վրա, սձել են երկու մեծ և բազմաթիվ ավելի փոքր ծառեր, իրենց արմատներով ղրկած ժայռը և դարբասի քարերը։ Փոքրիկ, դեռ նոր սձող ծառատունկերը տեղավորվել են նաև դարբասի թաղի վրա։ Ծառերի տակ, քարերի վրա և արանքներում համատարած խոտ է և խիտ բուսած ծառերով և մացառով։ Այդտեղ մտնել հնարավոր է միայն մարմնի բաց մասերի մաշկի քերծվածքների և հագուստի պատռվածքների գնով։ Հախուռն թափով հարձակման անցած բնությունը չի խնայել նաև այնքան խնամքով և հոգատարությամբ, կարծր քարից և ամուր կրաշաղախով կառուցված հուշարձանները։ Դեռևս 1950 թվականին վանքի տանիքը իրար խճճված մեծ ու փոքր ծառերի, մացառների և խոտի ամանցանելի բավիղ էր, իսկ բակը մտնել հնարավոր չէր առանց ցաքհատի կամ դեբանդու օգնության։ Այդ թվականին, հարատարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի ջանքով, վանքի տանիքը և բակը մաքրվեցին բուսականությունից։ Սակայն այժմ, երեք տարի անց, նորից ծիլեր և ճյուղեր են տվել քարերի արանքում թաքնված արմատները, և բնությունը նորից հարձակման է անցել։



Ժամատունը և Մեծ եկեղեցին արևմուտքից

մամուռ։ Դարբասից ներս մի բավական ընդարձակ բակ է։ Թանկի աջ կողմում, հուշարձանների խմբի հարավ-արևմտյան անկյունում, միաբանության բնակարանների մի մասն է ընկած, դեռևս կանգուն մնացած պատերով. սակայն այդ բոլորը բռնված է

2. ԴԻՐՔԸ

Իր տեղադրությամբ Մակարավանքը, մեր վանքերից շատերի նման, հիանալի դիրք ունի։ Դա և Ուղունթալա գյուղից վերև դրա-

կետերից, դեպի դաշտ իջնող լեռնալանջերի և բլրաշարքերի գլխավերևով, մի հոյակապ տեսարան է բացվում դեպի Քուռ գետի ափերին ձգվող լայնատարած տափաստանները և դրանց մեջ երևում են օազիսների նմանող, այս ու այն տեղ ընկած բնակավայրերը, իրենց գունագեղ ու բերրի ցանքադաշտերով և ծառաստաններով. հեռո՞ւ. հեռո՞ւ, մինչև հորիզոնում ձգվող Կովկասյան միգապատ լեռների կապտավուն երիզը, Իրոք մեր նախահայրերը մեծ և գեղարվեստական ճաշակի տեր մարդիկ են եղել, որոնք իմացել են իրենց փառավոր Կառուցվածքները ներդաշնակել բնության գեղեցկության հետ և այն էլ լավագույն ձևով։

3. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Մակարավանքը, կազմությամբ ու չափերով, հայկական միջակ մեծության վանքերից մեկն է. սակայն յուր գեղեցկությամբ, ճարտարապետական ու շինարարական արվեստով, մանավանդ քանդակաղարդերի ներքրությամբ և կատարելությամբ, մեր առաջնակարգ հուշարձանների թվին է պատկանում։

Մեր երկրի քաղաքական և մշակութային կենտրոններից հեռու ընկած լինելու հետևանքով (Երևանից մոտավորապես 160 կիլոմետր հեռու է), Մակարավանքը, հայկական արվեստի նշանավոր կոթողներից շատերի նման, մինչև վերջերս շատ քչերին էր ծանոթ։ Վերջին մի քանի տարիների ընթացքում, այդ հուշարձանները սկսեցին գրավել ճարտարապետների, բանասերների և տուրիստների ուշադրությունը. նկարահանվեցին և լուսանկարվեցին։ Իհարկե, չի կարելի ասել, թե այս հուշարձանները և դրանց շրջակայքը, որտեղ բավական թվով բնակավայրեր են եղել, լրիվ ուսումնասիրված են։ Դեռ շատ բան թաղված է հողի տակ և ծածկված ծառերի և մացառների մեջ։

Մակարավանքի հուշարձանների խումբը հետևյալ շենքերից է բաղկացած. երեք եկեղեցիներ (Հին, Մեծ և Փոքր), ժամատուն, գավիթ, նշխարատուն, մատուռ, դարբաս, աղբյուր, բնակելի և օժանդակ շենքեր, պարիսպ և գերեզմանատուն։ Այստեղ թվարկված են միայն կարևոր հուշարձանները, որոնք, տակայն, ճարտարապետական և շինարվեստի տեսակետից, իրարից տարբեր արժեք ունեն։

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախքան մի առ մի հուշարձաններից յուրաքանչյուրի նկարագրությանն անցնելը, կրկնությունից խուսափելու նպատակով, կարևոր ենք համարում մի քանի՝ ընդհանուր բնույթ կրող՝ հարցերի շուրջ կանգ առնել։

ա) Հուշարձանների դրությունը.— Բոլոր հուշարձաններն էլ շատ կամ քիչ չափով վնասված են։ Համեմատաբար լավ դրության մեջ են մնացել եկեղեցիները, ժամատունը, մատուռը, դարբասը և մասամբ նշխարատունը։ Դրանք բոլորն էլ, կլիմայական փոփոխությունների և հաճախակի երկրաշարժների հետևանքով, ճեղքվածքներ և փլվածքներ են ստացել, տեղ-տեղ քարերը խարխլված են։ Փլված են Մեծ եկեղեցու վեղարն ամբողջովին, իսկ Հին եկեղեցունը՝ մասամբ։ Շատ է վնասված Մեծ եկեղեցու արևելյան ճակատը, իսկ տանիքի հարավ-արևմտյան սպագը (թեք տանիքը—скат) բոլորովին փլել է, որի հետևանքով վնասվել է դրա տակի կամարակապ խորշը, եկեղեցու ներսից։ Վտանգավոր դրության մեջ են Մեծ եկեղեցու արևմտյան և հարավային ճակատները, դեպի բակի կողմը հակված լինելու պատճառով։ Ճաքճքված են Փոքր եկեղեցու գմբեթը և տանիքը. շատ տեղերում քարերը խախտված և թափված են։ Քանդված է նշխարատան արևելյան պատը։ Քայքայված են ժամատան արևմտյան ճակատի վերին շարքերի, անկյունների և հարավային ճակատի (գավթի մեջ բացվող) քարերը, որոնց մի մասը թափված է։ Քանդված է երդիկի վերնաշարքը։ Հուշարձանների չափագրության ժամանակ պարզվեց, որ ժամատան հյուսիս-արևմտյան անկյունը 17 սանտիմետր իջվածք ունի, հորիզոնական գծի համեմատությամբ և դրա հետևանքով վտանգավոր ճեղքվածքներ են առաջացել հյուսիս-արևմտյան սյան մեջ և արևմտյան պատը մեջտեղից՝ մուտքի և դրանից վերև բացվող լուսամուտի գծով, այսինքն ամենաթույլ տեղում, պարզապես կոտրվել է։ Եկեղեցիների, ժամատան, նշխարատան և մատուռի ծածկի կղմինտրաձև սալերը[1] պոկված են, բացառությամբ ժամատան հարավ-արևելյան թեքության և Փոքր եկեղեցու ծածկի մի մասի։ Քանդված է նաև դարբասի ճակատը կազմող, սրբատաշ քարերից շինված կամարը։ Գավիթը բոլորովին քանդված է և այդ շենքից մնացել են գետնից քիչ բարձր պատերի հիմնաշարքը և երկու սյուների խարիսխները։ Աղբյուրի շենքը քանդված է և դրանից

1. Ծածկի կղմինտրի որևէ հետք չի գտնվել, ուստի և կարծում ենք, որ բոլոր կարևոր շենքերն էլ սալերով են ծածկված եղել։

մնացել է պատերի ստորին մասը 1,5—2 մետր բարձրությամբ։ Բնակելի շենքերը բոլորն էլ քանդված են։ Նույնը պետք է ասել նաև պարսպի մասին, որի շատ չնչին հետքերն են միայն մնացել։

տական շրջանում, տեղական ազգաբնակչությունը օգտագործել է այդ պատրաստի շինանյութը, ոչ միայն թափված քարերը տանելով, այլև քանդելով և հանելով ինչ որ հնարավոր և հեշտ է եղել։ Դրա ապացույցը



Ժամատան հյուսիս-արևելյան սյան վերևի քանդակազարդ առագաստը

Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ թափված քարերից շատ չնչին մասն է տեղում մնացել և այն էլ հիմնականում մեծ և ծանր քարերը։ Համեմատաբար, նախասովետական շրջանում, տեղական ազգաբնակչությունը օգտագործել է այդ պատրաստի շինանյութը, ոչ միայն թափված քարերը տանելով, այլև քանդելով և հանելով ինչ որ հնարավոր և հեշտ է եղել։ Դրա ապացույցը մնում է Մեծ եկեղեցու արևմտյան ճակատին, մուտքից աջ, որտեղ մի շատ մեծ քար փորձել են սեպերով ճեղքել և հանել, գուցե և պատը փլցնել։ Քարը ճեղքվել է, բայց

կտորները հանել չեն կարողացել։ Ասում են, որ աշաջուրցիները Մակարավանքի քարերով իրենց գյուղի եկեղեցին են շինել։ Թե որքան ճիշտ է այդ, ասել չենք կարող։

բ) Շինանյութ.— Մակարավանքի բոլոր հուշարձաններն էլ (կարևորները) շինված են քարով և կրի ամուր շաղախով։ Աղյուս և կղմինտր չի պատահել, որից պետք է եզրակացնել, որ թրծված կավի արտադրանք այս հուշարձաններում չի գործածվել, բացառությամբ չրատար խողովակների, որոնց գործածությունը հաստատում են մեղնից առաջ հուշարձաններն այցելող բանասերներից ոմանք։

Մակարավանքի հուշարձանների շինարարության մեջ գործ է ածված երկու տեսակ քար։ Գլխավոր հուշարձանները—եկեղեցիները, ժամատունը, մատուռը, աղբյուրի շենքը, թերևս և գավիթն ամբողջովին, իսկ դարբասը մասամբ (ճակատը)— շինված են շատ ծանր և կարծր քարից՝ ֆիլզիտային տուֆից։ Չնայած իր կարծրությանը, այդ քարը հիանալի տաշվում և լավ հղկվում է։ Այդ քարի վրա են փորագրված հուշարձանների բոլոր նուրբ քանդակները և որևէ տեղ, մուրճի հարվածից, քարը կոտրված չէ։ Այս շինանյութի առավելությունն է նաև այն, որ քարերը մի դույնի չեն, այլ տարբեր գույների և երանգների—կաթնագույն, բայց վարդագույն, բաց մանիշակագույն, բաց մոխրագույն, մուգ մոխրագույն, բաց և մուգ դարչնագույն և այլն։ Գույների և երանգների այդ առատությունը մի առանձին կենսախինդ տեսք է տալիս հուշարձաններին և գեղեցիկ կերպով ներդաշնակում է շրջակա կանաչին և տեղ-տեղ խորհրդավոր ու մշուշապատ իրար սաղարթներին։

Քարերի չափը տարբեր է, մեծ մասը միջակ (0,5—1 մ.), սակայն հաճախ պատահում են 2—2,5 մ. երկարությամբ քարեր, հատկապես Մեծ եկեղեցու մույթերին, բեմի ճակատին, մուտքերի շրջանակներում (բրլավոր, վերնասյամ, ճակատաքար), տեղ-տեղ պատերի մեջ. իսկ ժամատան սյուները մեկական քարից հսկա գլաններ են, ամենաճիշտ պրոֆիլով և նուրբ տաշվածքով։ Այդ հսկա քարերի ձևավորման սքանչելի կատարումը և դրանց տեղադրության մեջ ցուցաբերված մեծ վարպետությունը հիացմունքի են արժանի։

Թե ո՞րտեղից է բերված այդ հիանալի շինաքարը, դեռևս պարզված չէ. համենայն դեպս վանքի մոտերքում այդպիսի քարահանք կա միայն 1,5 կիլոմետր հարավարևմուտքում, Պիպիս գյուղատեղի մոտ։

Մնացած հուշարձանները—նշխարատունը, դարբասի թաղը և բնակելի շենքերը շինված են կրաքարից, որի հանքը գտնվում է տեղում։

գ) Քանդակազարդեր.— Հայաստանի ճարտարապետական հուշարձանների մեծադույն մասը շատ կամ քիչ չափով զարդարված են բուսական և երկրաչափական բնույթի քանդակներով, որոնցից շատերն արվեստի գլուխգործոցներ են. սակայն որևէ այլ տեղ այնպիսի սքանչելի և նուրբ քանդակներ չկան, ինչպես Մակարավանքում։ Չի կարելի ասել, որ այս հուշարձանները չափազանց շատ քանդակներով ծանրաբեռնված են։ Դրսից քանդակված են գլխավորապես մուտքերի և լուսամուտների շրջանակները, իսկ ներսից՝ Հին և Մեծ եկեղեցիների բեմերի ճակատները, իսկ ժամատան մեջ՝ սյուների խոյակներից վեր՝ երդիկի առագաստները։ Սակայն բավերի մեջ կան մի քանի լավագույնները. սքանչելիները։ Իրրև քանդակագործության գլուխ-գործոցներ պետք է համարել ժամատան երդիկի առագաստների, իսկ Մեծ եկեղեցու մեջ՝ բեմի ճակատի քանդակները։ Ժամատան երդիկի առագաստների երկուական եռանկյուն սալերը լայն ճյուղավորված և մեծ ճաշակով կատարված քանդակներով են ծածկված։ Առագաստների կենտրոնական մասում տեղավորված են թռչունների և մարդու գլուխ ունեցող առասպելական կենդանիների ցցուն բարձրաքանդակներ, որոնցից մի քանիսը կիսվածքի վիհություն և դիմագծերի նուրբ արտահայտություն ունեն։ Այլ բնույթ ունեն Մեծ եկեղեցու բեմի ճակատի բարձրաքանդակները։ Բեմի 5 մետրաչափ ճակատն առնված է 6 կտոր քարից կազմված մի երկար և նեղ շրջանակի մեջ, որը զարդարված է ոչ խոր փորված և առանց մանրամասնությունների քանդակներով։ Այդ շրջանակի մեջ դրված են երկու հսկայական սալեր։ Այդ սալերի վրա, խճանկարաձև դասավորված են երեք շարք քանդակներ։ Վերին և ստորին շարքերում քանդակներն առնված են ութանկյուն աստղերի մեջ, եզերված զույգ՝ դրսից հարթ և ներսից կիսագլանաձև՝ շրջանակներով, որոնք իրարից բաժանված են խոր ակոսով։ Ցուցաքանչյուր շարքում կան 13 աստղեր։ Միջին շարքում տեղավորված են 12 հատ ութանկյուն պնակներ։ Բոլոր պնակների և աստղերի մի մասի քանդակները բուսական բնույթի են, իսկ աստղերի մնացած մասի մեջ, բուսական զարդանկարների ֆոնի վրա քանդակված են հուշկապարիկներ և շրի մեջ գալարվող ձկներ և մի տեղ մարդու քանդակ, նավի մեջ։ Աստղաձև քանդակներն իրարից բաժանվում են ռոմբաձև փոսերով։ Թե՛ ձկները և թե՛ մարդու գլուխ ունեցող կենդանիները (հուշկապարիկները) բոլորն էլ

յարժում, կյանք են ցուցաբերում։ Այդքան քանդակներից որևէ մեկը մյուսին չի նմանում և այս ամենը կերտված է վերին աստիճանի նրբությամբ, ճաշակով և անհման վարպետությամբ, մաքուր, հստակ և հատու չիլուց, որով է՛լ ավելի շեշտվել և ցայտուն են դարձել աստղերն ու պնակները իրենց քանդակներով։ Այդպիսով արվեստագետը իսկական վարպետության հետ միաժամանակ ցուցաբերել է նաև իր մեծ ճաշակը։

Գոռ։ Եկեղեցին հարավ-արևմուտքից

շրջագծերով։ Վերը հիշեցինք, որ աստղաձև քանդակները իրարից բաժանված են ռոմբաձև հարթ փոսերով։ Քանդակագործը խուսափել է այդ փոսերի մակերեսի վրա որևէ դիծ քանդակելուց։ Նկատի ունենալով բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի «Արցախի 374-րդ էջում տված նկարագրությունը, կարելի է ասել, որ Մեծ եկեղեցու այդ քանդա-

կազարդ ճակատը գունեղգույն ներկված է եղել, և այն էլ այնքան հաջող, որ բանասերը ներկերի գույնը վերագրել է քարերին։ Նա գրում է. «Հրաշալի և ուշագրավ է բեմի ժողովրդահայաց ճակատն, որ շինված է գունեղգույն քարերով և զարմանազան ներքաքանդակ նախշերով»։ Ներկի հետքը ներկայումս նկատելի է միայն շրջանակի մի քարի վրա՝ կանաչ գույնի, որը թարմ մամուռի տպավորություն է թողնում։

Մակարավանքի քանդակազարդերի մասին խոսելիս, պետք է նշել նաև մի հանգամանք, որը նկատել է ճարտարապետ Բ. Հրզումանյանը. այդ այն է, որ տեսադաշտից դուրս և հեռու ընկած տեղերում, քանդակները մանրամասնություն չունեն, այլ փորված են միայն դրանց հատու շրջագծերը։ Այդպիսի բնույթ ունեն Մեծ եկեղեցու գմբեթի. Փոքր եկեղեցու արևելյան և հյուսիսային ու ժամատան հյուսիսային ճակատների լուսամուտների շրջանակները, որն ապացույց է հուշարձանները կառուցող ճարտարապետի հմտության, քանդակները ռացիոնալ օգտագործելու իմաստով։

5. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բավականանալով վերը բերված ընդհանուր դիտողություններով, այժմ անցնենք հուշարձանների համառոտ նկարագրությանը։

Սարից դեպի դաշտը ձգվող լեռվակաձև հարթության վրա տեղավորված հուշարձանների գլխավոր խումբը հետևյալ դասավորությունն ունի, արևմուտքից արևելք ուղղությամբ։—

Լեռվակաձև հարթության սկզբում ապրյուրի շենքն է։ Դրանից քիչ աջ՝ մեծ ծառի արմատների վրա բարձրացած խաչքարի պատվանդանը։ Այդ երկուսի մեջտեղից գնացող կարճ ճանապարհի ծայրին վանքի դարբասն է։ Դարբասից ներս մեծ բակն է գտնվում, սկզբում նեղ, գնալով լայնացող։ Դարբասից աջ՝ քառաժայռին կից գտնվում է բնակելի շենքերի մի մասը։ Բակի ծայրին, համարյա ամբողջ լայնքով, տեղավորված են, ձախից՝ ժամատունը, աջից՝ Մեծ եկեղեցին, ժամատան գծից քիչ դեպի ետ (դեպի արևելք)։ Ժամատան և Մեծ եկեղեցու արևմտյան ճակատների կազմած անկյունում գավթի շենքն է եղել։ Ժամատան արևելյան կողմում գտնվում է Հին եկեղեցին, որը տեղադրված է ժամատան արևելյան պատի կենտրոնական մասի դիմաց և արևելյան ճակատով դուրս է ընկնում Մեծ եկեղեցու նույն ճակատի գծից։ Ժամատան արևելյան ճակատի և Հին եկեղեցու հյուսիսային պատի միացման անկյունում տեղավորված է նշխարատունը։ Մեծ եկեղեցու արևելյան և Հին եկեղեցու հարավային ճակատների կազմած անկյունում փոքր բակն է, որը հարավից բացվում է վանքի հարավակողմի դարավանդների վրա։ Փոքր բակի արևելյան կողմում տեղավորված են հարավից՝ Փոքր եկեղեցին, իսկ հյուսիսից՝ մատուռը, միմյանց կից տեղադրված։ Մեծ և փոքր բակերը իրար հետ կապվում են Մեծ եկեղեցու հարավային ճակատի առջևով ձգվող, մոտավորապես 4 մ. լայնություն ունեցող մի հարթակով։

ա) Հին եկեղեցին տեղավորված է լեռվակաձև հարթության հյուսիս-արևելյան ծայրին, հյուսիսային խոր ձորակից քիչ հեռու, և դիրքն ավելի բարձր է կից գտնվող հուշարձաններից, օրինակ դրա և ժամատան հատակների բարձրության տարբերությունը 1,45 մ. է։

Դա մի պարզ շենք է, դրսից երկարավուն քառակուսի, իսկ ներսից խաչաձև։ Ունի չորս խորան, որոնցից երկուսը տեղավորված են բեմի աջ և ձախ կողմերում, եկեղեցու մեջ բացվող մուտքերով։ Մյուս երկու խորանները գտնվում են արևմտյան պատի մեջ բացված մուտքի աջ և ձախ կողմերում։ Այս եկեղեցու չափերն են՝ ներսից— երկարությունը 7,6 մ., լայնքը 6,6 մ., իսկ բարձրությունը 11,9 մ.։ Պատերի հաստությունը 1,1 մ. է։ Խաչքեների միացման անկյուններից բարձրացող կամարների վրա նստած է միջակ բարձրություն ունեցող գմբեթը։ Գմբեթի և պատերի մեջ բացված չորսական փոքր և նեղ լուսամուտներից շատ աղոտ լույս է ընկնում ներսը, այնպես որ նույնիսկ ամառվա ամենապայծառ օրերին այդտեղ մութն է։ Շատ աղոտ լույս են ստանում արևելյան երկու խորանները իրենց փոքրիկ և նեղլիկ լուսամուտներից, իսկ արևմտյան խորանները բնավ լուսամուտներ չունեն և լույս են ստանում եկեղեցու արևմտյան պատին կից գտնվող դռներից։ Թեմը տանող աստիճանները եղել են միայն հյուսիսային ծայրից և այժմ քանդված են։ Նույն դրության մեջ են և ժամատան մեջ իջնող եկեղեցու մուտքի աստիճանները։

Դատելով պատերի արտաքին և ներքին տեսքից, այս եկեղեցին սկզբում ամբողջովին շինված է եղել կոփածո քարից, ներսից կրով ծեփված։ Հետագայում մի քանի անգամ վերանորոգվել է։ Վերջին վերանորոգումը հավանաբար կատարվել է Մեծ և Փոքր եկեղեցիների շինության ժամանակ։ Այս

1. Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895 թ.։

վերջին վերանորոգումը, կամարների հիմերից վեր, ներառյալ գմբեթը, կատարված է որբատաշ քարով։

Քանդակազարդեր կան միայն երեք տեղում։ Դրանցից մեկն արտաքուստ գմբեթի թմբուկի վերևում 35 սմ. բարձրության երկրաչափական քանդակների մի գոտի է, իր բնույթով և կատարողական արվեստով շատ նման Մեծ եկեղեցու նույն տեղում գտնվող քանդակներին։ Երկրորդ քանդակազարդը եղել է եկեղեցու ներսում, բեմի ճակատին, ոռմբաձև մեծ շրջանակների մեջ առնված երկրաչափական և բուսական բնույթ ունեցող գեղեցիկ և ճաշակավոր քանդակներով։ Երրորդ քանդակը արտիդի մեջ բացվող լուսամուտի պատին է՝ դրսից։

բ) Մեծ եկեղեցին.— Եթե կ Գլուզարյանը պատկած դրությամբ դնենք, ճշտիվ կստանանք այն պատկերը, որ ներկայացնում է Հին և Մեծ եկեղեցիների դիրքավորումը մի-



Մեծ եկեղեցու արևմտյան դուռը

մյանց նկատմամբ, ըստ որում վերին՝ կարմիր գծի տեղում Հին եկեղեցին է, իսկ ստորին՝ երկար՝ գծի դիրքում Մեծը։

Մեծ եկեղեցին գմբեթավոր սրահների տիպի, միջին չափերի մի շենք է, որը տեղավորված է Հին եկեղեցու հարավային ճակատից 1.5 մ. հեռավորության վրա։ Ներսից դրա չափերն են— երկարությունը 13,5 մ.,

լայնքը 9 մ., իսկ բարձրությունը, մինչև դմբեթի վերարի հիմքը 17.5 մ.։ Պատերի հաստությունը 0,9—1,0 մ. է։ Ըստ ձևի— արտաքուստ երկարավուն քառակուսի է, իսկ ներսից խաչաձև. խաչաձև է նաև տանիքը։ Այս հուշարձանը, թե՛ արտաքուստ և թե՛ ներսից, հոյակապ տեսք ունի։ Արտաքուստ պատերը զուտ պարզություն ունեն, առանց ավելորդ զարդարանքների։ Հարավային և արևելյան ճակատներում զույգ անկյունավոր, նեղ, բարձր և կամարակապ խորշերի կտրվածքները կենդանացնում են շենքի տեսքը։ Հյուսիսային ճակատի խորշերը ծածկված են ժամատան շենքով։ Հարավային ճակատի կենտրոնական մասում գտնվող երկար և նեղ լուսամուտը և դրա ստորին եզրի գծի վրա, քիչ հեռու տեղավորված երկու կլոր լուսանցքները, իրենց պարզ, բայց գեղեցիկ շրջանակներով, մեծ լրջություն և վեհություն են տալիս շենքին։ Այս ճակատում միակ զարդարանքն է կենտրոնական լուսամուտի տակ տեղավորված, ճանկերում ոչխար բռնած, արծվի ցցուն բարձրաքանդակը։ Թե ի՛նչ զարդարանք է եղել արևելյան ճակատին, դժվար է ասել, որովհետև դրա վերին շարքերի և լուսամուտների շրջապատի բարերը թափված են։ Արևմտյան ճակատի դլխավոր զարդարանքը եկեղեցու գլխավոր մուտքի շրջանակն է, իր չորս շարք, ասեղնագործի նրբություն ունեցող, լայն ու նեղ քանդակազարդերով և մուտքից վերև դասավորված գույնզգույն, տարբեր ձևերի քարերով, որոնց մի մասը նույնպես քանդակներով է զարդարված։ Իր պարզությամբ և նրբությամբ աչքի են ընկնում բարավորի երկու կողմերում տեղավորված անկյունավոր, բարակ կիսասյուները, խոյակներից վեր ձգվող կիսագլանաձև կամարով։ Ընդհանուր առմամբ Մեծ եկեղեցու արևմտյան մուտքի շրջանակը հիանալի է։

Այս եկեղեցու երկրորդ՝ հյուսիսային՝ մուտքը, որը բացվում է ժամատան միջից, համարյա թե նույն ձևավորումն ունի, այն տարբերությամբ, որ այստեղ դռան ճակատին դրված է մի հսկա, կիսաշրջանաձև քար, արևմտյան մուտքի տարբեր ձևերի և դույների քարերի փոխարեն։

Հուշարձանի դմբեթը բարձր է և գլանաձև։ Դմբեթի թմբուկը, սագավոր (երկթեք) տանիքների ցվիկների գծից վերև, ընդգրկված է կիսագլանաձև գոտով, որի վրայից բարձրանում են քսան զույգ բարակ կիսասյուներ, քանդակազարդ փոքր կամարներով միացած։ Աշխարհագրական չորս գլխավոր կողմերում գտնվող կիսասյուների մեջ բացված են երկար ու նեղ լուսամուտներ, տնված դեղաքանդակ շրջանակների մեջ։ Մնացած բոլոր կիսասյուները միացնող կամարների տակ տեղավորված են տարբեր բանդակներ ու ձև ունեցող քարեր։ Դմբեթի թմբուկը վերևից դեղարը կրող քիվի տակ, շրջանցում է ութանկյուն երկրաչափական ձևի քանդակի 41 սմ. լայնություն ունեցող մի գոտի։

Եկեղեցու ներքին տեսքը շատ տպավորիչ է և ընդարձակ։ Դմբեթի և պատերի մեջ բացված չափավոր քանակի լուսամուտներն ու լուսանցքները բավարար չափով լույս են տալիս ներսին։ Այնպես որ այստեղ ներքին լուսավորության հարցն ավելի բարեհաջող լուծումն է ստացել։ Հին եկեղեցու համեմատությամբ։

Լայնանիստ և բարձր դմբեթը նստած է հյուսիսային և հարավային պատերին մոտ դրված, չորս գեղեցիկ և սլացիկ, հազվ մույթերի վրայից բարձրացող հոժիու կամարների վրա։ Այդ մույթերից արևելյան զույգը տեղավորված է արսիդի ծայրերին։ Մյուս երկու մայթերը նեղ և մինչև խաչքների թաղը բարձրացող միջնորմով միանում են հյուսիսային և հարավային պատերին, որով այդ միջնորմների և արևմտյան պատի մեջ առաջանում են լայն և խոր խորշեր։ Ճակատից կամարակապ այդ խորշերի թաղերը մինչև տանիքի սագերը չեն հասնում, որով թաղերի և տանիքի մեջ մնում է բավական մեծ տարածություն, իբրև գաղտնարաններ։ Հետագայում հյուսիսային խորշի ճակատը փակել են մինչև կամարի հիմքը բարձրացող մի պատով, որով ստացվել է խորանանման մի փոքր սենյակ, որի մուտքը բացված է եկեղեցու արևմտյան պատին կից։ Այդ սենյակի հորիզոնական առաստաղի մեջ, մուտքի կողմում բացված մի քառակուսի անցք տանում է խորշի թաղի տակ մնացած վերնահարկը, որի ճակատը բաց է։ Ճակատի բացվածքի մեջտեղում, ցածի պատի վրա դրված է մի կարճ սյուն, որի խոյակը կպչում է խորշի կամարի կենտրոնին։ Այդ վերնահարկը հավանաբար ծառայել է իբրև կատաղումի, աղնվական դասի կանանց համար։ Դրա նմանը կա նույն ժամանակներում կառուցված Հառիճի տաճարում։

Արսիդի երկու կողմերում կան կրկնահարկ զույգ խորաններ։ Վերին հարկի խորանների աստիճաններով բարձրացող մուտքը բացված է թեմի երկու ծայրերին, մույթերի կողքից, իսկ ցածի հարկինը՝ եկեղեցու մեջ։ Այդ խորանները ունեն մեկական կարճ և նեղ լուսամուտներ, բացված եկեղեցու արևելյան պատի մեջ։ Թեմը լույս է ստանում նույն պատի մեջ, արսիդի կենտրոնում բացված նեղ և երկար լուսամուտից։

Արսիդի կիսաշրջանաձև պատի մեջ 13 դուգավոր խորշեր կան, որոնք իրարից բա-

ժանված են զույգ բարակ, կամարակապ կիսասյուներով։ Նույնպիսի խորշեր մեղ պատահել են Խորանաշատի տաճարում։ Բեմը բարձր է, աստիճանները հարավային ծայրում։ Բեմի ճակատը զարդարված է այն հրաշալի քանդակներով, որոնց մասին մանրամասն դրել ենք «Քանդակազարդերը վերնադրի տակ։ Այս հիանալի քանդակները, արտիզի պատի միջի կամարակապ խորշերի հետ, մեծ հանդիսավորություն, շուք ու վեհություն են տալիս այս թափուր տաճարին։

չև հրդիկի բացվածքի շուրջը։ Պատերի հաստությունը 0,9—1,0 մ. է։

Արտաքուստ դա մի պարզ կառուցվածք է, որի արևմտյան ճակատն է միայն երևում և հարավային պատի մի փոքրիկ հատվածը, Մեծ եկեղեցու արևմտյան ճակատի գծիդ դուրս, դեպի մեծ բակը, իսկ հյուսիսային պատը, դրված լինելով այդ կողմի խոր ձորակի եզրին, տեսանելի չէ, ձորակի լանջին խիտ բուսած ծառերի պատճառով, և մյուս պատերով կցված է— արևելքից նշխարա-



Մեծ եկեղեցու բեմի ճակատի քանդակազարդը

Տաճարի ներքին տեսքն ամբողջացնելու համար մնում է հիշել հարավային պատի մեջ տեղավորված լայն պատուհանի (պատրհան) մասին, որի բացվածքը շրջանակված է տափակ, սյունանման կողերի վրայից բարձրացող սրագագաթ կամարով։

գ) Ժամատուն, իբրև օժանդակ շենք, իր դիրքով ծառայում է և՛ Հին և՛ Մեծ եկեղեցիներին։ Դա տեղավորված է Հին եկեղեցու արևմտյան և Մեծ եկեղեցու հյուսիսային պատերին կից։ Չափերը համարյա թե սովորական են այդ տիպի շենքերի համար— երկարությունը 13 մ., նույնքան և լայնքը՝ ներսից, իսկ բարձրությունը 9,35 մ. է մինչև հրդիկի բացվածքի շուրջը։ Պատերի հաստությունը 0,9—1,0 մ. է։

Արտաքուստ դա մի պարզ կառուցվածք է, որի արևմտյան ճակատն է միայն երևում և հարավային պատի մի փոքրիկ հատվածը, Մեծ եկեղեցու արևմտյան ճակատի գծիդ դուրս, դեպի մեծ բակը, իսկ հյուսիսային պատը, դրված լինելով այդ կողմի խոր ձորակի եզրին, տեսանելի չէ, ձորակի լանջին խիտ բուսած ծառերի պատճառով, և մյուս պատերով կցված է— արևելքից նշխարատանը և Հին եկեղեցուն, իսկ հարավից՝ Մեծ եկեղեցուն։

Շատ գեղեցիկ է ձևավորված արևմտյան պատի կենտրոնում բացված գլխավոր մուտքը։ Մուտքի բացվածքը վերից և կողերից շրջանակում է նույնը քանդակների մի շերտ։ Այդ շերտի կողերից աստիճանաբար դեպի դուրս տեղավորված են զույգ նրբակերտ կիսասյուներ, որոնց խոյակներից վեր բարձրացող պայտաձև կամարները շրջանցում են մուտքի մեծ ճակատաքարը։ Այդ բոլորն առնված է բարդ պրոֆիլ ունեցող մի մեծ շրջանակի մեջ, որի կողերը վերին՝ պայտաձև՝ կամարի գագաթի գծի վրա, ուղիղ ան-

կյան տակ բեկվում են դեպի ներս, նորից բարձրանում, կրկին բեկվում և հասնելով մուտքից վերև գտնվող լուսամուտի ուղղությանը, սլանում են վեր և շրջանակում լուսամուտի բացվածքը։ Այդ շրջանակի բեկման երկրորդ աստիճանի վրա, աջից՝ մեծ հուշկապարիկի, իսկ ձախից՝ եղի վրա հարձակված առյուծի բարձրաքանդակներն են տեղավորված։ Թռչունների և վարդերի բարձրաքանդակներ կան նաև հիշյալ ճակատի հարավային և հյուսիսային փոքր լուսամուտների պսակների թևերի վրա։

Ներքուստ ժամատունը հոյակապ տեսք ունի։ Պատերին ավելի մոտ և իրարից հեռու տեղավորված չորս հուժկու գլանաձև սյուներով և դրանց ու որմասյուների վրայից բարձրացող կամարների վրա հաստատված թաղերով, ներսից շենքը բաժանվում է ինը, իրար անհավասար բաժանմունքների։ Կենտրոնական բաժանմունքում, սյուների խոյակների վրայից բարձրացող կիսաշրջանաձև, կրկնակի կամարների և դեղաքանդակ առաստաղների վրա, նստած է լայն, 4,9 մ. տրամագիծ ունեցող, ութանկյունի երդիկը։ Երդիկի հիմքը կազմում է բարդ պրոֆիլ ունեցող մի լայն քիվ, որի վրա բարձրանում է կիսագլանաձևով եղերված երկրաչափական ձևերի լայն շերտ, որը շրջանցում է երդիկի բացվածքը։ Չորս սյուները և դրանց դիմաց գտնվող որմասյուները վերևից միացնող կամարների վրա նստած են մնացած ութ բաժանմունքների առաստաղները, որոնցից խաչաձև դասավորված միջին չորսը թաղապատ են, մնացած չորս անկյունային բաժանմունքներից երեքինը հարթ, հորիզոնական են, իսկ չորրորդինը՝ հյուսիս-արևելյանը՝ անկյուններից խարխերով իրար հատող փոքրիկ կամարներով գոտկված։ Անկյունային երեք հորիզոնական առաստաղները կազմված են մեծ սալերից, որոնք իրարից բաժանվում են խաչանման դասավորությամբ դրված նեղ և երկար քարերով։ Այդ սալերից յուրաքանչյուրը մի մեծ վարդաքանդակ ունի, վարդագույն ներկված։ Դրանցից հարավ-արևմտյան բաժանմունքի առաստաղի վարդերը քանդակված չեն, այլ միայն ներկված։

Ժամատան հարավ-արևելյան անկյունում կան զույգ, երկհարկանի խորաններ։ Դրանք տեղավորված են Հին և Մեծ եկեղեցիների, իրար մոտ գտնվող պատերի մեջ մնացած, 1,5 մ. լայնություն ունեցող միջանցքում։ Վերին հարկի խորանի թաղը կոր գծով հենված է Մեծ եկեղեցու հյուսիսային պատին։ Դեպի այդ խորանի մուտքն են տանում պատի մեջ հարցված վեց հատ քարե աստիճաններ, որոնցից ցածինը ժամատան հատակից 1,5 մ. բարձրությամբ մնում է օդում կախված։ Պետք է ենթադրել, որ այդ աստիճաններից օգտվելու համար, դեպի Հին եկեղեցու մուտքը տանող աստիճաններով բարձրանում էին այդ մուտքի առաջ շինված (այժմ քանդված) բարձր հարթակի վրա, և այդտեղից մի քայլով անցնում կախված աստիճանի վրա։

Ներքուստ ժամատան զարդարանքն են կազմում երկուական քարերից բաղկացած, հիանալի քանդակներով զարդարված առաստաղները և հարավ-արևմտյան սյան դլանը շրջանցող բարձրաքանդակ կամարակապ բարակ զույգ սյուները և խոյակի ճակատի վահանաձև քանդակները։

Բացի արևմտյան, գլխավոր մուտքից, ժամատան միջից երեք դռներ տանում են դեպի նրան կից հուշարձանները— արևելյան պատի հյուսիսային ծայրից՝ դեպի Նշխարատունը, նույն պատի կենտրոնից՝ դեպի Հին եկեղեցին և հարավային կողմից՝ խորաններից քիչ հեռու՝ դեպի Մեծ եկեղեցին։

Արևմտյան պատի մեջ բացված երեք, և հյուսիսայինի երկու լուսամուտները բավական չէին լինի լուսավորելու այդ ընդարձակ շենքը, եթե չլիներ լայնանիստ և մեծ բացվածք ունեցող երդիկը։ Ենթադրվում է, որ երդիկը ծածկված է եղել սյունադարդ ցածր գմբեթով— ռոտոնդայով։

Ժամատան հատակն ավելի ցածր է թե՛ Հին և թե՛ Մեծ Եկեղեցիների հատակներից։

դ) Նշխարատունը գտնվում է հուշարձանների՝ կենտրոնական խմբի հյուսիս-արևելյան կողմում, Հին եկեղեցու և ժամատան պատերի միացման անկյունում։ Կրաքարից և խաչքարերի բեկորներից, ավելի ուշ ժամանակում շինված մի օժանդակ, հասարակ շենք է 5,1×3,4 մ. չափերի։ Ենթադրվում է, որ դա շինված է իրոք նշխարատուն։ Այդ ենթադրությունը հիմնավորվում է գլխավորապես հյուսիս-արևելյան անկյունում, պատի մեջ գտնվող, բուխարիկի առկայությամբ։ Ժամատան պատին կից, մուտքի առաջ գտնվող մի մասը, մոտավորապես 1,5 մ. լայնությամբ, թաղապատ է, իսկ մնացած մասի առաստաղը՝ վրանաձև։ Լույսն ստացվում է առաստաղի կենտրոնում բացված երդիկի փոքր անցքից և հյուսիսային պատի մեջ գտնվող նեղլիկ լուսամուտից։

ե) Գավիթը տեղավորված է եղել Մեծ եկեղեցու արևմտյան ճակատի երկարությամբ (11 մ.), իսկ լայնքը ժամատան հարավային պատի այդ կողմից դուրս դրված պատի չափ (մոտավորապես 3 մ.)։

Ըստ երևույթին գավիթը շինված է ավելի ուշ ժամանակ։ Դատելով տեղում մնացած երկու սյան խարիսխների առկայությունից, դրա արևմտյան ճակատը սյունազարդ է եղել։

զ) Փոքր եկեղեցին տեղավորված է հուշարձանների կենտրոնական խմբից անջատ, փոքր բակի հարավ-արևելյան կողմում, լեզվակաձև հարթության ծայրին։

Սա փոքրիկ ու գողտրիկ, գմբեթակիր, ներսից խաչաձև և դրսից ութկողանի մի շենք է, 8 մ. բարձրությամբ և 3,75×3,43 մ. ներքին չափերի։ Ջնայած արտաքին վնասվածքներին, այս հուշարձանը վերին աստիճանի գրավիչ և հաճելի տեսք ունի։

Դրա ստորին մասը կարճ և հաստ թմբուկի ձևով բարձրանում է հուշարձանը շրջանցող նեղ սալահատակի վրայից, մի լայն քարաշարքի բարձրությամբ։ Այդ թմբուկի վերևից շենքը գոտկվում է մի պարզ քիվով, որից վերև հուշարձանն ութանկյունի է։ Ցորս գլխավոր ճակատներում բացվում են փոքրիկ լուսամուտներ, որոնցից արևմտյանը կլոր, իսկ մյուսները կարճ և նեղ են։ Լուսամուտներ չունեցող մյուս չորս ճակատներում կան անկյունավոր խորշեր, որոնց գագաթները գարդարված են ճառագայթաձև դասավորված կիսակոնաձև փորվածքով։ Խորշերի և լուսամուտների գագաթները պսակաձև պատելով հուշարձանը շրջանցում է բարդ պրոֆիլ ունեցող մի գեղաքանդակ գոտի։ Այդ գոտու վրա, լուսամուտներից և խորշերից վերև, դրված են թռչունների և առյուծների բարձրաքանդակներ։ Բարձրաքանդակներից նշանավոր է հյուսիսային ճակատին տեղավորված, համարյա բնական մեծության մի արծիվ, կտուցում մի մեծ օձ կամ վիշապ բռնած։ Հուշարձանի ութանկյունի պատերի վերևից շրջանցում է մի պարզ քիվ, որի վրա նստած է նեղ, թեք և նույնպես ութանկյունի, սալապատ տանիքը, որի կենտրոնում բարձրանում է գմբեթի չորս փոքրիկ լուսամուտներ ունեցող թմբուկը, ծածկված կոնաձև վեղարով։ Նուրբ քանդակներով է զարդարված միակ՝ արևմտյան կողմից՝ մուտքի շրջանակը և դրա կողերում դրված կարճ կիսասյուների խոյակների ճակատները։ Որմասյուների խոյակների վրայից բարձրանում և մուտքի ճակատաքարն է շրջանցում մի թեթև, սրածայր կամար։ Ներքուստ խաչաձև դասավորված արսիդները կիսաշրջանաձև են, բացառությամբ արևմտյանի, որը քառանկյունի է, դրա մեջ է բացվում հուշարձանի մուտքը։ Արսիդների միացման տեղում դուրս ընկած անկյուններում տեղավորված են բարակ գլաններ, կողքերից անկյունավոր կտրվածքներով։

Այս հուշարձանը ներսից բոլորովին անվթար է մնացել։

է) Մատուռը, որը գտնվում է Փոքր եկեղեցուն կից՝ հյուսիսից, ներսից 2,4×1,5 մ. և 2,5 մ. բարձրությամբ մի փոքրիկ շենք է, պատերը սրբատաշ քարից։ Մուտքի շրջանակը զարդարված է մի շարք բուսական քանդակներով։ Դրսից հուշարձանը պատված է առանց շաղախի քարերով։ Տանիքը հողածածկ է։

ը) Զանգակատուն.— Նախքան մյուս հուշարձանների նկարագրությունը շարունակելը, անհրաժեշտ ենք համարում այստեղ մի քանի խոսք ասել այդ հուշարձանի մասին, որի հետքն անգամ այժմ չի երևում։ Դրա մասին հիշատակում են Մակարավանքի մասին գրող բանաստեղծներից ոմանք, առանց տեղը որոշելու։ Դրանցից հնագույնը՝ Ս. Ջալալյանը միայն աղոտ ակնարկով հիշատակում է զանգակատան տեղը։ Ժամատունը (ըստ Ջալալյանի՝ գավիթը) նկարագրելուց հետո, գրում է. «Կից սորա չքնաղաշէն զանգակատուն, առ որով է փոքր գմբեթազարդ եկեղեցի, շքեղ քանդակագործութեամբ կառուցեալ ի թուին Հայոց ՈՒԷ»[1]։ Այս խոսքերից կարելի է եզրակացնել, որ զանգակատունը եղել է փոքր բակի հյուսիսային ծայրին, Հին եկեղեցու, մատուռի և Փոքր եկեղեցու մոտ։

թ) Դարբասը, ինչպես հիշել ենք, գտնվում է մեծ բակի արևմտյան, նեղ ծայրին։ Դրա 2,9 մ. լայնություն ունեցող բացվածքը փորված է կրաքարի ժայռի մեջ։ Շերտավոր կրաքարից շինված աղեղնաձև թաղը հիմնված է կողքերի ժայռերի վրա։ Աջ կողմից ճակատը, թեք պատի ձևով, երեսպատված է անտաշ կրաքարի մեծ կտորներով, որը շատ գրավիչ տեսք ունի։ Մուտքի ճակատը, ըստ երևույթին պատված է եղել սրբատաշ, ամուր քարից շինված կամարով, որից ձախ կողմում մնացել է կամարի հենարան կազմող մի մեծ քար, որի վրա քանդակված են երեք կարճ կիսասյուներ, իրարից բաժանված ուղղանկյուն կտրվածքներով, մուտքի ներսի կողմից եզերված բուսական գեղեցիկ քանդակների նեղ շերտով։ Աջ կողմում մնում է նման մի քարի բեկոր։

ժ) Այլբյուրի նոր հայտնաբերված շենքը գտնվում է վանքի դարբասից դուրս, մոտավորապես 50—60 մ. հեռավորության վրա, դեպի արևմուտք։ Շենքի ճակատն ուղղված է դեպի վանքը։ Դրսից և ներսից պատերը սրբատաշ քարից են։ Բացվածքը 7 մետր է, ներսից երկարությունը 7,25 մ., իսկ լայնքը 3,14 մ.։ Պատերը կանգուն են մնացել 1,5—2 մ. բարձրությամբ։ Այս հուշարձանը լրիվ պեղված չլինելու պատճառով, առ այժմ պարզ չէ թե դա փակ-կամարակապ և թաղապատ, թե բաց շենք է եղել։ Մասնակի պեղումներից հայտնաբերվեցին, արևմտյան և

---

1. Սարգիս վարդապետ Ջալալյանց, «Մանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա, Տփխիս, 1842 թ., էջ 147։

հարավային պատերի կազմած անկյունում, սրբատաշ քարից շինված ջրի մի ավազան, որից հարավային պատի միջով բացված է մի նեղ անցք, ջուրը դուրս հոսելու համար։ Արևմտյան պատի կենտրոնում դրված մի մեծ քարի վերին եզրին եղած աղեղնաձև փորվածքները ցույց են տալիս, որ այդտեղից է ջուրը հոսել ավազանների մեջ։ Այդ փորվածքների մեջտեղի դծի վրա, քիչ վերևում, հողի մեջ մնացել է ջրատար առվի ծայրը, որի երկու կողքերին դեռևս մնացել են իրար զուգահեռ տեղավորված երկու երկարավուն, սրբատաշ քարեր։ Հավանաբար ջուրը բերված է եղել նույն ուղղությամբ, մոտավորապես 300 մետր հեռու, սարի լանջից բխող աղբյուրից, քարից կամ կավից շինված խողովակներով։

ժա) Բնակելի շենքեր, ինչպես և տնտեսական այլ օժանդակ կառուցվածքներ շատ են եղել, ցրված վանքի շուրջը, թե՛ պարսպից ներս և թե՛ դրսում, բացառությամբ հյուսիսային խոր ձորակի։ Այդ շենքերի հետքերը նկատելի են քանդված պատերի և փոսերի ձևով։ Մեծ բակի հարավ-արևմտյան անկյունում, դարբասի մոտ, իբրև բացառություն, դեռևս կանգուն մնացել են երկու բավական մեծ սենյակների պատերը, որոնցից մեկում պահվել է մի թաղապատ լայն խորշ և պատի միջի բուխարիկը։ Հավանաբար 19-րդ դարում, երբ վանքը դեռևս վանահայր ուներ, այս շենքը բնակելի է եղել։

ժբ) Պարիսպներից շատ աննշան հետքեր են մնացել քարաշարքերի (մեծ ծառի մոտերքը) և հողաթմբերի ձևով։ Դրանց ուղղության և երկարության մասին դժվար է որևէ բան ասել, առանց հատուկ հետախուզումների։

ժգ) Գերեզմանատունը գտնվում է վանքի դարբասից մոտավորապես 100—120 մ. հեռու, աղբյուրի շենքից դեպի արևմուտք գտնվող մի բարձրության վրա, որը ծածկված է մեծ ու փոքր ծառերով և մացառով։ Այդտեղ այժմ նկատելի են միայն մի տասնյակ զանազան ձևի տապանաքարեր, որոնցից մի մասը բերված է վանքից (մի սյան բուն), մի մասն էլ՝ երևի՝ մոտակա գյուղատեղի գերեզմանոցից (խաչքարեր)։ Թվագիր ունեն միայն հայր Թորոսի (ՌՃԿԱ) և Դուրմիշի որդի Քասպարի տապանաքարերը։ Պարզ է, որ սա վանքի հին գերեզմանատունը չէ, այլ ավելի նոր ժամանակի՝ 17—18-րդ դարերի։ Թե վանքը հնում իր հատուկ գերեզմանատունն է ունեցել, այդ մասին կասկած լինել չի կարող, սակայն դրա տեղն այժմ հայտնի չէ։ Հավանաբար այդ գերեզմանատան տապանաքարերը քանդել և ողտագործել են, վանքի թափված և քանդած քարերի հետ միասին, ինչպես և վանքի բակում, թերևս և ժամատան մեջ եղած տապանաքարերը։ Վերջիններիս մասին որոշ հիշատակություններ կան նաև վիմագրությունների մեջ, օրինակ № № 3 և 11 արձանագրություններում։ Այժմ վանքի բակում և ժամատանը որևէ տապանաքար չի նկատվում։

Ը. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՔ

«Մակարավանք» անունը հիշատակում է 13-րդ դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցին։ Պատմելով Գոշավանքի հնագույն եկեղեցու շինությունն ավարտելու և այդ առթիվ եղած տոնակատարությանը մասնակցող ժամանակի ականավոր մարդկանց մասին, պատմիչը հիշատակում է, որ Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզու խաթունը, իր աղջիկների հետ, այծի փափուկ մազից (երևի դֆթիկից) մի դեղեցիկ, ասեղնագործ, նվաբազարդ վարագույր է գործում և նվիրում Գոշավանքին, և վերջն ավելացնում է. «...և ոչ միայն այս եկեղեցոյս արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց, Հաղբատայ և Մակարավանից և Դատի վանից»[1]։

Վանքի բազմաթիվ վիմագրությունների մեջ միայն մեկ տեղում, մեր № 7-ի տակ դրված, Աշոտի (Վասակի և Հասանի եղբայր) նվիրատվական արձանագրության մեջ է հիշվում «Մակարավանք» անունը։ Մնացած արձանագրությունների մեջ հաճախ հիշվում են «եկեղեցի», «ուխտ» բառերը, և միայն 19 արձանագրություններ մեջ հիշատակված է «Աստվածածին» անունը։ Այդ 19 արձանագրություններից 6 հատը փորագրված են Մեծ եկեղեցու, իսկ 13-ը՝ ժամատան պատերին, որից պետք է եզրակացնել, որ այդ անունը հատուկ չէ հուշարձաններից որևէ մեկին, այլ հավաքական, ընդհանուր է հուշարձանների խմբի՝ վանքի համար։ Հավանական է, որ վանքի հիմնադրման, սկզբնական շրջանում «Աստվածածին» կոչված լինի Հին եկեղեցին և հետագայում այդ անունը փոխանցվել է ամբողջ վանքին։

Նկատի ունենալով, որ Մակարավանքի հուշարձաններն առանձին հատուկ անուններ չունեն, կամ եթե ունեցել են՝ մեզ չեն հասել, վանքի երեք եկեղեցիները մեկը մյուսից տարբերելու նպատակով, դրվել են ածել Հին, Մեծ և Փոքր բառերը, իբրև հատուկ անուններ։

(Շարունակելի)

1. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910 թ., էջ 204։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՐՀԵՐԸ

Հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողներին հայտնի է, որ 13-րդ դարու սկիզբը (1201 թ.) Խաղբակյան Վասակ իշխանը, իր երեք որդիների՝ Պապագի, Մկրտիի և քաջն Պռոշի հետ միասին Խաչենից գալով, քաջաբար աջակցած է Վրաստանի Թամար թագուհու թագավորության զարդն եղող երկու հայ զորապետների՝ Զաքարիա և Իվանեի Զաքարյան եղբայրների իշխանության Հայաստանում տարածման աշխատանքին, դրավելով Բջնին, Եղեգյաց ձորի ամրոցներից սկսյալ մինչև Վայոց ձորը և այլն, ու այդ ծառայությունների որպես վարձատրություն, նշանակված է հոդմնապահ կամ կոդմնակալ (կառավարիչ)։

Ըստ Ստեփանոս Օրբելյանի, Վայոց ձորի վրա՝ Խաղբակյան Վասակի և Սյունյաց աշխարհի վրա՝ Օրբելյան Լիպարիտի կոդմնակալությունները նշանակվել են (1203—1210 թվականների միջև) Թամար թագուհու որդին, գահակիցը, ապա հաջորդը Գեորգի Լաշայի և աթաբեկ Իվանեի համատեղ որոշմամբ. «...Եւ կացուցանեն թագաւորն Լաշայ և աթաբեկն Իւանէ զԼիպարիան կոդմնակալ այսմ աշխարհի (Սյունյաց։— Մ. Հ.), նմանապէս զմիւս իշխանն, զամենաոգեհնեալն զՎասակ Խաչենեցի, զհայրն քրիստոսասէր և բարեպաշտ պարոնին Պռոշայ, կացուցանեն կոդմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»։

Սյունյաց աշխարհում և Վայոց ձորում հաստատված Օրբելյանց և Խաղբակյանց կամ Պռոշյանց կոդմնակալությունները անտարակույս ունեցել են իրենց սեփական սպարապետները կամ զորապետները, որոնց սահմանավակ կշխանությունը տարածվում էր իրենց սեփական հոգերի վրա։ Համաձայն Վարդաշենի եկեղեցու արվեստանոցի հիշատակարանի, որն արտագրել է ավել Գարեգին Հովսեփյան արքեպիսկոպոսը (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), Վայոց ձորի Հերհեր գյուղում և շրջակայքում իշխել է Շահուռնեցի Ամադին, «անիզգակակալ և կորովածիդ սպարապետ ի դրան թագաւորաշուք իշխանաց Բուրթելին (Օրբելյան) և Վախախին»։

Հստակ երևում է տրիմն, որ «Հերհեր» անունը կապ չունի ո՛չ Պարսկահայքի Ներ գավառի կենտրոն՝ Հեր (այժմյան Խոյ) քաղաքի հետ, որի մոտ, Նվարսակ գյուղում, 484 թվականին կնքվեց Հայաստանի ներքին ինքնուրույնությունն ապահովող հաշտության պայմանագիրը՝ պարսկական արքունիքի բանբեր Նիխոր զորավարի և Պարսկաստանի տիրակալության դեմ հայկական հաղթական ապստամբությունների ոգեշնչող և դեկավար Վահան Մամիկոնյանի միջև, և ո՛չ էլ Հարք գավառի Հերյան գյուղի հետ, ուր ծնվել է 6-րդ դարի երևելի փիլիսոփա Դավիթ Անհաղթը։

Համոզիչ չէ նաև Հերհերի բնակիչների այն փաստարկությունը, թե «Հերհ» նշանակում է «քարայր», ուստի և գյուղը կոչվել է «Հերհերհ», ելնելով այն իրողությունից, որ գյուղում կան շատ քարայրներ։ Արդարև, բացի մերձակա բլուրներից, հենց մշակված այգիներում դտնվում են բազմաթիվ ստորերկրյա անձավներ, ըստ գյուղացիների «գիհհաններ», որոնք գործ են ածվում որպես սառցարան։ Գյուղի և շրջակայքի այլևայլ վայրերում, քայլած կամ դետինը դոփած ժամանակ հո-

ղի տակից լսելի եղած դմբդմբոցներն էլ, հավանաբար, ոչ շատ հեռավոր անցյալում Վայոց ձորի այդ անկյունում տեղի ունեցած երկրի ներքին ու արտաքին բախումներից գոյացած, բայց դեռևս փակ դատարկությունների, այսինքն՝ քարայրների՝ առկայության նշաններն են։

Դալիկ թափից և Կարմրաշենից մինչև Ավյուղ իջնող գոգ հովտի ամբողջ երկայնությամբ, երբեմն անդնդախոր ձորերի միջից արագ-արագ (գյուղի այժմյան ջրաղացի մոտիկ), երբեմն էլ ստվերախիտ ուռենիների տակից դաշտավայրի համապատասխան հանդարտությամբ (Բուլախլարի և Առինջի առջև) հոսում և Արևելյան Արփա գետի մեջ է թափվում Երեր գետակը, որի աջափնյա գյուղը կոչվել է Երերան (Հերհեր), արդյո՞ք այն պատճառով, որ այս հողամասը գտնվելով Դալիկ թափ (ծակ գագաթ) հրաբխի անմիջական փեշերում, հաճախադեպ գետնաշարժերի, ասենք «երերումների հետևանքով ունեցել է միշտ «երերուն» վիճակ, ուստի և շրջանը կոչվել է Երերույք, գետակը՝ Երեր, գյուղը՝ Երեր(ան), հուսկ ուրեմն ի տարի կրկնակի ներմուծումով՝ Հերհեր։ «Հ» տառի ներմուծման ներևույթի խոսուն փաստ է այն, թե՝ հերհերցիք երբեք գործ չեն ածում Հայաստանի տարբեր գյուղերում գործածված գավառատարբերակային «խի՞» բառը և ոչ էլ նրա համապատասխան գրական «ինչո՞ւ» բառը։ Նրանք «ինչո՞ւ» նշանակող գրաբար «էՀ» բառի առջև զետեղում են ի տարը և ասում են, օրինակ, «Հե՞ր ես խփում», «Հե՞ր ես բղավում, ա՛յ տղա», «Հե՞ր ես ծիղաղում», և այլն։

Նորագույն հրատարակություններից ո՛չ Բ. Ն. Առաքելյանի և Ա. Բ. Հովհաննիսյանի խմբագրած «Հայ ժողովրդի պատմություն»-ում, ո՛չ Թ. Խ. Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրություն»-ում և ո՛չ էլ Մարիետտա Շահինյանի «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» գրքում, որ «Հայոց ձոր» վերնագրով հատուկ մաս էլ ունի, ո՛չ մի հիշատակություն չկա Վայոց ձորի Հերհերի մասին։

Ընդգծում եմ Վայոց ձորի Հերհերը, որովհետև Սովետական Հայաստանում կա մի ուրիշ «Հերհեր» ևս, Ստեփանավանի հարավում, Պուշկինի լեռնանցքի մոտ (2.038 մ.), որտեղով մի ժամանակ անցել է մեծ բանաստեղծ Պուշկինը։ Մեզ թվում է, սակայն, որ վերջինս պետք է գրվի Գառգառ կամ Գեռգեռ ձևով, ինչպես նրա մոտակա վտակը գրվում է՝ Գառգառ։ Ռուսերենով և՛ Հերհերը, և՛ Գեռգեռը գրվում են միևնույն ուղղագրությամբ՝ Гергер։

Հայոնի ճատարապետ Թ. Թորամանյանի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» Բ. ժողովածուի Ն 127 էջում հիշատակված Երերույքն էլ կապ չունի Վայոց ձորի Երերի կամ Հերհերի հետ, գտնվելով Անի կայարանից մի կիլոմետր հեռու, Անի-Պեմզայի կից։

Հերհերի մասին հինգ տեղ հիշատակություն ենք գտնում Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի 1928 թվականին Վաղարշապատում հրատարակված «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» պատմա-հնագիտական ուսումնասիրությունում, այսպես.

ա) 21-րդ սյունակում. Ըստ Վարդաշենի ավետարանի հիշատակարանի՝ «Շահուռնեցի Ամադին, որ իշխում էր Վայոց ձորի Հերհեր գյուղում և շրջակայքում...»։

բ) 43-րդ սյունակում. «Արկղունյաց սարից (Թաքյաղոնդարան) դեպի արևելահարավ, Արկազից մոտ տասն վերստ հեռու, գտնվում է Դալիկ գագաթը, և սրա հարավ-արևելյան փեշերի վրա Հերհեր ավանը, որ յուր շրջակայքով, արձանագրություններին և Վարդաշենում պահված մի ավետարանի հիշատակարանի համաձայն, Շահուռնեցոց սեփականությունն էր...»։

գ) 44-րդ սյունակում. «Շահուռնեցիք իշխում էին ըստ հիշատակարանի, բացի Հերհերից (Երերան) և նույն տեղի վանքից, որ գտնվում է գյուղից դեպի հյուսիս, նաև «Քալատակին և այլ հայրենեաց»։ Թեպետ այս վերջին տեղերն անհայտ են և անորոշ, բայց պարզ է, որ ընդարձակ չէր այն և ամփոփված էր Հերհեր վտակի հովտում, այն էլ ոչ ամբողջովին։ Պռոշյանց սահմաններն, ուրեմն ձգվում էին Արկազից էլ դեպի արևելք մինչև Դալիկ թափայի և Հերհերի ջրաբաշխ կազմող բլուրների արևմտյան փեշերը, իջնելով մինչև Արփայի ափերը...»։

դ) 117-րդ սյունակի ծանոթության բաժնում. «Գիմրեթի վերա կամ Եկեղեցու ճակատին շինության թվականը նշանակելու սովորությունը հազվագյուտ չէ մեր եկեղեցական ճարտարապետության մեջ՝ միջին դարերում, ինչպես Վայոց ձորում Սպիտակավոր Աստվածածնի արևմտյան ճակատին ՉՀ. որ գարձյալ Պռոշյանների շինք է. Հերհերի նորագույն մատրան արևմտյան ճակատին ՉԼԱ, Շահուռնեցի իշխանների գործ. Կոտայքի Գյոգ քիլիսայի արևմտյան ճակատին ՉԼԸ»։

ե) 178-րդ սյունակում. «...Հերհերի, Վայոց ձորում, դուրգ մատուռներից մեկի լուսամուտի գլխին քանդակված է արծիվ, մաքիլների մեջ գարձյալ խոյ բռնած. շինքը

շինված է ՉԼԱ=1282 թվին և Շուշանիկյանց իշխանական տոհմի սեփականությունն էր...»

Մեզ ծանոթ չէ, թե ինչո՞ւ հմուտ բանասեր Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը չի նկարագրել Վայոց ձորի այս անկյունում հիշատակված վանքերն ու վայրերը և լուռ է անցել այնտեղ գոյություն ունեցող մեկից ավելի պատմական հուշարձանների վրայից։

2. ՀԵՐՀԵՐԻ ՎԱՆՔԸ ԵՎ ԴՅՈՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինչպես երևում է վերևում գրվածներից, Հովսեփյան արքեպիսկոպոսը «Զույգ մատուռ» է անվանում Հերհերի վանքը։ Արդարև, այդ որակումը համընկնում է Հերհերի և շրջակայքի հայ և թյուրք բնակիչների կողմից վանքիս տրված Ղոշավանք անվանումը։ Ադրբեջաներեն «զոշա» նշանակելով «զույգ», Ղոշավանքն էլ կլինի բանասեր հեղինակի հիշած «Զույգ մատուռը»։ Սակայն, Հերհերի Ղոշավանքը չպետք է շփոթել ո՛չ 12—13-րդ դարի մատենագիր Մխիթար Գոշի (1130—1213 թ. թ.) անվան Գոշավանքի (Նոր Գետիկի) հետ, որի հոյակապ ավերակները գտնվում են Դիլիջանի մոտ, ո՛չ «Կոշա սբ. ուխտի» հետ, որ գտնվում է Արագածոտն գավառի Կուաշ կամ Կոշ գյուղի մոտ, ո՛չ էլ Ախուրյանի ձախ ափին, Հոռոմոս վանքի մերձակա Կարմիր վանք գյուղի Ղոշավանքի հետ։

Հերհերի Ղոշավանքը բաղկացած է հարակից երեք կառույցներից՝ երկու մատուռներից և մեկ ավանդատնից, որի կտուրն ավելի ցածր է և զուրկ՝ երկու մատուռների կտուրները շրջապատող գեղեցիկ կորնեզներից։ Այդ երեք կառույցներն էլ ներկայումս ունեն միայն մեկ արտաքին դուռ, բայց ներսից իրար հետ հարաբերվում են ցածրակեկ երկու դռներով։ Ցուրաքանչյուր մատուռ ունի իրեն հատուկ խորանը՝ շատ նեղ լուսամուտով, իսկ ավանդատնում գտնվում է շրամքարը։ Կամարակապ այս կառույցների ներսում, որտեղ հալիվ մի բուռ լույս կարողանում է սպրդել նեղ լուսամուտներից, ժամանակից սևացած պատերի և առաստաղների վրա դուք չեք տեսնի ո՛չ մի զարդաքանդակ, ո՛չ մի փորագրություն, մինչդեռ հատկապես հարավային մատուռն արտաքին պատերը, կառուցված սրբատաշ անշաղախ քարերով, ո՛չ միայն կրում են խաչանշաններ և արձանագրություններ, այլև արևմտյան պատի վրա բացված միակ դռան վերև գտնվում է հիանալի արվեստով քանդակված մի թևարաց և սրարիդ արծիվ, մափիների մեջ բռնած մի զգեստված խոյի։ Թռչունի թևերի և մափիների քովնտի դեմ առ դեմ համադրվել են Թ և Զ, Լ և Ա տառերը, որոնք ցույց են տալիս շենքի շինության թվականը՝ ՉԼԱ=731+551=1282 թ.։ Դարձյալ այս մատուռն հարավային պատի վրա, բարձրում, տեսնվում է արևի ժամացույցը, իսկ ներքևում, զանազանագույն քարերի վրա, մի երկարապատում երկաթագիր ու խորաքանդակ արձանագրություն։

Մեզ համար անհասկանալի է, թե ինչո՞ւ Հովսեփյան արքեպիսկոպոսը «նորագույն» է նկատել այս մատուռը, որ իր ճակատում կրում է վերոհիշյալ արձվաքանդակը, շինության թվականով, պատերի վրա արձանագրություններ և արևի ժամացույցը՝ հայերեն տառերի թվանշությամբ և վերջապես, այդ կառույցների միջև հնագույնը լինելու բոլոր երևույթները՝ իր ճարտարապետական ոճով, սրբատաշ քարերի անշաղախ գործածությամբ, կտուրը ծածկող շերտաքարերի վարդեռ ադուցմամբ և այլն։ «Նորագույն» կարելի է նկատել ավանդատունն ու հյուսիսային մատուռը, որ ո՛չ շուք ունի, ո՛չ արձանագրություն, ո՛չ խաչանշան և ո՛չ էլ որևէ քանդակ, որի արևմտյան և արևելյան պատերը (հյուսիսային և հարավային պատերը՝ ավանդատան և հարավային մատուռն հետ հասարակաց են) դատելով սև ու կոշտ քարերի անարվեստ շարվածքից և սպիտակ կրաշաղախի գործածությունից, հավանաբար կառուցվել են կամ նորոգվել նորագույն ժամանակներում, բայց նրա ևս կտուրի ծածկն ու կտուրի կորնեզները պահում են իրենց համաչափությունն ու համանմանությունը հարավային մատուռն կտուրի և կորնեզների հետ։ Արդյո՞ք այդ պատերը մերկացվել են իրենց սրբատաշ սկզբնական քարերից՝ հօգուտ այլ շենքերի շինության կամ նորոգության։

Ակնարկված «նորագույն մատուռը» չի կարող լինել նաև Հերհեր գյուղի Աստվածածնի անվան ծխական եկեղեցին, որ ո՛չ միայն չի կառուցված սրբատաշ քարերով, այլև չունի իր ճակատում որևէ արձվաքանդակ և թվական։

Ավանդատան հետ միասին մի ամբողջություն կազմող Զույգ մատուռը կամ Ղոշավանքը կառուցված է երեք վտակի ձախ ափում, Հերհեր գյուղի հյուսիսում, ոչ շատ բարձր մի ապառաժուտ բլուրի վրա, որ համարյա ողողվել է վերոհիշյալ եռյակ, բայց միաձուլված շենքերով և արևմուտքից ու հյուսիսից նրանց շրջապատող շիրիմներով։ Բլրակի անմիջական արևելքն ու հարավը զա-

հավեժ ձորակներ են։ Արևմտակողմն էլ, որպես շիրմաստան գործ ածված փոքր տարածությունից հետո գահավեժ ապառաժ է, որի տակից անցնում են Իրերի մշտակարկաչ ջրերը՝ դեպի հարավ-արևելք շրջանակելով և հրվանդանի ձև տալով սրբավայրին և ապա արագ սահելով դեպի գյուղի ջրաղացն իջնող անդնդախոր ձորի մեջ։

Բլրի անմիջական հարավ-արևմտյան փեշում, վտակից հազիվ 4—5 մետր բարձր, այժմ մորենիներով ու բաղեղներով փակված դասի գերեզմանատան մատուռը, որովհետև նա զուրկ է ո՛չ միայն գմբեթից, այլ նաև իշխանանիստ մեծ եկեղեցիների հատուկ ներքին ու արտաքին, ճարտարապետական և գեղարվեստական որևէ պաճուճանքից՝ բացառությամբ վերոհիշյալ արծվաքանդակի։

Ինչ վերաբերում է Հերհերի գյուղական եկեղեցուն, ինչպես վերևում նշվեց, նա չի կարող շատ հին կառուցվածք լինել, որովհետև ո՛չ միայն զուրկ է հայկական եկեղեցիների ճարտարապետական ոճից, գմբեթից, արձանագրություններից և վարդաքանդակներից, այլ նաև կառուցվել է համարյա գյուղի բնակարանների նման սև ու անտաշ քարերով և սպիտակ կրաշաղախով։ Պատերի մեջ նշմարվում են խաչքարերի և տապանաքարերի կտորվանքներ, որոնք որմնադրի կողմից զետեղված են ծուռումուռ դիրքով, առանց նկատի ունենալու գոնե գեղագիտական հարմարությունը։ Գյուղի մուտքում, արտաքինով մի լայնանիստ բնակարանի տեսք ունեցող այս եկեղեցու ամենահետաքրքրքական կետը արևմտյան պատի վրա բացված մեկ հատիկ դռան շրջանակն է, որ



Հերհերի Ս. Սիոն եկեղեցին

մի քարայրի առջևից բխում է սակավաջուր մի սառնորակ աղբյուր, որի ավազանը հավանաբար լինելու է վերևում՝ շիրմաստանի այն հողածածկ փոսում, որտեղ այժմ էլ բուսել են խիտ ջրարույսեր՝ չոր քարապատով իրար միացած երկճյուղ ժայռերի ներքո։

Դատելով այստեղ գտնվող խաչքարերի և գերեզմանաքարերի որակից, կարելի է ենթադրել, որ այս բլրակը եղել է ոչ հասարակ մարդկանց գերեզմանատուն— թերևս Շահունեցոց իշխանական տան և նրան ծառայող եկեղեցականների գերեզմանատունը—իսկ Ղոշավանքը՝ պարզապես այդ բարձրթից, արձանագրություններից և վարդաքանդակներից, այլ նաև կառուցվել է համարյա գյուղի բնակարանների նման սև ու անտաշ քարերով և սպիտակ կրաշաղախով։ Պատերի մեջ նշմարվում են խաչքարերի և տապանաքարերի կտորվանքներ, որոնք որմնադրի կողմից զետեղված են ծուռումուռ դիրքով, առանց նկատի ունենալու գոնե գեղագիտական հարմարությունը։ Գյուղի մուտքում, արտաքինով մի լայնանիստ բնակարանի տեսք ունեցող այս եկեղեցու ամենահետաքրքրքական կետը արևմտյան պատի վրա բացված մեկ հատիկ դռան շրջանակն է, որ

բաղկացած է մեկ և կես մետրից ոչ պակաս երկայնությամբ իրար վրա անարվեստ և անագույշ դրված չորս բազալտ քարերից։ Նրանցից շեմքի և դիտողի աջակողմի քարերը ոչինչ չունեն փորագրված կամ քանդակված իրենց վրա, մինչդեռ վերեի և դիտողի ձախակողմի քարերի վրա կան բարձրաքանդակներ՝ զինվորի, ձիու, երկարաոտ կնոջ, խաղողի ողկույզի, դինու թակույկի, ծնծղայի և այլն։ Մեզ այնպես է թվում, թե այս քարաքանդակները այլ տեղերից բերված առանձնաքարեր են և ներկայացնում նրանց տերերի կենցաղը։ Գարեգին արքեպիսկոպոսը, «Խաղբակյանք կամ Պռոշյանք» ծանոթ ուսումնասիրությունում (սյունակ 47—49) նկարագրում է Վայոց ձորի Մարտիրոս, Դյոմյուր, Ջուլ և Մարաթուա գյուղերի մոտ իր տեսած մի քանի տապանաքար-պատկերաքանդակները և ասում է, թե նրանք մասամբ սիմվոլիկ են, և մասամբ տալիս են ննչեցյալի կյանքը՝ զվարճության և որսորդության տեսարանով։ Այս եկեղեցու դռնառաջի բակի հյուսիսային պատի կողմում գտնվող մի անտաշ քարի վրա կա՝ «Այս է տապան Դաւիթ քահանայ» անորոշ և անավարտ արձանագրությունը՝ զուրկ գեղարվեստական և հնագիտական արժեքից։

3. ԽԱՉԱՐՁԱՆՆԵՐ

Բազմաթիվ խաչարձաններ կան Հերհերի շրջակայքում, ինչպես դեպի Կալմբաշեն բարձրացող և Բուլախլար իջնող ճանապարհների վրա, նույնպես և հենց գյուղի մեջ՝ գյուղսովետի դրասենյակի մոտիկ հրապարակում, մթերային խանութի և եկեղեցու մոտերքում։ Բայց այդ բոլոր խաչարձանների միջև ամենահետաքրքրականն է այն, որ կանգնվել է գյուղի միջից անցնող հեղեղատի վրա կառուցված առժամանակյա կամրջի ձախ կողմում, դեպի Ղոշավանք և դեպի ջրաղաց տանող ճամբի սկիզբը։ Այդ բարձրադիր խաչարձանը, որի ձախակողմում դտնվում է նաև անարվեստ խաչանշաններ կրող երկանաքարի նման մի կլորիկ քար, շուրջանակի ունի արձանագրություն, իսկ կենտրոնական մեծ խաչի կատարի երկու կողմերի վրա խորաքանդակ Թ. Ջ. Լ. Ա. տառերը, ճիշտ ու ճիշտ Ղոշավանքի ճակատի արձվաքանդակի վրա նկատվող միևնույն տառերի համակարգությամբ և համադրությամբ, մի իրողություն, որ ցույց է տալիս, թե վանքի և այս խաչարձանի շինությունը համընկնում է միևնույն թվականին՝ ՉԼԱ=1282։ Արդյո՞ք նա ամրացվել է այն կետում, ցույց տալու համար վանքի երթուղին։ Գյուղացիներ մեզ հավաստեցին, թե Հայաստանի Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեն է, որ վերջերս վերականգնել է այս խաչարձանը իր տեղում, ուր տապալված է եղել պատերազմի տարիներին։

Հետաքրքրական են նաև Հերհերից Բուլախլար իջնող ճանապարհի ձախակողմում, մեկը՝ դեպի ծխախոտի չորանոցն առաջնորդող արահետի սկիզբը, մյուսը՝ ավելի հարավում զուգադիր խաչարձանները, որոնց շրջանակներն ունեն արձանագրություններ՝ այժմ մամոսպատ։ Վերջինների մոտ, ոլոնք տեղացիների բացատրությամբ «Ղոշա խաչ» (գույդ խաչ) են կոչվում, ճամբի եզրում կան երկու քարակուտեր, հետիոտն ճանապարհորդների կողմից իրը «չարը խափանելուս համար գցված քարերից կազմված։ Ղոշա խաչից ավելի հարավ, դարավոր տանձենու մերձակա արտերի մեջ կա նաև մի խոշոր բազալտ քար, որի վրա փորագրվել են պարզ խաչանշաններ, առանց արձանագրության։

4. ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ

ա) Ս. Գեորգ կամ Ջիքի վանք.— Հերհերից դեպի հարավ-արևելք երեք կիլոմետր հեռու, լեռնաշղթայից անջատված մի փոքրատարած սեպ ժայռի կատարին կանգնել է Ս. Գեորգը կամ տեղացիների հորջորջումով Ջիքի վանքը, մի տիպիկ կառուցվածք, որ միանձնակյաց ճգնավորի մենաստանի է նմանում քան միաբանական անապատի, իր գրանիտե երկու քարերից կոփված և չորս ասպիճան ունեցող սանդուղքով, որից կարող է մի մարդ միայն ելումուտ ունենալ մոտ մեկ և կես մետր բարձրություն և 2×2×2 խորանարդ մետր ծավալ ունեցող ներքնաղավթում։ Համարյա գետնահավասար խորանի վրա, արևելքում, կա մի նեղ լուսամուտ, որից ներս թափանցող մի ափ արևի լույսով կարելի է ստուգել, թե կամարակապ առաստաղն ու դարերով վառված մոմերի ծուխերից սևացած պատերը զուրկ են ամեն տեսակ պերճությունից, բացի հյուսիսային և հարավային պատերի երկու որմախորշերից և գոնառաջի կարճառոտ արձանագրությունից։ Արևմտյան արտաքին ճակատում, միակ դռան վերև, դտնվում է բուն արձանագրությունը

«Սրբոյն Գէորգայ զորավարին» մակագրությամբ՝ երկու աղավնակերպ թռչունների միջև փորագրված խաչով։

Ս. Գեորգը կառուցված է սրբատաշ զանգվածեղ քարերով։ Տանիքը ծածկված է տաշված, միաձույլ, գեղարվեստորեն ագուցված երկայն շերտաքարերով։ Ճարտարապետը մեծապանգված և միաձույլ քարերով ծածկրված արևմտյան ճակատի դոնաքիվն (auvent) է, որի տակ կարելի է պաշտպանվել արևից ու անձրևից, ինչպես պաշտպանվել են սանդուղքը, դուռը, արձանագրությունը և մի քանի չարդված խաչքարերը, որոնց վրա անպակաս է որպես մատաղ մորթված

Հերեերի Սպիտակավոր Աստվածածին վանքի դարբասը

պետք չի տեսել հիմք փորել. սրբատաշ քարերը անշաղախ դրել է իրար վրա՝ օգտագործելով խարսխի ապառաժի դրվածքը, այնպես, որ մինչ արևելակողմում և հյուսիսակողմում պատերի բարձրությունը մի մետր է, հարավում և արևմուտքում հասել է կրկնապատկին։ Ամենահետաքրքրականը երեք աքլորների արյան հետքը։ Գյուղացիների ասելով, այս վայրը ուխտատեղի է եղել այն պատճառով, որ հողն ունեցել է իրր բուժիչ հատկություն չիք (ուրականություն) հիվանդության դեմ, ուստի և իր անունը՝ Չիրի վանք։ Հավանարար դեպի մենաստան տանող արահետի վրա բիսած սակավաջուր աղ-

բյուրից է, որ օգտվում էր Ս. Գեորգի մենակյացը, ինչպես այժմ օգտվում են այնտեղ այցելողները։

Կանգնելով սրբավայրի դռնաքիվի տակ, դիտողը լիուլի կարող է վայելել Երերի հովտի համայնապատկերի գեղեցկությունը և մտածել, թե արդյո՞ք մենաստանիս շինության հետ կապ ունեն այն զույգ խաչարձանները (Ղոշա խաչ), որոնք գահավեժ ստորոտից գլգլուն սահող վտակի աջ ափում, արևմտյան դաշտավայրում, երկրաչափական ուղիղ գծի վրա են գտնվում նրա հետ, ինչպես նաև Կարակոլխանա (պահակատուն) կոչված բարձրաբերձ ժայռերը, նույն ուղիղ գծի վրա, ճիշտ արևելքում։

բ) Կարակոլ (պահակ) ժայռեր.— Ինչպես կռահվում է նաև անունից, Կարակոլխանա կամ Կարակոլ (պահակատուն կամ պահակ) ժայռերը անպայման դեր ունեցած կլինեն անցյալում՝ Հերհերի պաշտպանության կռիվներում, որպես ամուր դիտարան, որովհետև նրանք բարձրից հսկում են ոչ միայն Երեր վտակի ամբողջ հովտի, այլև շրջակա սարահարթերի և ձորահովիտների վրա։ Այդ ժայռերի մոտակա անտառում է, որ հայ որսորդներ մի տարի առաջ սպանել են մի հովազի, հաստատելով այն, թե Հերհերի արևվելյան լեռներում ու անտառներում, բացի քարայծերից, աղվեսներից, շնագայլերից, գայլերից և արջերից, ապրում են նաև դեղամորթի հովազներ։ Ալպյան հրաշալի արոտավայրերի զոնաներից ցածր գտնվող այդ անտառներում, եղևնիների և կաղնիների կողքին առատորեն աճում են վայրի խնձորենին, տանձենին, մամխենին, ալոչենին և այլն։

գ) Քալուխտ կամ Կապտաբերդ.— Հերհերի բնակիչների հորջորջմամբ Քալուխտ է կոչվում այն եկեղեցակերպ ավերակը, որ գտնվում է գյուղի հարավ-արևելքում, հազիվ երկու կիլոմետր հեռու, Երեր վտակի ձախ ափից վեր։ Հայկական գերեզմանատան հանդիպակացիր մի անառիկ բարձրության վրա։ Հեռվից միաձույլ ժայռակույտի նման է այդ բարձունքը, այնքան աննշան է այդ ավերակը, բայց իրականում այնտեղ եղել է մի բերդ,— արդյո՞ք Շահուռնեցի իշխանական տան ղղյակը,— որի ապացույցն են պարիսպների մնացորդներն ու այն ստորերկրյա գետնուղին, որ սեղացիների սեելով, իջնում, հասնում է մինչև վտակի ջրերը։ Մի ավանդության համաձայն, հալանաբար տաճկական արշավանքների ժամանակ, շրջակա հայերը ապաստանել են այս բերդի մեջ, բայց մատնվել ու ջարդվել մի երեխայի բարձրաձայն լացի պատճառով։

Ըստ Հերհերի բնակիչներից Խաչո Հովհաննիսյանի, Քալուխտը ի հնումն կոչվել է նաև Կապույտ բերդ կամ Կապտաբերդ։ Հայ ժողովրդի պատմության մեջ հիշվում է մի Կապույտ բերդ, Կաղզվանի մոտ, Արշարունյաց գավառում, որտեղ Բագրատունի Սմբատ Ա.-ը դերի ընկավ Ատրպատականի արաբ էմիր Յուսուֆի ձեռքը և 914 թվականին Երնջակի մոտ տանջահար սպանվելուց հետո, Դվինում, խաչի վրա դամված վիճակով ցուցադրվեց՝ բնակչության վրա սարսափ տարածելու դիտավորությամբ։

«Քալուխտ» նշանակում է «Քալայի ուխտ», այսինքն «Կալայի կամ Բերդի ուխտ», ուր ստորոտում, Երեր վտակի ձախ ափի վրա, մրգաշատ պարտեզներ և խաղողի այգիներ պարունակող տարածությունը կոչվում է Քալա դերեսի (Բերդաձոր) կամ Քալա դիրի, այսինքն՝ Քալատակ։ Արդյո՞ք հանդգնություն կլինի ասել, թե ըստ Վարդաշենի ավետարանի հիշատակարանի, Շահուռնեցոց սեփականության մաս կազմած և Հովսեփյան արքեպիսկոպոսի կողմից «անհայտ և անորոշ» նկատված «Քալատակի և այլ հայրենեաց» վայրերը հենց այն հողերն են, որոնք տարածվում են Քալուխտի առջև, վտակի աջ և ձախ ափերի վրա, մինչև Բուլախլար, Առինջ և Ավլուղ։ Հասկանալի է, որ վերոհիշյալ Քալատակը չէ այն անմատչելի Քեղվա բերդը, այժմ Ղալաստիրի (Բերդատակ) կոչված, ուր ապաստանվեց Զաքարյան Իվանե աթաբեկը Ջալալեդդինի կողմից Գառնիի մոտ պարտվելուց հետո և ուր, ըստ Հովհաննես կաթողիկոսի, Գեորգ Մարզպետունին ջախջախեց բերդը պաշարող արաբ ոստիկան Թեշիրի ուժերը՝ հալածելով նրանց մինչև Դվին։

Ուշադրավ է այն, որ Քարուխտը կամ Կապտաբերդը, նրա հազիվ հարյուր մետր հյուսիսում արձանագրություն կրող քարը, հարավում Ս. Գեորգը և հյուսիսում Հերհերի Ղոշավանքը՝ գտնվում են նույն ուղիղ գծի վրա՝ Երեր վտակի ձախ ափում։

դ) Բուլախլար (Աղբյուրներ), Առինջ և Ավլուղ.— Բուլախլարը գտնվում է Հերհերից հինգ կիլոմետր հարավում և իր անունն առել՝ երբից ավելի ուղիղանահոս աղբյուրներից, որոնց սառն ու զուլալ ջրերը համարյա անմիջապես թափվում են Երեր գետի վտակի մեջ՝ կյանք տալուց հետո առատ բուսականության։

Այս աղբյուրներից հազիվ հինգ հարյուր մետր հարավում, Երերի աջ ափին կից, հայտնաբերվել են հանքային ջրի երկու առատաբուխ ակեր, որոնց ջրերը թեև տաք չեն ինչպես Ջերմուկի (Իստի-սուի) հանքային ջրերը, բայց ըստ կուրորտոլոգների, ունեն բուժիչ հատկություն։ Հանքային ջրերի ուրիշ ակեր հայտնաբերվել են նաև Հերհեր գյուղի մոտակա վայրերում՝ նույնպես Երերի ափին։

Բուլախլարի դեպի հարավ շարունակությունն է Առինջ գյուղը, որի մոտ Երերը դառնում է ավելի հեզասահ, ձկնորսության թույլատու՝ ջրերի վրա առկախ ուռենիներով և ափում՝ մարգաշատ պուրակներով։

Հասկանալի է, որ այս Առինջը կապ չունի Կոտայքի Առինջ գյուղի հետ, ուր կա հավանաբար ուրարտական վերջին շրջանների գործ մի բերդ, որի դռան կամարակապ քարի վիշապաքանդակները հիշեցնում են Հայեպի միջնաբերդի դռան ճակատի քանդակը։ Վայրց ձորի այս Առինջից տարբեր լինելու է նաև այն Առինջը, որի մասին այսպիսի մի հիշատակություն ենք հանդիպում Հովսեփյան Գարեգին արքեպիսկոպոսի «Խաղբակյանը կամ Պռոշյանքը» գրքի 53-րդ սյունակի ծանոթության բաժնում. «Ամբողջ Շահապունիքը, բացի Նոր Մազրայից, Ղարաբաթայից և Առինջից, բոլորը խաների սեփականություն էին՝ 28 գյուղ թյուրք և 7 հայ։ Մեր հիշած Առինջը շատ հեռու է Շահապունյաց դավառից, որի կենտրոնն եղող Շահապավանք ամրոցում փակված, ականատես լինելուց հետո Լանկթիմուրի արշավանքին, հավանորեն գրի առել է Գրիգոր Տաթևացին իր «Հարցմունք Գէորգ վարդապետի և լուծմունք Գրիգորի» աշխատության հիշատակարանը։

Ինչ վերաբերում է Ավյուղի, սա եզրասահմանն է հյուսիսից՝ Կարմրաշենից ուղիղ հարավ իջնող Երեր վտակի հովտին, Արևելյան Արփայի ափում, Միկոյան—Ջերմուկ խճուղու վրա, Ջալքենդի կամուրջը չհասած։ Այստեղից է, որ մայր խճուղուց դեպի ձախ բաժանվելով, բարձրանում է դեպի Առինջ, Բուլախլար, Հերհեր, Վարդաշեն, Դալիկ սար տանող ոլորապտույտ ճանապարհը։

Նկատի ունենալով, որ Երերի ոլ մեծ հովտի ծայրագույն հարավային բերանը գրավող Արևելյան Արփայի առափնյա այս հողամասը այժմ էլ մշակվում է Հերհերի կոլտնտեսության կողմից, կարելի է ենթադրել, թե Հերհերում իշխող Շահուռնեցոց տան սեփականությունը տարածվում էր Կարմրաշենից մինչև Ավյուղ և «անհայտ ու անորոշ» նկատված «Քայատուի և այլ հայրենեաց» բացատրությամբ հասկանալի է այդ երկու կետերի միջև ընկած Երերի հովիտը, որ հազիվ քսան կիլոմետր երկարություն ունի։

ե) Կարմրաշեն.— Հերհերից վեց կիլոմետր հեռու հյուսիսում, Երերույթի հովտի հյուսիսային բերանը գրավում է Կարմրաշեն գյուղը, որի մոտ Երեր գետակին միանում են Կենդարա վտակի և հյուսիս-արևելյան ձորերից իջնող ուրիշ աղբյուրների և հեղեղատների ջրերը, որոնց ակունքները մոտենում են Արևելյան Արփա գետի օժանդակ Դալի (գիժ) վտակի ակունքին։ Կարմրաշենի մոտակա են Գյուղարաց և Սնդուկլի կոչված վայրերը, որտեղ եղել են արձանագրություն կրող խաչքարերի և այլ հնությունների մնացորդներ։ Կարմրաշեն—Դալիկ Թեփե ճանապարհից քիչ դուրս, աջակողմյան մի հարթավայրում, Դալիկ Թեփեի հարավ-արևելյան փեշերից բխում է մի հիանալի ջուր, որ դուրս ժայթքած առատ ավազների պատճառով կոչվում է Ավազաղբյուր (Ղումլու բուլախ)։ Տեղի բնակիչներ պետք է պարտադիր ուշադրություն դարձնեն, եթե ցրտադիմացկուն ծառերի մի պուրակ տնկվեր ու պահպանվեր՝ այստեղ ջուր խմելու եկող նախիրների հավանական տրորումներից։

զ) Դալիկ կամ Դալի բեփե.— Հերհերի շրջակայքի ամենահետաքրքրական վայրերից մեկն է Դալիկ Թեփեն կամ Դալի Թեփեն։ Թե՛ Դալիկ (ծակ) և թե՛ Դալի (գիժ) հոդակապումը պատշաճում է այս սարին, որովհետև նա ունի ծակ գագաթ, անցյալում լինելով մի դիտ հրաբուխ, որի թողած հետքերը դեռևս մնում են հստակորեն տեսանելի՝ Հերհերից մինչև Մոզ ավան, Մալիշկայի մոտ, Արփայի աջ ափում։

«Այս շրջանումն է, Արփային մոտ,—գրում է Գարեգին արքեպիսկոպոսը,— Դալիկ Թեփեի հրաբուխի լավաներով ծածկված բյուրների եղրասահմանում, անվանի Մոզը, Ստեփանոս Սյունեցու նահատակության վայրը։ Մոզը՝ ավերակներին նայելով՝ բավական ընդարձակ ավան է եղել, բայց հնության մնացորդները և արձանագրություններ չեն դտնրված, բացի հյուսիսային ձորագագում մի քանի խաչարձաններից»։

Ինչպես հայտնի է, 735 թվականին, Մոզում, մի կնոջ ձեռքով սպանվել է առաջին երաժիշտ հայ կնոջ՝ Սահակդուխտի եղբայրը, 8-րդ դարի քերականագետ մատենագիր և նշանավոր եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցին, հեղինակ 20-ից ավելի թարգմանական և ինքնուրույն երկասիրությունների, ինչպես հույների Գերմանոս պատրիարքին և Անտիոքի պատրիարքին՝ Դավիթ Ա. Կաթողիկոսի հրամանով գրած թղթերը, պաշտպանելով Հայոց Եկեղեցու դավանությունը, ձիսական ավանդությունները ու տոնախմբությունները և վճռականապես մերժելով հույների պահանջը՝ Քաղկեդոնի ժողովի որոշումներին

հպատակելու մասին։ Նրա նշխարները ամփոփվել են Մոզից ոչ շատ հեռու, ներկայումս Մալիշկա ավանի հյուսիսում գտնվող Արկազի Ս. Խաչ վանքի մոտերքը, այժմ Դարավանք (Քարեվանք) կոչված Թանահատի (Վայոց ձորի, ոչ թե Սյունիքի նույնանուն) վանքում։ Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, նկարագրելով Սյունեցու մահն ու թաղումը Թանահատի վանքում, ավելացնում է. «Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի, զոր յետոյ ի ՉԻԸ (728 + 551 = 1278) թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ, գեղեցիկ յօրինուածովք, և եդին զտապան սրբոյն ի նորա»։ Այդ տաճարը ծանոթ է «Գերեզման Ս. Ստեփանոսի» անունով։

Ըստ պատմիչների, Ստեփանոս Սյունեցու նահատակությունից քիչ հետո, նույն 735 թվականին, Վայոց ձորում տեղի ունեցած մի աղետաբեր երկրաշարժի հետևանքով, իբր երկնային պատիժ կործանվել է Մոզը իր 10.000 բնակիչներով։ Ելնելով այն իրողությունից, որ Մոզը ծածկվել է լավայով և հրաբխային քարերով, կարելի է ենթադրել, թե նրա կործանումն առաջացնող երկրաշարժի ակունքը գտնվում էր հենց Դալիկ թեփի հրաբուխում, որի գագաթից, հարավ-արևմուտքում որոշակի երևում են Մոզը, Մալիշկան և Միկոյանը, իսկ հարավ-արևելքում համայնապատկերը լայնորեն երկարաձգվում է Երևանից մինչև Աղատեկ, Աղիդրեկով, Գյումյուր, Ջուլ և Պառչլանց երկրորդ կենտրոնն եղող Մարտիրոս գյուղը, ուր գտնվում են Գեղարդի (Այրիվանքի) վանքի նմանությամբ վիմափոր եկեղեցիները՝ կառուցված Մատթեոս վարդապետի ձեռամբ, 1286 թվականին։

Հետաքրքիր է Դալիկ թեփե հրաբխի խառնարան-հրաբերանը։ Դիտորդին այնպես է թվում, թե սկզբում այս գագաթը եղել է սարահարթ և հանկարծ, մի սարսափելի օր, երկրի ներքին և արտաքին ուժերի բախման ժամանակ, այդ սարահարթը դեպի լեռան արգանդը քաշվելով, կազմած է այս հսկա ձագարը, որի կենտրոնական մասում բացված ծակերից դուրս են ժայթքել մինչև Մոզ իջած լավաները, քարերը, հրափոշիները։ Հրաբերանում կուտակված մոխրածածկ քարերը այժմ էլ հրաբորբոք տեսք ունեն և կարծես կրակը շարունակում է դանդաղորեն լարձրանալ ձագարի արևելյան և արևմտյան կողերն ի վեր։

Դալիկ թեփե բարձրանալու ամենահեշտ ուղին, արևմտյան արտերի միջով Դոշա թեփեի (զույգ գագաթի) զուգահեռ բարձրացող արահետն է, որ գագաթ հասնելով իջնում է ձագարի արևմտյան ներքին փեշով, մինչև հյուսիսային փեշի վրա գտնվող վանքը։ Այս շենքը «վանք» կոչվելու արժանի ոչինչ չունի։ Պատերը կառուցված են հրաբխային սև քարերով՝ անտաշ ու անարվեստ։ Տանիքը ծածկված է հաստ գերանների վրա կուտակված հողով։ Ո՛չ մեկ հին արձանագրություն. հղածները նորագույն այցելուների դանակով կամ այլ գործիքներով փորագրած անունների են։ Մի ջարդված խաչքարի վրա այցելուներ մոմ են վառում, թերևս այն հավատով, որ պեսգի Գիժ (Դալի) սարը նոր գժություններ չանի...։ Ուխտատեղիից իջնող արահետը ուղևորին տանում է դեպի խառնարանի կենտրոնը բրգացած մի քարակույտ, որի մեջ գտնվում է սառը ջուր։ Այստեղ քարերը կարծես երկաթադործի քուրայում հալչելով որևէ առարկայի կերպարանք են ստացել։ Վերադարձին էլ պետք է ընտրել վերելքի նույն արահետը, խուսափելու համար այլ ուղղությամբ վայրէջքի այլազան դժվարություններից։

Հրաբխի կողերի վրա, զարմանք պատճառող թեթևությամբ ծակոտկեն քարերի արանքում աճում են, բացի խոտաբույսերից, անթառամը, ուրցը, ծորիրենը, վայրի մեկոնը և հազարատեսակ այլ բույսեր։ Ո՛չ մի տեղ այնքան շատ կաքավ չկա, ինչքան այստեղ, ո՛չ մի տեղ վերջալույսը այնքան գեղեցիկ չէ, ինչքան այստեղ։ Հեռավոր արևմուտքում, Մասիսները բարև են տալիս ի հնումն գիժ այս սարին, որ, գագաթը ծակվելուց հետո, խելաքացել, հանդարտվել է այժմ։

5. Ո՛Չ ԹԵ ՎԱՅՈՑ (ՀԱՌԱՋԱՆՔԻ) ՁՈՐ, ԱՅԼ ԵԵՆ ՀԱՅՈՑ ՁՈՐ

Դալիկ կամ Դալի թեփե հրաբխի և հավանաբար Սյունյաց աշխարհում գոյություն ունեցած ուրիշ հրաբուխների առաջացրած սոսկալի երկրաշարժերի պատճառած ավերումների և մարդկային զոհերի հետևանքով Վայոց (Հառաջանքի) ձոր կոչված այս շրջանը այժմ Հայոց ձոր է կոչվում։ Շրջանը հարուստ է հանքային շրերով, որոնք նշանավոր Կարլսբատի հավասարարժեք կուրորտներ լինելու ընդունակություն ունեն։ Կան արդասաբեր անդաստաններ, ուր հնամենի արորն ու մանդաղը վազուց իրենց տեղերը զիջել են հրաշալի տրակտորների և կոմբայնների։ Շրջանն ունի առատաջուր գետեր, որոնց վարարուն շրերի վրա կառուցված և կառուցվելիք հիդրոկայանները էլեկտրական լույսով են ողողում և պիտի ողողեն անգամ գյուղական համեստ փողոցները։ Եվ, վերջապես, նա ունի մրգառատ ու կանաչազարդ գյուղեր, ինչպես Հերհերը։

(Շարունակելի)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՇՎԵԴԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏ ՊԱՐՈՆ ՅՈՐԱՆ ՇԻԼԴԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մի քանի օր Հայաստանում հյուր եղավ «Սվենսկա դագբլադետ» թերթի աշխատակից, փիլիսոփայության դոկտոր Յորան Շիլդը, որը Սովետական Միություն է այցելել ՍՍՌՄ Կուլտուրայի մինիստրության հրավիրով։

Հայաստանում եղած ժամանակ պարոն Յորան Շիլդը դիտեց ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը, ծանոթացավ քաղաքի ճարտարապետությանը, նրա բազմաթիվ նորակառույցներին։

Շվեդական ժուռնալիստը այցելեց Մատենադարանը, Օպերայի և բալետի պետական թատրոնում լսեց «Անույշ» օպերան, Հայ-ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում ներկա գտնվեց «Պեր Գյունտ» գրական-երաժշտական կոմպոզիցիայի կատարմանը։ Նա դիտեց 1953 թվականի ռեսպուբլիկական գեղարվեստական ցուցահանդեսը։ Ծանոթանալով հայ ժողովրդի ժամանակակից կուլտուրային և արվեստին, պարոն Յորան Շիլդը մեծ հետաքրքրություն հանդես բերեց նաև դեպի հին կուլտուրայի հուշարձանները։ Այդ նպատակով նա եղավ Զվարթնոցում և Էջմիածնում, որտեղ դիտեց հին հայկական ճարտարապետական արվեստի հուշարձանները։

Երևանից մեկնելուց առաջ պարոն Յորան Շիլդը խնդրեց մամուլում հրապարակել Սովետական Հայաստանում իր ստացած տպավորությունները։

— Ես համոզվեցի, որ Հայաստան են այցելում սկանդինավյան շատ դելեգացիաներ։ Այդ փաստի համար կարելի է շատ պատճառներ գտնել։ Դրանցից մեկն այն է, որ Հայաստանի արվեստը մեզ ավելի է հայտնի և մենք գնահատում ենք այն։ Մյուս պատճառն այն է, որ մենք լավ ծանոթ ենք և հասկանում ենք միջնադարյան ճարտարապետական արվեստի նշանակությունը։ Վերջին ժամանակներս մենք համոզվեցինք նաև այն բանում, որ Հայաստանի արվեստը զարգանում է, և իմ խոսքերի հաստատումն են հանդիսանում կոմպոզիտոր Խաչատրյանի ստեղծագործությունները, որոնք նա նվիրել է մարդկությանը։

Բայց Հայաստանը միայն արվեստով չի գրավում մեզ։ Մենք ինքներս փոքր ազգերի ներկայացուցիչներ ենք։ Մեզ զբաղեցնում է Հայաստանի ճակատագիրը, այն փոքր ազգի, որը երկար ժամանակների ընթացքում դաժանորեն հալածվել և չի ունեցել հավասար ազգի վիճակ։ Բայց, այնուամենայնիվ, այդ ռեսպուբլիկան լիակատար անկախություն է նվաճել և հնարավորություն ստացել պրոգրեսիվ կերպով զարգանալու համար։ Հայաստանը գրավում է կուլտուրական և տեխնիկական տեսակետից աշխարհի զարգացած որևէ այլ ազգության հավասար տեղ։

Իմ այստեղ եղած ժամանակ ես հիացմունքով էի հետևում, թե որքան շատ բան է կատարված Հայաստանում կարճ ժամա-

նակամիջոցում։ Ամենից առաջ ինձ հիացրեց ճարտարապետների աշխատանքը՝ թե՛ Երևանի հատակագծման, թե՛ բնակարանային թուն շինարարության առումով։ Երևանը գտնվում է գեղատիպ վայրում, բլուրների միջև, որը մեծ հմտությամբ օգտագործվում է ճարտարապետների կողմից։ Քաղաքը աչքի է զարնում ինքնատիպ յուրօրինակությամբ և նույնիսկ ինտիմությամբ։ Քաղաքը մոնումենտալ քաղաք է, բայց նա չունի այն ճնշող մոնումենտալությունը, որը բնորոշ է, ավելի շուտ, անթերի հաստակագիծ, սիմետրիա և պերսպեկտիվայնություն ունեցող քաղաքների համար։

Իսկ ինչ վերաբերում է շենքերի ճարտարապետությանը, ապա ես գտնում եմ, որ ժամանակակից հայ ճարտարապետական արվեստը շատ բան է վերցնում իր անցյալ անխառն և վսեմ արվեստից։ Ես հիացած եմ նաև գեղեցիկ և հազվագյուտ շինաքարով, որ իրենց տրամադրության տակ ունեն ճարտարապետները, և քարի վրա փորագրողների արվեստով, որոնք կերտում են ապշեցուցիչ դրվագազարդեր և ռելյեֆներ։

Արդեն ճարտարապետի տանը ինձ դուր եկան նկարիչ Սարյանի երկու պորտրեները։ Իսկ երեկ ինձ շատ հաճելի եղավ այցելել նկարիչների գործերի ցուցահանդեսը և Պետական պատկերասրահը։ Արևմուտքի մարդու համար այդ գեղանկարչությունը որոշ չափով սահմանափակ է թվում, որը կարելի է վերագրել ռեալիստական ծրագրին, բայց գոյություն ունեցող սահմանների շրջանակում ես տեսա ստեղծագործության այն մեծ հարստությունը և տաղանդավորությունը, որը չի ժխտում Ախթալայի եկեղեցում անցյալում աշխատած նկարչի տրադիցիաները։

Ինձ առանձնապես հիացմունք են պատճառել Մ. Հովսեփյանի գրաֆիկ գործերը, ինչպես նաև Իսարեկյանի նկարները, որոնք տոգորված են ռեալիզմով և արտացոլում են իսկական պատմական իրադարձություններ։

Երիտասարդ նկարիչ է. Մկրտչյանի մոտ գտնում եմ անհատական և ինքնատիպ շատ գծեր։

Ես բերեցի այդ անունները այն պատճառով, որ իմ ուշադրությունը կենտրոնացրի այդ նկարիչների նկարների վրա. սակայն վստահությամբ կարելի է ասել, որ մյուս նկարիչներից շատերը ևս ունեն անգուգական ընդունակություններ։

Ես ունեմ այլ, շատ ուժեղ տպավորություններ, բայց նրանք այժմ չափազանց ցաքուցրիվ են այն արագ տեմպի պատճառով, որով ես ծանոթացա Հայաստանին։

Ես եղա Արզնիում։ Ինձ ջերմ ընդունելություն ցույց տրվեց։ Ճիշտ է, իմ մեջ այն տպավորությունն առաջացավ, որ ասես թե ես գտնվում էի ոչ թե հարավում, այլ հյուսիսում՝ Նորվեգիայում. փայլում էր հյուսիսային արևը, ամեն բան ծածկված էր ձյունով։ Իսկ իսկական հարավային ջերմությամբ ինձ դիմավորեց «Արարատ» տրեստի ներքնահարկը, որտեղ ես ոչ առանց զարմանքի կարողացա տեսնել, որ Հայաստանը պատրաստում է ամենաբարձրորակ գինիներ։ Ոչ Իտալիայում, ոչ էլ Իսպանիայում ես չէի խմել այդպիսի հիանալի մուսկատ։

Վերջում ես ուզում եմ ասել, որ Հայաստան կատարած իմ այցելությունը իմ մեջ խորացրեց խաղաղ, ստեղծարար աշխատանքի տպավորությունը, որ կատարվում է Սովետական Միությունում և որը աչքի է զարնում այնպիսի փոքր ազգային ռեսպուբլիկայում, որպիսին է Հայաստանը, որը լի է աշխատելու ցանկությամբ և հարուստ է իր ազգային տաղանդներով։ Ձեռք բերած արդյունքներով ռեսպուբլիկան պարտական է կենտրոնական Սովետական կառավարության կողմից ցույց տրվող մեծ օգնության և լիակատար փոխըմբռնման։

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 7 հունվարի 1954 թ.)

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ*

Բրիզիլիայի խաղաղության կողմնակիցների մի անմոռանալի ժողովում, ես, Ի շարք դելեգատների թվում, ընտրվեցի որպես իմ երկրի ներկայացուցիչ՝ Վիեննայի խաղաղության կոնգրեսին։

Այսպիսով, մի օր սկսեցի ճանապարհորդել դեպի Ավստրիայի մայրաքաղաքը։ Այդ ճանապարհորդության ընթացքում բարեկամական ցույցերը անհամար էին և, առաջին անգամ իմ կյանքում, ես հասկացա, թե ինչ կարող է անել մարդկանց փոխըմբռնումը։

Ժողովուրդների խաղաղության Կոնգրեսի փակումից հետո, մեր դելեգացիայի ղեկավարը մեզ հայտնեց, որ Սովետական Միության խաղաղության կողմնակիցների Կոմիտեն մեզ հրավիրում է բարեկամական այցելություն կատարել դեպի սոցիալիզմի հայրենիքը։

*) Թարգմանված է Բուենոս Այրեսում իսպաներեն լեզվով լույս տեսնող «Երևան» թերթից։

Այս լուրը մեր բոլորի կողմից ընդունվեց խանդավառությամբ, քանի որ այդ այցելությունը հնարավորություն կտար մեզ ճանաչելու մի նոր կուլտուրա։

Ճանապարհորդությունը կատարեցինք գնացքով, Հունգարիայի միջով, որտեղ, մի քանի կայարաններում, մեզ ընդունեցին ծաղիկներով և երաժշտությամբ։ Մենք անչափ դոհ էինք համակրանքի այդ ցույցից։

Մոսկվայում մեզ դիմավորեցին խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամները և մի քանի թարգմանիչներ։ Սովետական մայրաքաղաքի առաջին տպավորությունը մեզ համար տարօրինակ էր, որովհետև նրա ճարտարապետությունը տարբերվում էր մերինից։ Սակայն կամաց-կամաց սկսեցինք վարժվել։

Մոսկվայում մնացինք մոտ տասը օր, որտեղ առիթ ունեցանք այցելելու համաստրանի ճարտարապետական հոյակապ անսամբլը, որն ավարտվելու վրա էր։ Այցելեցինք նաև մի շարք սպորտակոմբներ, կուլտուրայի տներ, կինոթատրոններ, օպերայի և բալետի թատրոն։ Ամենուրեք մեզ ընդունեցին ջերմորեն։ Այդ ջերմության մի մասը, հատկապես իմ մաշկի գույնի պատճառով, ինձ էր վերագրվում։

Մոսկվայում ստեղծեցի շատ բարեկամություններ, որոնց մեջ ինձ համար ամենահաճելին եղավ կինոթատրոնի դերասանուհի, դնեցկուհի Թամարա Մակարովայի հետ իմ ծանոթությունը («Թարե ծաղիկ» կինոյի փերին), որն ինձ նվիրեց այդ փերիի մի արձանիկը։

Այնուհետև գնացինք Լենինգրադ, որտեղ ավանատես եղանք ժողովրդական մի մեծ տոնի. տեսանք ձմեռ պապին՝ պիոներների պալատում և նոր տարվա տոնակատարությունը՝ պրոֆմիությունի պալատում։ Այդ վայրերում հավաքվել էին մեծ թվով երիտասարդ և հասակավոր մարդիկ, որոնք պարում էին և երգում ժողովրդական դեղեցիկ երգեր։

Մեր այցելած այս երկու մեծ քաղաքները ունեն լայն, մաքուր և ծառազարդ փողոցներ։ Ժողովուրդը շատ կենտրոնաց է, մթերային խանութներն ու, առհասարակ, խանութները միշտ լի են ապրանքներով։ Մի օր ուրախացանք, երբ իմացանք, որ այցելելու ենք Սովետական Հայաստան։ Առանձնապես ես շատ ուրախացա, որովհետև ես իմ երկրում ճանաչում եմ շատ հայերի, որոնք բոլորն էլ իմ բարեկամներն են, և ես առիթ կունենայի, վերադարձիս, նրանց հայրենիքից լավ լուրեր տանելու։

Նստեցինք ինքնաթիռ՝ դեպի Երևան։ Մի քանի ժամից արդեն իջանք փոքր, բայց լավ սարքավորված մի աերոդրոմում։

Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեն մեզ ընդունեց ծաղիկներով և ջերմագին ողջույններով, որոնք թարգմանվեցին մի թարգմանչի կողմից, որը կատարյալ տիրապետում էր պորտուգալերենին։ Նրա անունը Հակոբ Բազարյան էր, ժուռնալիստ, որ երկար տարիներ բնակվել է Բրազիլիայում և մեզ շատ լավ էր ճանաչում։ Այնքան հեռու երկրում մի ծոնոթի հանդիպելու այս անակնկալը մեր Հայաստան այցելության ամենահաճելի մոմենտը եղավ։

Մեզ տեղավորեցին մի շատ լավ հյուրանոցում, մաքուր սենյակներով, առատ և սննդարար ուտելիքներով։ Երևանում ձմեռ էր, փողոցները սպիտակ էին։ Չյունն ամբողջ մաղում էր։ Լավ գինիները (որոնց համի հետ չի կարող բաղդատվել մեզ ծանոթ որևէ մի գինի) հաճույք էին պատճառում մեզ և բացում ախորժակը։

Հաջորդ օրը սկսեցինք մեր այցելությունները։ Սկզբում քաղաքի ճարտարապետությունը տարօրինակ թվաց մեզ՝ իր արևելյան ոճի պատճառով։ Բայց ինչպես Մոսկվայում, այնպես էլ այստեղ, շուտով վարժվեցինք։ Քաղաքի բոլոր փողոցները զարդարված են ծառերով, բայց ձյունի պատճառով նրանք կորցրել էին իրենց բնական դրությունը։

Աշխատավորների տները բոլորն էլ շատ լավ կահավորված և հանգստավետ էին։

Հայ ժողովուրդը շատ ուրախ և հաղորդական ժողովուրդ է։ Ես անմիջապես բարեկամացա։ Չեմ կարող մոռանալ մեզ տանող-բերող ավտոբուսի շոֆերին՝ իր մեծ բեղով և անկեղծ ժպիտով։ Նա ինձ ամերիկացի էր կարծում. և դրա համար էլ անընդհատ հարցնում էր Հյուսիսային Ամերիկայի մեծ երգիչ և ասող Պոլ Ռոբսոնի մասին։

Հայաստանում անցկացրած օրերի ընթացքում ես ապրեցի իմ կյանքի ամենաերջանիկ մոմենտները։ Նրանք չեմ կարող մոռանալ այդ ժողովրդին՝ այնքան կուլտուրական և ընկերական, որն ամեն ինչ արեց, որպեսզի մեր անցկացրած օրերը լինեն ուրախ և արդյունավետ։

Եթե գրելու լինեի այն ամենի մասին, որ ես դիտեցի և ստացա այնտեղ, հարկավոր կլիներ շատ տողեր լցնել։

Ամփոփ՝ Երևանը արդիական մի քաղաք է գիտության ձեռք բերած բոլոր նվաճումներով, լայն և մաքուր փողոցներով, ամենաառաջավոր գիտական հիմնարկներով, համալսարանով, արվեստի Բանգարանով, գրադարաններով, նոր և հանգստավետ կինոթատրոններով, օպերայի և բալետի թատրոնով և այլն, որոնց հաճախողների թիվը միշտ բարձր է։

Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեն մեզ ընդունեց ծաղիկներով և ջերմագին ողջույններով, որոնք թարգմանվեցին մի թարգմանչի կողմից, որը կատարյալ տիրապետում էր պորտուգալերենին։ Նրա անունը Հակոբ Բազարյան էր, ժուռնալիստ, որ երկար տարիներ բնակվել է Բրազիլիայում և մեզ շատ լավ էր ճանաչում։ Այնքան հեռու երկրում մի ծոնոթի հանդիպելու այս անակնկալը մեր Հայաստան այցելության ամենահաճելի մոմենտը եղավ։

Մեզ տեղավորեցին մի շատ լավ հյուրանոցում, մաքուր սենյակներով, առատ և սննդարար ուտելիքներով։ Երևանում ձմեռ էր, փողոցները սպիտակ էին։ Չյունն անընդհատ մաղում էր։ Լավ գինիները (որոնց համի հետ չի կարող բաղդատվել մեզ ծանոթ որևէ մի գինի) հաճույք էին պատճառում մեզ և բացում ախորժակը։

Հաջորդ օրը սկսեցինք մեր այցելությունները։ Սկզբում քաղաքի ճարտարապետությունը տարօրինակ թվաց մեզ՝ իր արևելյան ոճի պատճառով։ Բայց ինչպես Մոսկվայում, այնպես էլ այստեղ, շուտով վարժվեցինք։ Քաղաքի բոլոր փողոցները զարդարված են ծառերով, բայց ձյունի պատճառով նրանք կորցրել էին իրենց բնական դրությունը։

Աշխատավորների տները բոլորն էլ շատ լավ կահավորված և հանգստավետ էին։

Հայ ժողովուրդը շատ ուրախ և հաղորդական ժողովուրդ է։ Ես անմիջապես բարեկամացա։ Չեմ կարող մոռանալ մեզ տանող-բերող ավտոբուսի շոֆերին՝ իր մեծ բեղով և անկեղծ ժպիտով։ Նա ինձ ամերիկացի էր կարծում. և դրա համար էլ անընդհատ հարցնում էր Հյուսիսային Ամերիկայի մեծ երգիչ և ասող Պոլ Ռոբսոնի մասին։

Հայաստանում անցկացրած օրերի ընթացքում ես ապրեցի իմ կյանքի ամենաերջանիկ մոմենտները։ Նրանք չեմ կարող մոռանալ այդ ժողովրդին՝ այնքան կուլտուրական և ընկերական, որն ամեն ինչ արեց, որպեսզի մեր անցկացրած օրերը լինեն ուրախ և արդյունավետ։

Եթե գրելու լինեի այն ամենի մասին, որ ես դիտեցի և ստացի այնտեղ, հարկավոր կլիներ շատ տողեր լցնել։

Ամփոփ՝ Երևանը արդիական մի քաղաք է գիտության ձեռք բերած բոլոր նվաճումներով, լայն և մաքուր փողոցներով, ամենաառաջավոր գիտական հիմնարկներով, համալսարանով, արվեստի Բանգարանով, գրադարաններով, նոր և հանգստավետ կինոթատրոններով, օպերայի և բալետի թատրոնով և այլն, որոնց հաճախողների թիվը միշտ բարձր է։

Հայ ժողովուրդը, ինչպես նաև Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ծարավի են միշտ ավելին ու ավելին իմանալու Երիտասարդության ճնշող մեծամասնությունը զբաղվում է սպորտով՝ շատ լավ սարքավորված ակումբներում, մեծ թվով մարզիչներով։

Ուզում եմ ընդգծել, որ այն ակումբում, որտեղ զբաղվում էին մարմնամարզով և բռնցքամարտով, ես ծանոթացա շատ լավ պատրաստված մի քանի ընկերների հետ։ Մարզիչները առաջին կարգի մասնագետներ են։ Ես բարեկամություն հաստատեցի Հելսինկիի օլիմպիական խաղերի մարմնամարզի հանրահայտ չեմպիոն Հրանտ Շահինյանի հետ։

Այցելեցինք մի քանի թանգարաններ, կինոներ և թատրոններ։ Սակայն ամենատպավորիչը, հուզիչը կոլտնտեսության այցելումը եղավ։ Այնտեղ կազմակերպեցին մի մեծ խնջույք և հրավիրեցին մեզ հայկական պարի, որը մենք պարեցինք մեր սամբայի նման։

Մեր այցելած կոլտնտեսությունը ուներ հնարավոր բոլոր տարքավորումները՝ ամբողջովին էլեկտրիֆիկացված, ուներ մի քանի տրակտորներ և արդիական մեքենաներ իր գյուղատնտեսության համար, նախնական և միջնակարգ դպրոցներ, ակումբներ և ամենօրյա կինոներ, հիվանդանոց, դրազարան և այլն։

Մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ մեծ թվով կոլտնտեսականներ կրում էին Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի ոսկե աստղեր, որ նրանք ցույց էին տալիս մեծ հպարտությամբ։

Սեղանը հարուստ էր համեղ ուտելիքներով, իսկ խմիչքները այնքան քաղցրահամ, որ իրենց նմանը երբեք չենք խմել։

Այցելեցինք նաև կրոնական քաղաք հաղարամյա էջմիածին, որտեղ տեսանք ամենահետաքրքիր հիշատակներ հայ ժողովրդի պատմությունից։

Ինձ տրամադրված տեղի և ժամանակի սղության պատճառով ես ուզում եմ իմ ընթերցողներին հաղորդել այն եզրակացությունները, որ ես հանեցի Սովետական Միություն այցելելուց։

Այնտեղ չկա խտրականություն ո՛չ ցեղի, ո՛չ գույնի և ո՛չ էլ կրոնական հավատքի նկատմամբ։ Ժողովուրդը զարգացած է, և կողմնակից խաղաղության։ Բոլորն էլ սիրում են աշխատել և ձգտում են առաջ։ Կրթությունը անխտիր է և բոլորի համար մատչելի։ Ուտելիքն ու խմիչքը առատ է, գինիները, կոնյակները ու այլ խմիչքները անմրցելի են։

Ես երբեք այնքան ուժեղ չեմ զգացել կյանքը ապրելու քաղցրությունը, որքան Սովետական Միությունում։

Վերջացնելով, ուզում եմ հայտնել իմ շնորհակալությունը այն բոլոր սովետական քաղաքացիներին, որոնք ինձ պարգևեցին այդքան երջանիկ մոմենտներ, և ցույց տվեցին, որ բոլոր մարդիկա եղբայր ենք միմյանց և շատ լավ կարող ենք ապրել փոխըմբռնման խաղաղ աշխարհում։

ՌՈՄԵՈ ԲԱՐԲՈԶԱ

Վիլենայի խաղաղության կոնգրեսի
Բրազիլիական դելեգատ,
Բրազիլիայի բռնոի չեմպիոն

1953 թ. մարտ-ապրիլ, № 51—52

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ամսագիր, 1954 թ. № 1)

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Իտալիայի և Սովետական Միության («Իտալիա-ՍՍՌՄ») միջև Կուլտուրական կապի ընկերության իտալական դելեգացիան հնարավորություն ունեցավ որոշ ժամանակ լինելու Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայում և մոտիկից ծանոթանալու տեղի շինարարական աշխատանքին, տնտեսությանն ու սոցիալիստական մի քանի նվաճումներին։ Դելեգացիան ինքն էր ցանկություն հայտնել այցելելու Սովետական Միության հարավային ծայրամասի մի տրված ռեսպուբլիկա, այն նկատառումով, որ Սոցիալիստական ռևոլյուցիայից առաջ տրինտատպես հետամնաց ցարական Ռուսաստանի հարավային շրջանների տնտեսական փոխելի հարցը առնչություն ունի Իտալիայի հարավի ներկա տնտեսական հետամնացության հարցի հետ։

Իտալական դելեգացիան այսօր վստահորեն կարող է ասել, որ Սովետական Հայաստան կատարած իր այցելությունը շատ ուսանելի եղավ դելեգացիային հետաքրքրող հարցերի տեսակետից, հատկապես այն հարցերի տեսակետից, որոնք պայմանավորվել են իտալական դեմոկրատական և պրոգրեսիվ ուժերի կողմից՝ իտալական հարավի հարցի շուրջը՝ Իտալիայում բացված վիճաբանությունների ժամանակ։

Այստեղ ես կխոսեմ մեր այցելության մասին այն տեսանկյունից, որը առավելապես կապված է Սովետական Հայաստանի հասարակական ու տնտեսական կյանքի հետ, և հատկապես այն տպավորությունների մասին, որ մեզ վրա թողել են մեր այցելած մի քանի արտադրական և տնտեսական կենտրոնները՝ Սևանա լճի հիդրոկայանը, Արևշատի Միկոյանի անվան կոլտնտեսությունը, ժամացույցի գործարանը Երևանում, ռեսպուբլիկայի մայրաքաղաքի բնակարանային շինարարության աչքի ընկնող վայրերը։ Սրանք բոլորը մի նոր աշխարհի, սոցիալական և տնտեսական կյանքի մի նոր կազմակերպության բազմակողմանի արտահայտություններ են և հաստատումը այն փաստի, որ Հայաստանի տնտեսական հետամնացությունից լոկ մի հեռավոր հիշողություն է մնացել նրա բնակիչների մի մասի մեջ։

Ահա օրինակ Կովկասյան մեծ լճից սնվող հիդրոկայանը. մենք այնտեղ հասանք ավտոմոբիլային մի երկար, հաճելի և գեղեցիկ ճանապարհով, որը անհետանում է նախախորհրդային սարահարթի ձյունապատ լեռների միջով։ Մենք, որ հետաքրքրվում էինք ՍՍՌՄ-ի կյանքի ամեն մի երևույթով, ուշադրությամբ դիտում էինք այն պեյզաժը, որ շատ նմանություններ ուներ Իտալիայի ապենինյան և այլյան պեյզաժի հետ։ Բայց բնության այդքան նմանությունը մեզ չէր արգելում տեսնելու այն նորը, որ ներկայանում էր պեյզաժի ընդհանուր ֆոնի վրա, ինչպես, օրինակ՝ այդպիսի բարձունքների վրա հողի ինտենսիվ մշակությունը, տարբեր չարման էլեկտրահաղորդման գծերի խիտ ցանցը, որոր գյուղերի սիստեմատիկ էլեկտրիֆիկացումը և, մանավանդ, տրակտորների առկայությունը այնպիսի գոտիներում, որպիսի գոտիները Իտալիայում հետամնացության տեսակետից մրցակից չունեն։

Գիտեինք, որ սարահարթի ներկարությամբ և յայնությամբ անցնող էլեկտրահաղորդման գծերը կենսական նշանակություն ունեն մասնավորապես Երևանի ամբողջ արդյունաբերական և գյուղատնտեսական շրջանին, ինչպես ասում ենք Իտալիայում, այդ էլեկտրահաղորդման գծերը ապացուցում էին այն մեծ հիդրոկայանի, որ դնում էինք տեսնելու։ Ահա և հիդրոկայանը, վեհ իր շինությունների խստությամբ և իր սարքավորումների բազմազանությամբ։

Հիդրոկայանի դիրեկտորի հետ մեր ունեցած հանդիպումը, բայց սպառիչ զրույցի ժամանակ մեզ զարմացրեց, թե ինչպես այդքան տակավորիվ մարդիկ կարող էին ղեկավարել այդպիսի բարձր կարողություն և տնտեսական մեծ կարևորություն ունեցող մի էներգետիկ կայան։ Դա ևս հիդրոկայանի առաղիականությունը հաստատող մի փաստ էր. իսկ երբ եղանք հիդրոկայանի ընդհանուր ղեկավարման սրահում, տուրբինների շարժումը և էներգիայի ուժգին հոսքը ցույց տվող լույսի ազդանշումների առջև, զարմանալի կերպով հիշում ենք Լենինի խոսքերը էլեկտրիֆիկացիայի մասին։ Մեզ հետ էին կայանի երեք տեխնիկները, դիրեկտորը, և գիտեինք, որ գտնվում էինք ղեկավարման կաբինում մի մեծ հիդրոկայանի, որի տարեկան արտադրությունը քիչ է պակաս ամբողջ հարավային Իտալիայի էներգիայի տարեկան ամբողջ սպառումից։

Իսկ հարավային Իտալիան ունի 17 միլիոն բնակիչ, այսինքն 11 անգամ ավելի, քան Հայաստանի բնակչությունը, իսկ փաստն այն է, որ այսօր Հայաստանը ըստ բնակչի տարեկան ավելի էլեկտրական էներգիա է արտադրում, քան Ֆրանսիան և երկու անգամ ավելի, քան Իտալիան։

Ինչո՞ւ է մեզ ապշեցնում այս փաստը։ Որովհետև մենք միշտ հիշում ենք այն, ինչ որ էր Հայաստանը Սոցիալիստական ռևոլյուցիայից առաջ։ Դեռ այսօր էլ իտալական հանրապետությունները Հայաստանը նկարագրում են իբրև հովիվների երկիր, իբրև շատ հետամնաց ստրանդիոտի երկիր։ Եվ եթե իրականության մեջ այդպես է եղել անցյալում, ինձ դժվար չէ հասկանալ այդ, երբ հիշում եմ այն վիճակը, որ դեռ այսօր ունեն հարավային Իտալիայի որոշ ամբողջական մարզեր, որոնք դատապարտված են հովիվների երկիրը լինելու վիճակին՝ իտալական ֆինանսական կապիտալի և հողային խոշոր կալվածատիրության միացյալ ճնշման հետևանքով։

Բայց այս բոլորը Սովետական Հայաստանում այլևս գոյություն չունի, մտածում էինք մենք։ Նայելով էլեկտրահաղորդման մեծ գծերին, որոնք կարծես սկիզբ էին տանում հենց հիդրոկայանի ղեկավարման կաբինից, սնուցելու համար մեծ սարահարթը, արդյունաբերական նոր ձեռնարկությունները, բնակարանային շինարարության նոր կենտրոնները, գյուղատնտեսական նոր ձեռնարկությունները, Արարատի ներքև սարածվող կյանքի և արտադրության ամբողջ մեծ զոնան։

Իհարկե մենք երևանը չէինք ճանաչում 1922 թվականից առաջ և մեզանից որևէ մեկը կարող էր մտածել (որոշ մակերեսայնությամբ), որ այն ամենը, ինչ որ այսօր Երևանը պարզում է այցելուին, գոյություն ուներ օնան առաջ։ Բայց բավական էր մոտիկից տեսնել այդ շենքերը, այդ գործարանները և համեմատել դրանք քաղաքի մի այլ մասի հետ, որը դեռ գոյություն ունի

շրջակայքի որոշ հատվածներում։ Ահա կենտրոնական մեծ հրապարակը՝ Կառավարական շենքով, Պետական թանգարանով, Պրոֆմիությունների պալատով, ահա Ստալինի հիանալի լայն պողոտան, ահա գործող և կառուցվող արդյունաբերական մեծ ձեռնարկությունները, ահա քաղաքի մերձակա բլուրի վրա աշխատավորների համար կառուցված թաղամասերը։ Իսկ մյուս կողմից՝ ահա այն, ինչ որ մնացել է հին ժամանակվա թաղերից, իրենց նեղ և տգեղ փողոցներով, իրենց վտանգավոր հարթ կտուրներով։

Կա մի առանձնահատուկ պարագա՝ ով որ անցնում է Երևանի փողոցով, մի որոշ կետի հասնելով, այն տպավորությունն է ստանում, որ ընկել է տարբեր քաղաք, եթե ոչ տարբեր աշխարհ։ Մինչև որոշ կետ փողոցը եղերված է այնպիսի արխիտեկտոնիկ կառուցումներով, որոնք ձեզ հիշեցնում են Ջենովայի «Կարուճճիները կամ Պալերմոյի «Կատակոմբները և կամ Այժիրի «Կազբահները. այդտեղից սկսած ձեր աչքերի առաջ բացվում է արդիական և ընդարձակ մի քաղաք, կառուցված սովետական քաղաքաշինության հայտնի չափանիշներին համապատասխան, այսինքն՝ լայն փողոցներով, առատ ծառատնկումներով և բացառիկ ամբողջությամբ կառուցված պալատանման շենքերով։

Ապա գալիս են Երևանի արդյունաբերական ձեռնարկությունները, որոնց ծագման թվականի մասին տարակույս չի կարող լինել։ Այդպիսիներից մեկը, ուր մենք այցելեցինք, ժամացույցի գործարանն էր, որը ներկայումս արդեն ժամացույցների և դարբուցիչների օրական բարձր արտադրություն ունի և որը գնալով ավելի կծավալվի։

Դիրեկտորը (իսկապես նոր տիպի մի գիրեկտոր, որը չէր ծածկում իր բանվորական ծագումը) մի լավ ենթարկվեց մեր հարցերի տարափին և ժլատ չեղավ իր բացատրություններ մեջ։

«Իսկ որտեղի՞ց եք ստանում զումարները»։ «Դա արդեն մտնում է պլանով նախատեսված մեր ներդրումների մեջ։ Ավելի խոշոր ներդրումների համար (ինչպիսին պահանջում է, օրինակ, գործարանի ընդարձակումը) ֆինանսավորողը կլինի պետությունը։

«Իսկ որտեղի՞ց եք գտել մասնագետները»։ «Սկզբում մասնագետները եկան Մոսկվայի համանման գործարանից։ Սրանք գործը սովորեցրին այստեղի բանվորներին և հիմա առաջ ենք գնում տեղական մասնագետների ուժերով։ Բացի դրանից, ունենք մի դպրոց 200 երիտասարդների համար։

«Իսկ որքա՞ն են վաստակում բանվորները»։ «Դա կախված է նրանց անհատական արտադրությունից։ Ահա նրանցից մեկը, որ հմտացել է գործի մեջ. նա 20 տարեկան է և ամսական վաստակում է 2.000 ռուբլուց ավելի։ «Որտե՞ղ եք վաճառում ձեր արտադրանքը»։ «Հայաստանում և սովետական մյուս ռեսպուբլիկաներում։ Դա մեզ համար պրոբլեմ չի հանդիսանում։

Այստեղ դարձյալ մենք հիշում ենք Իտալիան, որի համար արդյունաբերական արտադրանքի վաճառքը հանդիսանում է մոլտական մի պրոբլեմ, նրա մեքենայական արդյունաբերության արտադրական կարողության օգտագործման աստիճանը հազիվ 60 տոկոս է և հենց այս օրերին մեքենաշինական արդյունաբերության 10.000 բանվորներ կանգնած են արձակման սպառնալիքի տակ։

«Ինչո՞ւ Հայաստանի գործարանների արտադրանքի վաճառքը այսօր պրոբլեմ չի հանդիսանում»։ «Պրոբլեմ չի հանդիսանում այն պատճառով, որ Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) բնակչությունը միշտ և ամենուրեք, իր արտադրական ունակությանը համապատասխան, ունի գնողական ունակություն։ Այդ մասին շատ պարզ խոսքերով մեզ բացատրություն տվեց Երևանի մի ուրիշ գործարանի (այսինքն արդյունաբերական մասշտաբների հասած դինեգործական գործարանի) դիրեկտորը, երբ նրան պարզում էինք Իտալիայի գինեգործության ծանր ճգնաժամի պատկերը։

Դիրեկտորն ասաց. «Մենք այսօր արդեն արտադրում ենք տարեկան 9 միլիոն լիտր գինի և ունենք միայն մի պրոբլեմ, այն է՝ մեզ հոմք մատակարարող կոլտնտեսությունների հետ միասին արտադրել միշտ ավելին։

Այս պարզ խոսքերի մեջ մենք գտնում էինք սովետական փոքր ռեսպուբլիկայի ապշեցուցիչ աճի պատկերը։ 1928 թվականին արդյունաբերության բաժինը Հայաստանի ազգային եկամտի մեջ կազմում էր 28 տոկոս, 1940 թվականին արդեն կազմում էր 80 տոկոս, իսկ ներկայումս հասել է 85 տոկոսի։

Դա նշանակում է, որ Հայաստանն այսօր բարձր ինդուստրիալ երկիր է։ Արդյունաբերական արտադրությունը, առանձին վերցրած, 1913 թվականին եղած 100 միավորից 1940 թվականին հասել է 2.100-ի, իսկ 1952 թվականին՝ 6.010-ի։ Արևմտյան երկրի ոչ մի մարդ չի կարող արձանագրել այդպիսի աճ։

Բայց այդ բնավ չի նշանակում, որ գյուղատնտեսությունը չի զարգացել, ընդհակառակը, Հայաստանի և ՍՍՄՄ-ի ինդուստրիալ զարգացմանը զուգընթաց, զարգացել է նաև գյուղատնտեսությունը։ Հայաստանում ներ-

կայուն կա և գործում է 90 ռոդգիլ ջրանցք։ Իսկ մշակելի տարածությունը այսօր 6 անգամ ավելի է, քան նախառևոլյուցիոն շրջանում։ Ամեն տարի աճ է արձանագրվում խաղողի, բամբակի, մրգի, հացահատիկի արտադրության ասպարեզում և անասնաբուծության բնագավառում։

Անշուշտ, դա կապված է արտադրության միջոցների (պարարտանյութեր, գյուղատնտեսական մեքենաներ և այլն) աճի հետ, որպիսիք արդյունաբերությունը կարողացել է ի սպաս դնել գյուղատնտեսության։ Մենք, իտալացիներս, հնարավորություն ունեցանք այցելելու 1.000 հեկտարից ավելի տարածություն ունեցող մի կոլտնտեսություն (Արևշատի Միկոյանի անվան կոլտնտեսությունը)։ Մեր հարցերին կոլտնտեսության համակրելի նախագահը տվեց հետևյալ բացատրությունը. 1929 թվականից մինչև 1952 թվականը բամբակի բերքատվությունը, ըստ հեկտարի, 3 ցենտներից հասել է 24 ցենտների, խաղողինը՝ 35 ցենտներից 63-ի։ Իսկ մյուս մշակույթների (հացահատիկ, բանջարեղեն և այլն) հեկտարի բերքատվության համար արձանագրվել են թվեր, որոնք նախանձելի կլինեն Արևմտյան Եվրոպայի ամենից ավելի արդիական գյուղատնտեսական շրջանների համար։ Այս կոլտնտեսությունում մենք այցելեցինք խոշոր եղջերավոր անասունների և խոզերի համար կառուցվող մեծ գոմերը, տեսանք բամբակի ավտոմատիկ հավաքման համար գործող մեքենաները, բացատրություն խնդրեցինք գերբի տարեկան պլանավորման սիստեմի և պետությանը վաճառվող մթերքի մասին, կոլտնտեսականների վարձատրության պայմանների ու կյանքի մասին։ Մենք խոր տպավորություն ստացանք մի առողջ, հավասարակշռված աշխարհի մասին, որը բոլոր պայմաններն ունի շարունակական առաջընթացի համար։

Մենք չպիտի մոռանանք Արարատի ներքև տարածվող մեծ հարթավայրի պատկերը, հարթավայր, որը ինտենսիվ կերպով մշակված է իր ամբողջ ծավալով։ Ով որ զարմանում է այն տպավորությունից, որ մենք՝ իտալացիներս ստացել ենք այդ հարթավայրից, կհիշեցնենք, որ 3 միլիոն հեկտարից ավելի իտալական հողեր (որոնք խոշոր կալվածատերերի սեփականություն են) թողնված են անմշակ վիճակում կամ վատ են մշակված։

Մի քանի բաներ, որ մենք տեսանք Սովետական Հայաստանում, մեզ ուղղակի ապացույց տվին այն խաղաղ շինարարական աշխատանքի մասին, որ տեղի է ունենում ամբողջ Սովետական Միության մեջ։ Այս մեծ երկրի մի փոքր մասում մենք տեսանք պայծառ, ինքնավստահ մի ժողովուրդ, որին ոգեվորում է թե՛ աշխատանքը և թե՛ տեփական աշխատանքի պտուղների վայելքը, զերծ է անգործությունից, թշվառությունից, վաղվա նկատմամբ երկյուղից։

Հպարտանալով իրենց շինարարական աշխատանքի արդյունքներով, Երևանի և Հայաստանի ինժեներները, ճարտարապետները, բանվորները և կոլտնտեսականները ունեցել են միշտ մի արտահայտություն, որ մենք երբեք չենք մոռանա.

«Այն, ինչ որ մենք իրագործել ենք, դեռևս միայն մի մասն է այն ամենի, որ պիտի իրագործենք։ Վերադարձեք մի քանի տարի հետո և դուք կհիշեք այսօրվա Հայաստանն այնպես, ինչպես մենք այսօր արդեն հիշում ենք 30 տարի առաջվա Հայաստանը։

ՄԱՐԻՈ ԼԵՆԱ

Իտալական «Տեխնիկական գիտելիքներ» ճանդեսի խմբագիր

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ամսագիր, 1954 թ. № 2)։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ.— Հրապարակվեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը առ այն, որ մարտի 14-ին նշանակվում են Սովետական Միության Գերագույն Սովետի ընտրությունները։

Հայաստանի աշխատավորները հոանվուն կերպով պատրաստվում են ընտրություններին։ Կազմված են ընտրական օկրուգներ և տեղամասեր։ Համաձայն ՍՍՌՄ Կոնստիտուցիայի ռեսպուբլիկայի աշխատավորները երկրի Գերագույն Սովետի Միության Սովետի համար պետք է ընտրեն 5, իսկ Ազգությունների Սովետի համար՝ 25 դեպուտատ։

Հունվարի վերջերին ամենուրեք ռեսպուբլիկայում տեղի ունեցան աշխատավորների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների նախընտրական ժողովներ, նվիրված դեպուտատության թեկնածուների առաջադրման։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ 300-ԱՄՅԱԿԸ.— Սովետական Միության ժողովուրդները լայն կերպով նշում են Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման պատմական տարեթիվը՝ 300-ամյակը, որը լրացավ սույն հունվարի 18-ին։

Այդ օրը Երևանում, Լենինականում, Կիրովականում տեղի ունեցան աշխատավորական ժողովներ և երեկույթներ՝ նվիրված պատմական տարեթվին։ Ժողովներում հանդես եկող հռետորները նշում էին, որ ուկրաինական եղբայրական ժողովրդի ազգային մեծ տոնը ողջ Սովետական Միության ժողովուրդների տոնն է։ Նրանք խոսում էին բարեկամական այն սերտ կապերի մասին, որոնք գոյություն են ունեցել հայ և ուկրաինական ժողովուրդների միջև և որոնք առավել ևս զարգացել ու ամրացել են Սովետական իշխանության տարիներին։ Առանձնապես նշվում էր հայ մտավորականության, հատկապես գրողների կապերը Ուկրաինայի մտավորականության և գրական գործիչների հետ։

Նշանակալից տարեթվի առթիվ Հայաստանի պետական հրատարակչությունը լույս է ընծայում ուկրաինական գրողների ստվար ժողովածու հայ հեղինակների թարգմանությամբ։ Ժողովածուում զգալի տեղ է հատկացված ուկրաինական ազգային մեծ բանաստեղծ Տարաս Շևչենկոյի ստեղծագործություններին։

Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման տոնակատարության հանդեսները տեղի կունենան մայիսի մեկին։

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ 10.000-ՐԴ ՀԱՄԱՐԸ.— Հունվարի 7-ին լույս տեսավ «Սովետական Հայաստան» թերթի 10.000-րդ համարը։ Իր գոյության 33 տարվա ընթացքում թերթը հսկայական դեր է խաղացել հայ ժողովրդի քաղաքական-հասարակական կյանքում, նրա կուլտուրական և տնտեսական վերելքի գործում։

Թերթի տոնական համարի լույս ընծայման առթիվ Երևանում, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ ճոխ հանդես, որին ներկա էին մամուլի աշխատողներ, ընթերցողներ, գրականագետներ, արվեստագետներ։ Զեկուցումով հանդես եկավ թերթի խմբագիր Հովհաննես Բաղդասարյանը։ Վերջում կայացավ համերգ։

ԿՈՄՈՂԻՏՈՒՐ ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ հայ երաժշտության հնագույն գործիչներից մեկի՝ երաժշտագետ Ազատ Մանուկյանի ծննդյան 75-ամյակը։ Դեռ դպրոցական հասակում, Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում, նա աշակերտել է ականավոր երաժշտագետ Մակար Եկմալյանին։ Իր երաժշտական գիտելիքները Ազատ Մանուկյանը հետագայում լրացրել է Պետերբուրգում։

Ավելի քան 50 տարվա իր գործունեության ընթացքում Ազատ Մանուկյանը խոշոր, շնորհակալ աշխատանք է կատարել մեր մատաղ սերնդի երաժշտական դաստիարակության գործում։ Նա ստեղծել է մանկական շատ երգեր, որոնք մեծ սիրով կատարվում են դպրոցականների կողմից։ Սովետական կառավարությունը ըստ արժանվույն գնահատել է Ազատ Մանուկյանի ժրաջան գործունեությունը, շնորհելով նրան արվեստի վաստակավոր գործիչի պատվավոր կոչում և պարգևատրելով Լենինի ու Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով։

Երևանում տեղի ունեցած հոբելյանական հանդեսին ներկա էին մայրաքաղաքի երաժշտական հասարակայնության ներկայացուցիչները, գրողներ, արվեստագետներ, որոնք ջերմորեն ողջունեցին հոբելյարին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ.— Տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։ Ժողովականները ակադեմիայի պրեզիդենտ վերընտրեցին ականավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանին։ Վիցե-պրեզիդենտներ ընտրվեցին Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Մ. Ներսիսյանը և Ա. Մնջոյանը։ Ակադեմիկ-քարտուղար ընտրվեց Վ. Դուրգանյանը։ Ընտրվեցին նաև ֆիզիկո-մաթեմատիկական, տեխնիկական, բիոլոգիական, գյուղատնտեսական և հասարակական գիտությունների բաժանմունքների ակադեմիկ-քարտուղարներ։

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ.— Տարեցտարի ստվարանում են Սովետական Հայաստանի գիտական աշխատողների շարքերը։ Միայն անցյալ 1953 թվականի ընթացքում ռեսպուբլիկայի երիտասարդ գիտական աշխատողներից 100 մարդ պաշտպանել են թեկնածուական և 30 մարդ դոկտորական ատենանի դիսերտացիաներ։ Դրանցից 30 հոգի իրենց դիսերտացիաները պաշտպանել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում, 80 հոգի Երևանի Պետական համալսարանում, իսկ մյուսները Հայաստանի, ինչպես և Սովետական Միության այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1954 ԹՎԱԿԱՆԻՆ.— Անցած 1953 թվականին Հայաստանի պետական հրատարակչությունը լույս ընծայեց 460 անուն գանազան գրքեր շուրջ 4,5 միլիոն օրինակ տպաքանակով։ Ընթացիկ 1954 թվականին լույս կընծայվի մոտ 600 անուն գիրք։ Հրատարակվելիք գրքերի զգալի մասը կկազմեն քաղաքական-հասարակական, տնտեսական, փիլիսոփայության, պատմության և գիտության տարբեր բնագավառների հարցերին վերաբերող աշխատություններ։

Լայն տեղ է տրվելու գեղարվեստական գրականության հրատարակմանը։ Հայ ընթերցողները մայրենի լեզվով կստանան ռուս և եվրոպական կլասիկ ու ժամանակակից հեղինակների շատ աշխատություններ։ Առանձնահատուկ տեղ է տրվելու անցյալի և ժամանակակից հայ գրողների գործերի հրատարակմանը։ Կավարտվի Ալեքսանդր Շիրվանզադեի և Պերճ Պռոշյանի երկերի հրատարակումը։ Կվերահրատարակվեն Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, ինչպես և ժամանակակից մի շարք հեղինակների ընտիր երկերը։ Եզեղ հրատարակությամբ լույս կընծայվի Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»։

Շարունակվելու է մեծանուն հայ երաժշտագետ Ալեքսանդր Սպենդիարյանի աշխատությունների հրատարակումը բաղկացած 11 հատորից։ Այդ աշխատությունների 1-ին, 3-րդ և 9-րդ հատորները լույս տեսան անցյալ տարի։ Վերջերս լույս տեսավ 4-րդ հատորը։ Մեծանուն երաժշտագետի աշխատությունները հրատարակության է պատրաստում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության բաժինը։

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ.— Վաղուց ի վեր Երևանում, մի ամբողջ շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ միասին, գործում է նաև Հեռակա մանկավարժական ինստիտուտը։ Այստեղ, առանց աշխատանքից կտրվելու, սովորում են մոտ 4.000 մանկավարժներ։ Նրանցից շատերն աշխատում են Հայաստանի հեռավոր շրջաններում, լեռնային գյուղերում, Վրաստանի և Ադրբեջանի հայկական դպրոցներում։ Նրանք ինստիտուտից ստանում են ցուցմունքներ, ուսումնական ծրագրեր, գրավոր դասախոսություններ և իրենց ազատ ժամերին պարապում։ Տարին երկու անգամ՝ հունվարին և ամառվա արձակուրդներին նրանք ինստիտուտ են գալիս հերթական քննություններ տալու։ Շատ մանկավարժներ հնարավորություն չունենալով բարձրագույն կրթություն ստանալու, իրենց ուսումը ձեռք են բերում այս ինստիտուտի միջոցով։ Առաջիկա ամառ Հեռակա մանկավարժական ինստիտուտը կավարտեն ավելի քան 1.000 մանկավարժներ։

ԴՊՐՈՑԱՇԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ.— Ամեն տարի Սովետական Հայաստանի կառավարությունը խոշոր միջոցներ է հատկացնում դպրոցական նոր, բարեհարմար շենքեր կառուցելու համար։ Հայաստանի գյուղերի և քաղաքների բազմաթիվ նորակառույցներից լավագույնները դպրոցական շենքերն են։ Այս տարի հանրապետությունում կկառուցվեն դպրոցական 18 նոր շենքեր, որոնցից 4-ը Երևանում և 12-ը շրջանային կենտրոններում։ Այդ կառուցումների համար հատկացված են 5.000.000 ռուբլի ավելի միջոցներ, քան անցյալ տարի։

ԳԱԲՐԻԵԼ ՍՊԻՆԴԻԱՐՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայում մեծանուն հայ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի երկերի լիակատար ժողովածուն։ Առաջին և երկրորդ հատորները լույս են տեսել անցյալ տարի։ Վերջերս լույս տեսավ 3-րդ հատորը, որի մեջ մտել են հեղինակի երկու կատակերգությունները, արձակ և քերթողական գործերը։ Տպագրության է պատրաստվում վերջին՝ 4-րդ հատորը, որի մեջ կմտնեն հեղինակի նամակները։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1954 ԹՎԱԿԱՆԻՆ.— Երևանում կատարվող շինարարական աշխատանքներն այս տարի էլ՝ ավելի լայն ծավալ են ստանալու։ Արդյունաբերության նոր ձեռնարկություններից բացի կառուցվելու են բնակելի, հասարակական, ուսումնական, վարչական շատ շենքեր։ Ավարտվելու են անցյալ տարիներից սկսած կառուցումները։ Նոր կառուցվելիք միայն բնակելի շենքերի թիվը հասնում է 60-ի։ Բնակարանային շինարարության համար հատկացված պետական միջոցները երկու անգամ գերազանցում են անցյալ տարվա հատկացումները։

Չնայած խստաշունչ ձմռանը, շինարարական աշխատանքները չեն դադարում ոչ մի օր։ Քաղաքի ինչպես մայրուղիներում, այնպես էլ արվարձաններում օր-օրի բարձրանում են գեղեցիկ հոյակերտ շենքեր՝ երևակայված Հայաստանի բազմերանգ քարերով։

Բնակարանային հիմնական շինարարությունը կենտրոնացվելու է Նիկոլայի փողոցում, որն այս տարի քաղաքը միացնելու է Շահումյան ավանին՝ Հրազդանի վրա կառուցվող նոր կամուրջի միջոցով։

Ավարտվելու է Մատենադարանի շենքի կառուցումը, Հայաստանի թանգարանի շենքի (Կուլտուրայի տան) վերակառուցումը։ Արագացվելու է Գիտությունների ակադեմիայի, Պետական համալսարանի, Պոլիտեխնիկական և Գյուղատնտեսական ինստիտուտների նոր շենքերի շինարարությունը։

Այս բոլորից բացի խոշոր աշխատանքներ են կատարվելու մի շարք նոր փողոցների վերակառուցման ու բարեկարգման, ջրմուղի, կոյուղու, էլեկտրական լուսավորության ցանցի ընդլայնման ուղղությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԳԵՐԸ.— Հայաստանի բազմերանգ և գունեղ գորգերը մեծ համբավ են վայելում և հսկայական պահանջարկ ունեն։ Սովետական իշխանության տարիներին գորգագործությանը մեր ռեսպուբլիկայում խիստ զարկ տրվեց և այն արդյունաբերական նշանակություն ձեռք բերեց։ Հայկական մանրանկարչության ոճով գործվող գորգերը հայտնի են ողջ Սովետական Միության մեջ։ Այս տարի Հայաստանում կառուցվելու են գորգագործական 16 նոր արհեստանոցներ։ Գորգագործական ձեռնարկությունները կտան 16.000 քառակուսի մետր ավելի արտադրանք, քան անցյալ 1953 թվականին։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ.— Ընթացիկ 1954 թվականին Սովետական Հայաստանում բացառիկ ուշադրություն է նվիրվելու ժողովրդական սպառման ապրանքներ արտադրող նոր ձեռնարկությունների կառուցման և հների ընդլայնման վրա՝ նպատակ ունենալով որքան կարելի է ավելացնել նման ապրանքների թողարկումը, որպեսզի հնարավոր լինի լիովին բարելավել բնակչության առող պահանջները։ Թեքն արդյունաբերության մինիստրությունը գծով այդ նպատակին արվող հատկացումները կազմում են 43.000.000 ռուբլի՝ 19.000.000 ռուբլով ավելի, քան անցյալ տարի։ Սենդի արդյունաբերության նոր ձեռնարկությունների կառուցման և հների ընդլայնման համար ընթացիկ տարում ծախսվել է 68.000.000 ռուբլի։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ.— Կիրովական քաղաքը քառասուն թափով աճում է։ Այն դարձել է այժմ Սովետական Հայաստանի տնտեսական, կուլտուրական և վարչական կենտրոններից մեկը։ Քաղաքն ունի կուլտուրական շատ հաստատություններ։ Միայն առողջապահական հիմնարկների թիվը 1946 թվականի համեմատությամբ կրկնապատկվել է։ Ներկայումս կառուցվում են նոր հիվանդանոց, ծննդատուն, հանգուցյալների տներ, բուժարաններ։

Ընդարձակվում է կուլտուրական հիմնարկների թիվը։ Կառուցվում են ուսումնական 5 նոր խոշոր շենքեր՝ մեքենաշինության դպրոցների, տեխնիկումների, մանկավարժական ուսումնարանի համար։ Շուտով կավարտվի Կուլտուրայի պալատի կառուցումը։ Դա մի հոյակապ շենք է, որտեղ տեղավորվելու են քաղաքային թատրոնը, կենտ, գրադարան-ընթերցարանը։

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայաստանի արհեստագործական կոոպերացիան տնտեսական խոշոր միավորում է, որի ընդգրկում է ամենատարբեր մասնագիտությունների տասնյակ հազարավոր արհեստավորներ։ Այդ կոոպերացիայի ձեռնարկությունները արտադրում են քաղաքացիական ապրանքներ։

Ընթացիկ տարում արհեստագործական կոոպերացիան ավելի է ընդարձակել իր գործունեությունը։ Երևանում, Լենինականում և Կիրովականում գործի են դրվելու կարի, կոշիկի, կահույքի նոր գործարաններ։ Երևանում և Լենինականում կառուցվելու են տրիկոտաժ գործվածքների, մանվածքային և կարի ձեռնարկություններ։ Գործող ձեռնարկություններից շատերը վերակառուցվելու և ընդլայնվելու են։

Նոր ձեռնարկությունների կառուցման և հների ընդլայնման համար այս տարի ընդամենը ծախսվելու է շուրջ 25.000.000 ռուբլի։

ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ.— Նախահեղափոխական հայ գյուղը գաղափար չուներ էլեկտրականության մասին։ Այժմ Հայաստանի գյուղական բնակավայրերի մոտ 70 տոկոսը սպառվում է էլեկտրականությունից։ Էլեկտրական էներգիան գործածվում է ոչ միայն լուսավորման, այլև կենցաղային ու արտադրական կարիքների համար։ Ընթացիկ տարում էլեկտրականությունից օգտվող գյուղերի թիվը անհամեմատ կաճի։ Այդ նպատակով, բացի գործող էլեկտրակայաններից, մի շարք շրջաններում կառուցվում են տեղական նշանակություն ունեցող էլեկտրակայաններ։

ՀԱՅԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ.— Հունվարի սկզբներին Կիրովականում շահագործման հանձնվեց հացի նորակառույց գործարանը։ Նախկինի համեմատությամբ նոր գործարանը կարող է երկու անգամ ավելի արտադրանք տալ։

Ներկայումս հացի խոշոր, մեքենայացված գործարաններ են կառուցվում Հայաստանի մի շարք շրջանային կենտրոններում։

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ.— Բարեկամական սերտ կապեր գոյություն ունեն Հայաստանի աշխարհագրական ընկերության և Ուկրաինայի աշխարհագրական հիմնարկների միջև։ Այդ կապերն օգնում են երկու ռեսպուբլիկաների գիտնականներին ավելի հաջող վարելու աշխարհագրական գիտության հետ կապված հարցերի լուծումը։

Հայաստանի աշխարհագրական ընկերությունը Ուկրաինայի տարբեր քաղաքներից ստանում է աշխարհագրական և քարտեզագրական գանազան հրատարակություններ, որոնց թվում քարտեզներ, գիտական ամսագրեր և այլն։ Օդեսայի պետական համալսարանից ստացվել է «Համատարած աշխարհացույցը հայերեն հազվագյուտ քարտեզը, որը հրապարակվել է Ամստերդամում 1695 թվականին։

Հայաստանի աշխարհագրական ընկերության աշխատանքների հետ ծանոթանալու համար հաճախ Երևան են այցելում Ուկրաինայի գիտնականները, Ուկրաինական խոշոր քաղաքների համալսարանների աշխարհագրական ֆակուլտետների ուսանողները։

ԲՐՈՆԶՅԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԶՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ.— Երևանում ստեղծվել է բրոնզյա գեղարվեստական ձուլվածքների արհեստանոց, որի կարիքը վաղուց ի վեր զգացվում էր։ Այժմ ամեն տեսակի գեղարվեստական ձուլվածքներ, այդ թվում նաև բրոնզյա արձաններ պատրաստվելու են տեղում, մինչև առաջ հարկ էր լինում նման դեպքերում դիմել Լենինգրադում և Սովետական Միության մի քանի այլ քաղաքներում գոյություն ունեցող ձեռնարկություններին։

Ներկայումս նոր ստեղծված այս արհեստանոցում ձուլվում է հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բրոնզյա մեծադիր արձանը, որը դրվելու է Երևանի օպերային թատրոնի առջև գտնվող հրապարակում։ Այստեղ են ձուլվելու նաև տաղանդավոր հայ ֆրանսիացի Ալեքսանդր Սպենդիարյանի, ինչպես նաև Մատենադարանի մոտակայքում շենքի առջև դրվելիք հայ մատենագիրների բրոնզյա արձանները։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԾԱՎԱԾ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԵՏ

Ինչպես երեկ հաղորդեցինք, երեկ խմբագրությունս այցելեց Հոգեշնորհ Շավարշ վարդապետ Գուլումճյան։ Առիթեն օգտվելով հետևյալ տեղեկությունները քաղեցինք Դամասկոսի հայ գաղութի մասին։

— Դամասկոսի հայության թիվը կհասնի յոթ հազարի, Հոմսի և շրջաններուն ժողովուրդը՝ հազար հոգիի, որոնք իրենց ապրուստը կճարեն առևտուրով և արհեստով. ազատ ասպարեզ ունեցող բավական թվով հայեր ալ կան, իսկ մեկ մասն ալ կապրի սև աշխատանքով և բոլորն ալ կապրին խաղաղորեն և որպես Սուրիո քաղաքացիներ կվայելեն ամեն ազատություն։

— Ազգային դպրոցական գործերը կանոնավոր վիճակի մեջ են։ Թարգմանչացի տնօրենն է պարոն Նուպար Աբգարյան, իսկ Սահակյանինը՝ Ստ. Թիթեղյան։ Երկու դպրոցները, ինչպես նաև Բարգեհյան մանկապարտեզը, ենթակա են Ազգային իշխանության։

Դպրոցական ծրագրին մեջ փոփոխություն մտցվեցավ այն ձևով, որ աշակերտը ներկայանա արաբական «Սերտիֆիկայիթ» քննությանը։

Դժբախտաբար հարուստ դասակարգը կշարունակե իր զավակները ղրկել օտար վարժարաններ։

Կազմված է և կանոնավորապես կգործե Ազումիեի Նորակազմ հանձնախումբը։

Ազգային ժողովները կանոնավորապես կգործեն։ Ի մոտո պիտի գումարվի Գավառական ժողովը՝ ընտրելու կաթողիկոսական ընտրության պատգամավորները։

Բյուջեն ինքնարավ է և կգոցվի ազգայիններու գոհողությամբ։

Քանի մը տարվան մեջ նորոգվեցավ եկեղեցին և բակը։ Առաջնորդարանը օժտվեցավ ջուրով, որ նախապես չուներ։ Եկեղեցիի ներքին կողմը ծեփվեցավ, յուղաներկվեցավ գմբեթը, վտանգված մասը 6 օղակով ամրապնդվեցավ։

Այս բոլորին համար ծախսվեցավ 7.000 ոսկի, բացի բակի սալահատակումեն, ուր ծախսվեցավ 4.000 ոսկի։

Այս անգամ իբր երեսփոխան ընտրվեցավ մեկ քրիստոնյա (Դամասկոսի շրջաններին)՝ դոկտ. Յուսուֆ Ջբրան Լուքզ։

Ժողովուրդին մեջ կտիրե համերաշխական ոգին։

— «Ի՞նչ է ձեր կարծիքը կաթողիկոսական ընտրության մասին» հարցումին հոգեշնորհը պատասխանեց.

— Սխալ է նեղություն պատճառել 80-ամյա Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքին. նախ Նորին Ամենապատվությունը հազիվ սկսած է կազմակերպել այդ կարևոր թեմը (մոտ 100.000), բանալ նոր դպրեվանք մը։ Հազիվ թե գտնվի արժանավոր թրքահպատակ մը իր բացը գոցելու համար։

Իմ կարծիքով, ավելցուց հոգեշնորհ Շավարշ վարդապետ, լավագույն և արժանավոր կաթողիկոսական թեկնածուն կնկատեմ դերաշնորհ Խաղ այքեպիսկոպոս Աջապահյանը։

(«ԱՐԱՐԱՏ», 23 Նոյտեմբերի 1953 թ)։

ՋԱԿԱՐԴԱՅԻ ՈՒ ՍՈՒՐԱԲԱՅԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Քառասուն հայեր կապրին Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարդայի (նախկին Բատավիա) մեջ։ Ունին ազգային վարչություն մը, որ կհսկէ ֆոնդերու և եկամուտներու վրա։

Ս. Հովհաննես եկեղեցին կառուցված է 1854-ին տիկին Խաթունի և օրիորդ Թագուհիի բարերարությամբ։ Կան մանուկներու և որբևայրիներու հատուկ ֆոնդեր, որոնցմէ կօգտվին չքավոր սան ու սանուհիներ, ինչպես նաև կարոտյալներ։

Սուրաբայայի մեջ կան 250 հայեր։ 1928-ին կառուցված է Ս. Գեորգ եկեղեցին։ Ունին երկու կրթարաններ՝ «Մանուկ» և «Հարություն» անուններով։ Ունին երաժշտասեր և թատերասիրաց երկու միություններ, որոնք հանդեսներ կսարքեն, ներկայացումներ կուտան։

Հ. Բ. Ը. Միությունը Սուրաբայայի մեջ ունի մասնաճյուղ մը։

Սուրաբայայի հայ դաղութը ունի դեռ Թուրքյան գրադարան-ընթերցարանը, ինչպես նաև մարզական ակումբ մը։

Հայեր կան նաև Մաքասսար կղզիին վրա և այլուր։ Ընդամենը շուրջ 400 հայեր կան Ինդոնեզիական հանրապետության մեջ։

(«ՋԱՐԹՈՒՆՔ», 20 նոյեմբերի 1953 թ.)։

ԽՈՒՄԲ ՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Շահինյան և Ազարյան ապշեցուցին Փարիզի մարզասեր հասարակությունը

ՓԱՐԻԶ.— Ֆրանսա—ՍՍՌՄ ընկերության հրավերով խումբ մը սովետ մարզիկներ վերջերս այցելեցին Փարիզ և Ֆրանսայի զանազան քաղաքները։ Այս խումբին մաս կկազմեին Սովետական Հայաստանի երկու համբավավոր ախոյաններ՝ Հրանտ Շահինյան և Ալբերտ Ազարյան։

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-ը օգտվելով այս բարեպատեհ առիթեն՝ սիրալիր ընդունելություն մը կազմակերպած էր Փարիզի Հայկական տան սրահներուն մեջ՝ ի պատիվ սովետ մարզիկներուն։

Հայ մարզասեր երիտասարդներու հոծ բազմություն մը եկած էր ջերմագին խանդավառությամբ ծափահարելու մեր երկրին մարզիկները։ Շահինյանն ու Ազարյանը շնորհալիորեն սեղմելով իրենց երկարող հարյուրավոր ձեռքերը, հաճույքով կպատասխանեին իրենց ուղղված բոլոր հարցումներուն։ Հետո Հայրենիքեն ժամանող երկու ախոյանները ջերմապես շնորհավորեցին Փարիզի զույգ սեռերու պատկանող հայ մարզիկները։

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-ի նախագահը՝ Մ. Տարոնյան բարեգալուստի մաղթանքի խոսքերեն հետո իրենց հանձնեց բաժակներ, խնդրելով իրենցմէ հաղորդել Սովետական Միության, ինչպես նաև Հայաստանի մարզիկներուն, Ֆրանսայի հայ եղբայրներուն անկեղծ ողջույնները։

Որոշ ընդոստ ծափահարություններու ետև Հրանտ Շահինյան խոսք առավ։ Հազիվ երեսուն տարեկան, իսկական հայու տիպար, սև բեղերով երկայնահասակ այս հպարտ, ամոանացած և երկու գավակներու արժանավոր հայրը, որ միջազգային ախոյանական մրցումներուն մեջ փայլուն հաջողություն ձեռք բերավ, և այժմ իրավագիտական ուսումը կշարունակէ Երևանի համալսարանի մեջ փաստաբան ըլլալու համար, հետևյալ ձևով պատասխանեց Տարոնյանի բարեգալուստյան մաղթանքի խոսքերուն.—

«Բարեկամնե՛ր, Սովետական Միության մարզիկներու պատգամավորությունը շափազանց գոհացված է իրեն հանդեպ եղած այս սիրալիր ընդունելութենեն, որուն համար անկեղծորեն շնորհակալ ենք։ Կհուսամ, որ այս հանդիպումը վերջինը չէ, որ պիտի ըլլա. ես կկարծեմ, որ մենք հաճախ առիթ պիտի ունենանք հանդիպումներ ունենալ, ըլլա հոս (Ֆրանսա), ըլլա մեր Մայր Հայրենիքին մեջ։

«Ես խոսք կուտամ Ձեզի՝ մեր Հայաստան վերադարձին ձեր անունով ողջունել հայ ժողովուրդը և ըսել իրենց, թե Ֆրանսայի հայերը անքակտելիորեն կապված են Մայր Հայրենիքին, և իրենց կարելիության սահմանին մեջ կաշխատին խաղաղությունը պաշտպանելու համար»։

Ավելորդ է ըսել, որ այս հակիրճ բայց ոգևորիչ խոսքերը ի՞նչ մեծ ցնծությամբ ու օվասիոնով ընդունվեցան։

Մեր երկու հայ արիները այնպիսի գուրգուրանքով մը շրջապատված էին, որ Տարոնյան ստիպվեցավ խնդրել ներկաներին շատ չնեղել զանոնք իրենց անհատական հարցումներով։

Եթե Շահինյանը ընտանիքի հայր է, մինչ Ազարյանը դեռ 21 տարեկան հուժկու երիտասարդ մըն է, չափազանց համեստ իր շարժումներուն մեջ, ինքն ալ բեղավոր Շահինյանին պես։ Ազարյան երկաթագործ եղած է Կիրովականի մեջ, մինչև այն օրը, երբ ան Շահինյանին աշակերտ դարձած է։

Ներկայիս ան ուսանող է Երևանի Մանկավարժական ինստիտուտին մեջ։ Ազարյան «օղակի մրցումներու մասնագետ է և ախոյան Սովետական Միության։

Հ.Մ.Ը.Մ.-ի կազմակերպած այս հիշատակելի ընդունելության հանդեսը վերջացավ տեղիս հայ մարզիկներու քանի մը ելույթներով, որոնք դնահատվեցան սովետ մարզիկներու կողմե։

***

Փարիզի Պալե դե սպորտը բերնե-բերան լեցուն է. երեսուն հազար հոգի կհաշվվի ներկաներուն թիվը։ Երկու օր տևող մարզական այս մրցումները կատարելապես ապշեցուցին ոչ միայն հանդիսականները, այլ նաև ֆրանսացի և օտար մասնագետները։

Ազարյան 10 թվանիշ կստանա «օղակի» մրցման մեջ։

Ազարյանի այս «օղակի» մրցումեն վերջ երբ դատավորները միաձայնությամբ 10 թվանշան տվին անոր, ժողովուրդը որոտընդոստ ծափահարությամբ ընդունեց դայն, որովհետև ցարդ աշխարհի վրա ուրիշ որեէ ատլետ (մարզիկ) չէ կարողացած հավասարիլ կամ հասնիլ այս չափազանց դժվարին մասնագիտության։

(«ԼՐԱՐԵՐ», 2 փետրվարի 1954 թ.)

ԵՐԳԱՀԱՆ ՕՆՆԻԿ ՊԵՐՊԵՐՅԱՆ ՖԻԼԱԴԵԼՖԻՈ ՄԵՋ

Ֆրանսահայ հանրածանոթ երգահան և խմբավար պարոն Օննիկ Պերպերյան Նյույորքի Կարնեգի հոլին մեջ իր հաջող նվագահանդեսեն հետո, հունվար 25, երկուշաբթի օր Ֆիլադելֆիա ժամանեց, հոն ևս նվագահանդես մը տալու համար մարտ 14-ին։

Նվագահանդեսը պիտի հովանավորվի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցվո կողմե։

Պարոն Պերպերյանի ներկայությունը օգտագործելով, երկուշաբթի իրիկուն թեյասեղան մը սարքվեցավ եկեղեցվո սրահին մեջ, ուր երաժշտասերներու լեցուն քազմություն մը հավաքված էր։

Տաղանդավոր երգահան հյուրը հայկական երաժշտության մասին խիստ շահեկան դասախոսություն մը տվավ, հատկապես ծանրանալով հայ ժողովրդական երգի կառուցվածքին և բովանդակության վրա։

Ունկնդիրները խորապես տպավորվեցան պարոն Պերպերյանի դասախոսությենեն, այն համոզումը կրելով, թե սքանչելի երաժշտությամբ մը օժտված ենք, և թե հանճարեղ և ստեղծագործ ժողովուրդ է մերինը։

Թեյասեղանին նախագահեց Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցվո ժրաջան հովիվ արժանապատիվ Տեր Լևոն քահանա Առաքելյան, որ դասախոսը ներկայացուց իբրև հայ ժողովուրդի արժանավոր զավակներեն մին, և իբրև մեծատաղանդ երգահան մը։

Դասախոսությենեն հետո խանդավառ արտահայտություններ եղան տրվելիք երգահանդեսին մասին և ներվաներեն շատեր իրենց գործնական աջակցությունը խոստացան ձեռնարկին հաջողության համար։

Նվագահանդեսը դլուխ հանելու համար ստեղծվեցավ հանձնախումբ մը, որ իր կազմը ընդարձակելով դործի պիտի անցնի։

Երգչախումբը իր առաջին փորձը պիտի կատարե առաջիկա երկուշաբթի օր եկեղեցվո սրահին մեջ։

Կասկած չունինք, որ պարոն Պերպերյանի նվագահանդեսը Ֆիլադելֆիո երաժշտասեր հասարակության կողմե պիտի արժանանա անվերապահ քաջալերության և հայ երգը անդամ մը ևս պիտի պանծա իր մեծատաղանդ երգահաններեն մեկուն միջոցավ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻԼԱՆ

(«ԼՐԱՐԵՐ», 22 փետրվարի 1954 թ)

ԽՈՐԵՆ ՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ ԿՊԱՐԳԵՎԱՏՐՎԻ ՖԻԼԱԴԵԼՖԻԱ ՄԵՋ

Խորեն Տեր Հարությունյանի «Խաչեն էջքը» արձանը Ջորջիա մարմարով քանդակված՝ պարգևատրվեցավ Ճ. Տ. Ուայտների հիշատակին ոսկե մեդալով, ժամանակակից ամերիկյան նկարչության և քանդակագործության 149-րդ տարեկան ցուցահանդեսին մեջ, որ դեռ կշարունակվի Պենսիլվանիո Գեղարվեստից ակադեմիային մեջ, ի Ֆիլադելֆիա։ Ճ. Տ. Ուայտների հիշատակին մեդալը անցյալ տարիներու ընթացքին շահած են բազում անվանի արվեստագետներ։

Տեր Հարությունյանի քանդակի մասին արտահայտվեցան զանազան թերթեր։ Կմեջբերենք հատված մը Նյու-Յորք Տայմզեն, որ իր հունվար 24-ի թվին մեջ գրախոսելով ցուցահանդեսի մասին, Տեր Հարությունյանի երկը կնկարագրե որպես «բարձրորեն ակնածելի, բայց անպայմանադրական «Խաչեն էջքը» քանդակված մարմարով, որ ցույց կուտա երկարած մարմինը կողքին հակած շեղակի պատվանդանի մը վրա, նրբորեն քանդակված կերպար մը...»։ Իսկ Ֆիլադելֆիո Սրնի բյուլետեն թերթը հունվար 31-ի թվին մեջ մեծկակ լուսանկարով մը ներկայացնելով այս արձանը, կըսեր որ «...Տեր Հարությունյանի կերպարը քանդակված է մեծապես այն մեկնաբանական եռանդով, որ կբնութագրեր քրիստոնեական դարաշրջաններու հին քանդակագործներուն գործերը, երբ եկեղեցվույն համար այնքան մեծ նշանակություն ուներ խորհրդապաշտությունը։ Կերպարը, որ Ակադեմիայի գլխավոր գալերիային կեդրոնը զետեղված է, ընկողմանած դիրքի մեջ է, հեց փայտե կառույցի մը վրա, որ կթեկադրե մեկ ծայրեն քիչ մը վեր բարձրացած խալ մը»։

Այս ցուցահանդեսին մեջ ներկայացված է նաև Ջան Հովհաննեսը իր «Կոկետը» արձանագործությամբ։

Ցուցահանդեսը, որ հունվար 24-ին բացվեցավ հանրության, նախորդ երեկոյան տեղի ունեցած պրիվյուի փայլուն ընդունելությեն մը վերջը պիտի շարունակվի մինչև փետրվար 28։

ԹՂԹԱԿԻՑ

(«ԱՐԱՐԵՐ», 9 փետրվարի 1954 թ.)

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԵՐԳՉՈՒՀԻ ՋԱՐՈՒՀԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԿՀՄՇՑԵ ՓԱՐԻԶԻ ԻՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ

Փարիզյան մամուլը վերջերս ներբողալից տողեր նվիրած է սովետահայ հայտնի երգչուհի Զարուհի Դոլուխանյանի (Զարա Դոլուխանովա) մասին, որ Փարիզի Մարինյի թատրոնին մեջ արտակարգ հաջողությամբ երգահանդես մը սարքած էր։ Ավելի հետո ան երդած է նաև Սալ Կավոյի մեջ նույնքան հաջողությամբ։

«Կոմբա» հրաշալի կգտնե Դոլուխանյանի ձայնը և կմաղթե, որ նոր հայտագրով վերադառնա ֆրանսական բեմերուն վրա, իսկ «Լը Մոնդի» երաժշտական քննադատ Ռընե Դյումենիլ կգրե.—

«Սովետ արվեստագետներուն Եվրոպա կատարած շրջապտույտը մեծ հաջողությամբ պսակվեցավ։ Ասկե առաջ խոսեցանք բալետի հայազգի աստղերեն Ֆարմանյանցի մասին, ներկայիս ալ հաճույքով կանդրադառնանք հայազգի երգչուհի Զարա Դոլուխանովայի։

«Այս զմայլելի արվեստագիտուհին օժտված է գեղարվեստական բոլոր ձիրքերով։ Բոլոր շնորհները վրան թափած են, բարի պարիկները օրրած են զայն, զերծ որևէ թերութենե։ Անզուգական ու հմայիչ կերպարանքով, որուն վրա շնորհք մը ևս կավելցնե իր պարզությունը։ Տիկին Դոլուխանովա արտակարգ գեղեցկությամբ ձայն մը ունի, հզոր, ծավալուն, օրինակելի երաժշտական զգայնությամբ, աշխատանքի շնորհիվ ոճավորված։

«Այս մեծձո-սոպրանոյին առաջին շեշտերեն իսկ կարելի եղավ դուշակել կատարելագործված երգչուհին։

«Զարա Դոլուխանովայի հայտագիրը կբաղկանար հայկական ժողովրդական երգերե, ինչպես նաև Չայկովսկիե, Ռախմանինովե, Շաբոբինե, Գրիգե և Սեն Սանսե հատընտիր կտորներե։ Տիկին Դոլուխանովա իր բյուրեղանման ձայնով գիտցավ մեկնաբանել այս բոլոր երգերն ալ իրենց պատշաճ ոճով ու շեշտով։

«Սովետահայ երգչուհին երբ Մոսկվայի երաժշտանոցը մտավ, նպատակ չուներ ձայնը մարզելու։ Նախ դաշնակ, ապա ջութակ սորվեցավ և իր երաժշտական մշակույթը

կատարելագործելէ վերջ ընտրեց երգը։ Ան իր այդ ասպարեզին մէջ շուտով հառաջացաւ և արժանացաւ Ստալինյան մրցանակի։ Առաջին անգամ երգել սկսաւ Երևանի օպերային մէջ ու ապա անցաւ Մոսկվա, ուր դարձաւ հասարակության կուռքը։ Սովետական սոխակը հիմա ալ պաշտամունքի առարկա դարձած է Փարիզցիներուն։ Լույս քաղաքի երաժշտական և գեղարվեստական շրջանակները լավագույն հիշատակը պիտի պահեն այս դմայլելի երգչուհիենն։

Մյուս կողմէ «Առա գեղարվեստական շարթաթերթը «Հայտնություն մը՝ երգչուհի Զարա Դոլուխանովա» խորագրին տակ ի միջի այլոց կգրէ.—

«Ստալինյան մրցանակի պատկավոր սովետ երիտասարդ երգչուհի Զարա Դոլուխանովան մեզի համար զգայացունց հայտնություն մըն է։ Միջազգային մեծ մեծձո-սոպրանոներեն որո՞ւ անունը կուգա մեր լեզվին — էպե Ստիկնանի՞. Մարդարեան Կլո՞դ։ Զարա Դոլուխանովայի ձայնին հնչականությունը նվազ հոյակապ չէ, քան իր հոչակավոր երեցներունը։ Զայնական բացառիկ տեխնիկա մը (ռուսական երգի նոր դպրոց մը կա իտալականին և գերմանականին ճոխ կատող) դեռատի սրվեստագիտուհին մեջ զարգացուցած է ճկունության և զորեղության հատկություններ, զորս միացած կարելի է դանել շատ բացառիկ կերպով։ Այդ իսկ պատճառով թատերական ռեպերտուարը նույնքան լավ կհարմարի իրեն, որքան երգահանդեսներունը։

Ահավասիկ խիստ առաջնակարգ արվեստագիտուհի մը, որուն բազմաթիվ ձիրքերը միմիայն ավելի կրնան հայտնավորվիլ տարիներուն հետ, վասնզի Դոլուխանովա 35 տարեկան է հիմա։

(«ԱՐԱՔԵՍ», 13 փետրվարի 1954 թ.)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ.ԱՀԵ-Վ.ԱՀՅԱՆ, «ՀԱՐԱԼԵՋՆԵՐՈՒ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ»

1953 թվականին Բելգրադում, «Անի» ամսագրի հրատարակությամբ, լույս տեսավ սփյուռքահայ տաղանդավոր բանաստեղծ Վահե-Վահյանի «Հարալեզների հաշտությունը» գիրքը։

1946 թվականին Հայաստանի սովետական գրողների միության 2-րդ համագումարին, սփյուռքահայ մեր բազմաթիվ գրողների հետ միասին, հրավիրված էր նաև բանաստեղծ հեղինակը։ Գրախոսվող նեղիկս գրքում հեղինակը ամփոփել է հուշերի և դեղեցիկ ապավորությունների այն շարանը, որ նա ստացել է Մայր Հայրենիքից, իր այնտեղ դանվելու օրերին։



Գիրքը բաժանվում է վեց գլուխների, որոնցից յուրաքանչյուրը, իր հերթին, բաժանվում է առանձին ենթագլուխների։

Գրքի առաջին մասը վերնագրված է «Ճամբան՝ դեպի Հայրենիք»։ Այստեղ հեղինակը մեծ հույսով ապիս է 1946 թվականին սկսած հայրենադարձությունը՝ համարելով այն հայ ժողովրդի բարեդարության հարատևական կյանքի մեջ տեղի ունեցող մեծագույն իրադարձությունը. «Ներդպիր... բառը կախարդական մի պես դրավեր էր հոգիները, իջեր էր մարդոց սիրտին ու միաքին մեջ»,— գրում է հեղինակը։ Զարթնել էր նորից մեր տարաղիր ու պանդուխտ ժողովրդի դարավոր տառջ բնազդը, այն է՝ դառնալ իր մայրենի երկիրը, իր հողով ու ջրով մի հավաքական ամբողջություն դառնալու համար։

Եվ ահա ինքը, հեղինակը, հայրենադարձների 5-րդ նավի մեջ է։ Մանրամասն նկարագրված են ճանապարհորդական տպավորությունները, ծանոթ, անծանոթ դեմքերի հետ իր հանդիպումները, խոսակցությունները նավի վրա։

Շուտով հայրենադարձների նավը մտնում է Դարդանելի ջրերը։ Ահա՝ և Բոսֆորը, Պոլիսը։ Հայ աղետի, մղձավանջային օրերի ախտոր հիշողություններն են զարթնում հայրենասեր բանաստեղծի սրտում...

Նավը արդեն Սև ծովումն է։ Ահա՝ և Բաթումիի նավահանդիսաը։ Դիմավորողների ձայները, նավապամբի ուրախ հնչյունները, հայրենադարձ պանդուխտների ողջագուրումները, ուրախության և կարոտի արտաշարժ տեսարանները պահը դարձրել էր հուզիչ ու վեհ. «Այդ պահուն, ձայները մրմունջներ էին միայն, ու նայվածքները՝ արցունք» (էջ 23)։

Սկսում են առաջին ծանոթությունները կովկասահայերի հետ, պատմություններ և շրջագայություններ Բաթումիում, դնացքով ուղևորություն դեպի Թբիլիսի և ապա Երևան։

Հասնում է վերջապես Երևան։— Ահա քաղաքային կայարանը, Լենինի հրապարակը, կառավարական տունը, Արովյան պողոտան։ Ուխտավորի ծարված հայացքներով է բանաստեղծը ընկալում ամեն մի շենք, ծառ, արձան։ Նրա մոտ անդամ Հայրենիքի արևն ուրիշ տեսակ է՝ «անուշ, գգվող ու բարի» (էջ 59)։ Հարազատ է հայրենի երկնակամարը։ Մի նոր կենսարար շունչ պարուրում է նրա ողջ էությունը. «Կզդայի,— գրում է նա,— թե երակներուս մեջեն կանցներ ուժ մը՝ որ անծանոթ էր մնացեր ինծի մինչև այն առեն» (էջ 59)։ Մի պահ բանաստեղծը Երևանի բանուկ փողոցների եռուզեռի մեջ է, իր հայրենակիցների հետ։ Այժմ ամեն ինչ հարազատ է թվում նրան, չկա ոչինչ անսովոր կարծեք. «Դարավոր թափառումներեն վերջ, հոգիս վերադարձեր էր կարծես իր բնակարը, ուր ամեն բան նոր՝ բայց և հին էր ու մտերիմ» (էջ 63)։

Այնուհետև հեղինակը մանրամասն պատմում է իր տպավորությունները Երևանում անց կացրած առաջին դիշերվա, սովետահայ մի քանի գրողների ու քննադատների հետ ունեցած հանդիպումների, արտասահմանյան

հայ գրականության շուրջ կարծիքների փոխանակության մասին և այլն։

Բանաստեղծը սրտի անհուն բերկրանքով ու հպարտությամբ է լցված, երբ տեսնում է իր Հայրենիքի եռուն շինարարությունը, նրա ծաղկուն վիճակը։ Նրա համար հաղթանակի, հույզի ու խինդի կոթողներ են «Արարատ» գործարանը, կառավարական տունը, Օպերան, Հաղթանակի կամուրջը և այլն։ Բանաստեղծի սահուն գրչի տակ ամեն ինչ կենդանանում է, խոսում նրա հետ, և ամեն ինչի մեջ իմաստավորվում է Հայրենիքի շունչը։ Ահա՛ Հրազդանը, որի փրփուրները «ունին խոսքը Աբովյանի հոգիին...»։ Հրազդանը «ավանդապահն է դեռ չգրված մեր պատմության—վկան՝ մեր խոյանքներուն, ու խնդակիցը՝ մեր հաղթանակին» (էջ 78)։ Եվ ո՞չ միայն հայրենի բնությունը, երկիրը, այլև այդ բոլորին շունչ տվող հայրենի երկրի մարդը նոր են նրա համար, մինչ այդ չտեսնված։ Նա սրտաբաց է, հյուրընկալ, անմիջական ու լավատես։ Նոր աշխարհի նոր մարդիկն են նրանք՝ կյանքի խիզախումով ու վերելքով խանդավառված։ Ե՛վ Մշակութային կապի գրասենյակում, և՛ փողոցում ու գործարանում, ամենուր, ամեն քայլափոխին նա հանդիպում է սովետական նոր մարդկանց՝ աշխատանքի աշխուժով լեցուն, կենսախինդ մարդկանց, որոնք վայելում են իրենց խաղաղ կյանքի վայելքը։ Եվ հեղինակը կարծես մանկանում է նորից, ապրելով մի նոր սկսվող կյանքով, շրջապատված այդ հարազատ ու սիրելի դեմքերով։

Այդ նույն վերնագրի տակ հեղինակը բավական տեղ է հատկացնում իր այցելությունը Սևան։ «Դեպի Սևան», «Առաջին գիշերը», «Սևանի առավոտը», «Սևանա կղզին», «Սևանա լիճը» ենթավերնագրերի տակ տաղանդավոր հեղինակի գրչի տակ ոգի և կյանք են առել հայրենի բնության հրաշալիքները։ Մեր արձակի մեջ Սևանա լճին նվիրված, բանաստեղծական ամենավառ հույզերով, բնանկարի ամենանուրբ երանգներով նկարված յավագույն տողերը կարելի է համարել Վահե-Վահյանի նկարագրությունները (տե՛ս էջ 92—104)։ Եվ դրանք լոկ բնության նկարագրություններ չեն, այլ՝ խոհ ու երազ։ Սևանը, բանաստեղծի համար բնության հրաշալիք լինելուց առաջ, հայ պատմությունն է, լույս է, իրականություն. «Ու հոլակապ էր ան.— կենա՞լ հոգի մը վրա, որուն մեջ կա քեզմե մաս մը. նայի՞լ շուրջիդ քարերուն, ջուրերուն, լեռներուն, և զգալ թե անոնց վրայեն կանցնի շունչ մը՝ որմե կա հնք մը քու սեփական շունչիդ ալ մեջ. գիտնալ թե պատմություն ունիս, և դուն մեկ մասն ես այդ պատմության... Հոլակա՞պ էր, աշխարհի ամբողջ գանձուղը անգնելի» (էջ 97)։

Նորանոր ապրումներ է ունենում հեղինակը Սևանա կղզու վրա։ Նա մի անգամ ևս համոզվում է, որ հայ ժողովուրդը գիտե պահել իր դարավոր արժեքները։ Խնամքով պահպանվող եկեղեցիները, խաչքարերն ու արձանագրությունները, քանդակազարդ բեկորները ապացույցն են այն բանի, որ մեր ժողովուրդը «ազնվացուցիչ» պաշտամունք ունի իր հնագարյան արժեքներուն հանդեպ։

Այնուհետև սկսում են բանաստեղծ-գրողի այցելությունները զանազան հասարակական վայրեր։ Նա ներկա է լինում Ֆիլհարմոնիայի համերգին, այցելում է դպրոցները, հրապարակները, այգիները և ամենուրեք բանաստեղծ-գիտողը տեսնում է այն նորն ու գեղեցիկը, որը նվաճել են Հայրենիքի անխոնջ զավակները՝ հաստատուն կամքով ու արիությամբ։ Նրա շուրջն են ամենուրեք սովետական պարզ, հասարակ մարդիկ, մեր կայտառ ու ժիր երեխաները։ Մանուկից մինչև ծերունին տարված են աշխատանքի ստեղծագործական եռուզեռով։ Եվ նա, պանդուխտ բանաստեղծը, խոսում է այդ մարդկանց հետ։ Նրանցից շատ շատերը տեսել են աշխարհավեր երկու պատերազմները։ Հրից ու բոցից ազատվելով, մահվան ծանր մղձավանջային օրերից հետո, նրանք իրենց հարազատ Հայրենիքի կապույտ երկնքի տակ այժմ կառուցում են մի նոր աշխարհ։

Ստեղծագործ է հայ ժողովրդի խորունկ հոգին։ Ահա՛ Երևանի Օպերան, որ հավիտենական մի կոթող է հայ ժողովրդի ստեղծագործ ոգու։ Թեմի վրա է Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդը»։ Դերասանների ինչպիսի՞ տաղանդավոր խաղ, ինչպիսի՞ գեղեցիկ բեմահարդարում, աննման դասական երաժշտություն... Եվ այս բոլորը ականատես հեղինակին տեղափոխում է երազների վեհատեսիլ հեքիաթային աշխարհը։ Բայց նա չի սավառնում օդեղեն երկնքում։ Նա շատ լավ գիտե, որ եթե չլինեին սովետական կարգերը, այդպիսի բարգավաճումների անկարելի էր հասնել։

Ահա՛ կերպարվեստի ցուցահանդեսը, ուր «լեռների կախարդական երգիչը՝ Մարտիրոս Սարյանը մրցում է բնության հետ. «Ահա՛ Երևանի թանգարանը, Գրողների տունը, Կերպարվեստի պետական թանգարանը. Հայաստանում ամենուրեք ծաղկում են արվեստները, գիտությունն ու մշակույթը։ Հարալեզները հաշտվել են և կենդանի է հայ ժողովրդի հերոսական ոգին։ Եվ «գեղեցկության ստեղծումին նվիրված» հենց այդ «հայ հոգին՝ իրեն հակատագիր ունեցեր էր շատ ան-

դամ ոսարության ցավն ու մահվան մղձավանջը. հիմա, աղատ ու արևոտ մեր Հայրենիքին մեջ, դաեր էր մեծարանքն իր ժողովուրդին և հովանին իր պետության...» (էջ 178)։

Գրքի երրորդ մասը վերնագրված է «Գրողներու համագումարը»։ Այս գլխում մանրամասն նկարագրված են 1946 թվականի սեպտեմբերի 25—27-ին տեղի ունեցած Հայաստանի սովետական գրողների միության երկրորդ համագումարի նիստերը։ Հեղինակը ընթերցողին մեկ առ մեկ ծանոթացնում է Հայաստանի աշխի ընկնող սովետական գրողների հետ, տալիս է զեկուցումների ամփոփ բովանդակությունները, մեջ է բերում համագումարում իր կարդացած զեկուցումը, որը մի ամփոփ ընդհանրացումն է արտասահմանյան հայ գրականության անցած շրջանների և գրական ներկա ուղղություններին։

Հեղինակը Հայաստանի սովետական գրողների միության երկրորդ համագումարում շոշափված ընդհանուր հարցերից գալիս է մի ընդհանուր եզրակացության. «Մինչև ամբողջական իրականացումը հայրենի հողին վրա միաձուլված մեկ ժողովուրդի և մեկ գրականության իդեալին, պանդուխտի ճակատագիրով մը երկնվող մեր գրականության կենցաղիչ միակ ուժը կրնա բխիլ Մայր Երկիրի մեր ժողովուրդին և անոր մշակույթին հետ խորունկ, անանխապաշար ու սրտանց հաղորդակցութենեն» (էջ 200)։

Այնուհետև գալիս է չորրորդ ընդարձակ գլուխը՝ «Ոգի և կյանք» վերնագրված։ Այստեղ, ինչպես հաջորդ գլուխներում, ամփոփված են հեղինակի այն տպավորությունները, որ նա ստացել է զանազան այցելությունների և հանդիպումների ժամանակ։

Այսպես, «Վարպետին տունը և 3-րդ համագումարը» ենթավերնագրի տակ նկարագրված է գրողների այն սրտառուչ ընկերական հավաքույթը, որը տեղի է ունեցել Վարպետի (Ավետիք Իսահակյանի) հրավերով, իր տանը։ Նվագի, պարերի, կենացների սրտագին ուրախություններով լեցուն գեղեցիկ այդ երեկոն, որին ներկա է եղել ինքը հեղինակը, նրա «Հայրենական օրերու անուշ ապրումներ»-ից են, քանի որ տարբ հավաքույթներուն ստեղծած եղբայրական մթնոլորտին մեջ, կրացվեին հոգիները, և շրթունքները կբլլային ճամրան՝ ամենեն վճիտ և ինքնահայա զգացումներուն...» (էջ 230)։

Ապա տրված են մի շարք բովանդակալից և համոզեցուցիչ նկարագրություններ՝ դիտության, արվեստի, աշխատանքի և գյուղատնտեսության մարզերում կատարած իր մի շարք այցելությունների մասին։

Անհրաժեշտ է նշել, որ Վահե-Վահյանը կարողանում է ընդունել իրերի և երևույթների խորը և մի շարք ընդհանրացումներից հետո ընթերցողին հրամցնել մի այնպիսի եզրակացություն, որն անհերքելիորեն ճշմարիտ է և բխում է իրերի և երևույթների խնայացի ուսումնասիրությունից։ Այսպես, հայ տպագիր գրքի ցուցահանդեսը տեսնելուց հետո, նա հանդում է հետևյալ ճշգրիտ եզրակացության. «Ինչ որ էապես կար՝ անշարժ ու անշունչ այդ գիրքերուն մեջ, ոգեղեն էությունն մրն էր, տնոնց չլացված էջերեն իսկ մեզի խոսող։ Չէ՞ որ աշխատանքին և տաղանության սերին հետ՝ հոգեկան լույսին պաշտամունքը եղեր էր գավանանքը մեր ժողովուրդին...» (էջ 237)։

Հայրենասեր գրողը լինում է Պետական համալսարանում, Գիտությունների ակադեմիայում, ծանոթանում է անվանի հայ գիտնականների, դասախոսների հետ։ Հեղինակը տենման հիացմունքով է խոսում ուսումնադաստիարակչական և ընդհանուր կրթական գործի մասին, որ գոյություն ունի մեզ մոտ բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Նա բերում է թվեր և փաստեր, որոնք անվիճելի ցույց են տալիս այն մեծ առաջադիմությունն ու զարգացումը, որ ձեռք է բերել մեր Հայրենիքը։

«Առողջապահությունը Սովետական Հայաստանի մեջ» ենթավերնագրի տակ հեղինակը մանրամասն թվերով ու փաստերով շարադրում է այն հոգատարության մասին, որ ցուցաբերում է Սովետական կառավարությունը աշխատավորների նկատմամբ։

Հեղինակը լինում է Պետական հանրային գրադարանում, Պետական ձեռագրատանը, Պատմական թանգարանում, Երկրաբանական թանգարանում, Արովյանի տուն-թանգարանում. ամենուրեք առաջադիմություն, կարգ ու կանոն, լավագույն պահպանումն մեր ազգային դարավոր արժեքավոր ժառանգությունների և գլխավորը՝ աշխատանքի ու վերելքի մասսայական խանդավառություն։

Ապա հեղինակը տալիս է մի քանի պատմական վայրեր կատարած իր այցելությունների գեղեցիկ նկարագրությունները։ Ընթերցողի աչքի առջևից կինոժապավենի նման անցնում են հայ շինարար ժողովրդի դարավոր կառուցողական գեղեցիկ արվեստի նմուշներ։ Գառնիի, Գեղարդի հնադարյան տաճարների մասին հպարտանքով է խոսում հեղինակը, միացնելով դրան իր բուռն հայրենասիրությունը։ Ամեն մի քանդակ, ամեն մի քար ու թուի կենդանի վկաներն են հայոց պատմության տխուր և փառավոր էջերի, նրանք խոսում են հեղինակի սրտի ամենա

նուրը յարերի հետ։ Ողեղեն են դառնում հեղինակի խոսքերը. հուզիչ ու տրամաբանախիզ, երբ խոսում է հայի անցյալի արյունոտ իրականության մասին. «Ներքին տրամությունները շատ են տեսեր այս վայրերը—դեղինը մայթին ու մուրը վատությանն...։ Ամսոտեին անցեր է օտարը, սև հեղեղի մը պես իր հորձանքին մեջ առնելով ծերն ու մանուկը, ծառն ու ծաղիկը» (էջ 327)։

Սակայն, «Մեր պատմությունը... եղերական՝ որքան դյուցազնաշունչ, մռայլ՝ որքան պայծառ։ Լույսով շաղախված հայ հոգին պատառներն են անոր էջերը՝ արյունոտ դրոշանակով» (էջ 327)։

Անցել են խաժամուժ ոտար բռնակալները՝ իրենց հետևից թողնելով սով ու արհավիրք, արյուն ու արցունք, բայց մնացել է անմեռ մեր ժողովրդի ոգին, մնացել են Գառնին ու Գեղարդը. «Գեղարդն ու Գառնին,— դրում է բանաստեղծը,— ավելի ինձի համեմատ հայ մարդը այնպես՝ ինչպես ոչ մեկ մատյան կամ բանավոր վկայություն կրցեր էր տալ մինչև այն ատեն» (էջ 328)։

Հայաստանի ազգությունաբնակչական, գյուղատնտեսական հզոր վերելքին ծանոթանալու համար բանաստեղծ-հեղինակը մի քանի այցելություններ է կատարում Հայաստանի մի շարք ֆաբրիկաները, գործարաններն ու հանրային դաշտերը։ Նա այցելում է Քանաքեռի հիդրո-էլեկտրակայանը, «Արարատ» գործարանը, Լենինականի Տեքստիլ կոմբինատը, Մսի կոմբինատը, լինում է Արտաշատի կոլտնտեսությունում և այլն։

Ամենուրեք նրան շրջապատում են նոր կենցաղի, նոր համոզմունքի տեր մարդիկ. նրանք բոլորն էլ, մեծից փոքր, պատմում են նորեկ հյուրին իրենց աշխատանքային մեծամեծ հաջողությունների մասին, նրանցից յուրաքանչյուրը իր աշխատանքի մեջ մի-մի ստեղծագործ խանդավառ մարտիկ է, մի նոր հերոս։

«Ոտաբուրյան ուրվականը» վերնագրի տակ հեղինակն իր վերջին այցելություններն է կատարում հայրենի երկրում։ Ուշադրավ է Էջմիածին—Զվարթնոց մի քանի այլ գրողների հետ նրա կատարած ճանապարհորդության նկարագրությունը։— Ահա՝ հայության հնադարյան Տաճարը՝ Էջմիածինը։ Սրտի անհուն թրթռոցով է մտնում բանաստեղծը նրա դռնից, մի պահ, միստիկական վերապրումներ ապրելով, նրա հոգում վերակենդանանում է անցյալը՝ լուսեղեն ու խնկաբույր. «Դարերու խորերեն բխած ի՞նչ հնչեր լսեր էին մեր պապերուն շրթունքներուն դրոշմված այդ քարերը, ու փաթթվեր էին անոր սյուներուն ի՞նչ նայվածքներ՝ որոնց լույսեն ճաճանչ մը կար հիմա մե՛ր ալ աչքերուն մեջ» (էջ 445)։ Հեղինակը համոզված է, որ Էջմիածինը հայ ժողովրդի հավաքականության հիմքն է, նրա «հոգեոր ատենը», և որ կաթուղիկեն «կիսորդանշեր հայությունն հոգին իսկ» (էջ 446)։ Ու «Ճշմարիտ ատեն հայկյան էջմիածնի դանդեղուն ձայնը իր սիրտին մեջ, կմանչնա դայն իրեն հարազատ ու հավատարիմ ուղեցույց ու կատաղեորդի անկե» (էջ 446)։

Սրտառուչ է ու անմոռանալի հայրենասեր բանաստեղծի հանդիպումը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ։ Հեղինակը այդ փոքրիկ, կարճատև հանդիպման իսկ ժամանակ կարողանում է հոգեբանորեն ըմբռնել Վեհափառ Հայրապետի հոգեկան այն բարեմասնությունները, որոնք տիպական են նրա անձի ու հոգու համար։ Հանձին Վեհափառ Հայրապետի հեղինակը տեսնում է յայնախոհ ոգու տեր, սիրո և միաբանության հարդորը բերնին, իր ժողովրդի մասին միշտ հոգացող ու հեռաքրքրվող լուսավորի արժանաբնտիր Գահակալին։ «Ամենայն Հայոց Հայրապետեն բաժնվեցու ես՝ հպարտ ավելի և զորացած» (էջ 448),— վերջացնում է հեղինակն իր խոսքը։

Գրքի վերջին՝ վեցերորդ գլուխն է «Պանդրխտություն վերստին»։ Կոշմարային ծանրությամբ հեղինակի սրտում նստել է Հայրենիքից բաժանվելու ուրվականը— ի՞նչպես բաժանվել, ի՞նչպես թողնել հայրենի երկիրը, երբ գիտես, որ դու էլ նրա մի դավակն ես, մի մաս կա քո մեջ հայրենի հողից, տեսել ես նրա վերածնունդը, այդ բոլորից հետո թողնել-հեռանալ պանդխտության անհարազատ գիրկը— շատ է դժվար։ Մի փոքր հետո՝ հրաժեշտի վերջին խոսքեր, սրտառուչ բաժանում Երևանից։ Ու հեղինակը գրում է. «Հոգիս կարծես կապված բլլար Երևանին՝ անհամար լարերով։ Որքան փհեանալինք, կձգվեին այդ լարերը ավելի՛, կվիրածվեին անխղելի ցանցի մը ու կառնեին դիս իրենց պարուրին մեջ։ Երևա՞նն էր անցեր իմ էությանս, թե անրաժանելի մաս մը ինձմե ձուլվեր էր անոր հետ։ Ժամանակն ու հեռավորությունը պիտի չկարենային փարատել դայն, կորզել ինձմե» (էջ 467)։

Վերադարձի ճանապարհին հուզիչ խորհրդածություններ ունի «Մայր Արարատի հետ։ Հեղինակը բանաստեղծական գեղեցիկ համեմատություն է կատարում Արաքսի և հայոց պատմության միջև և քացահայտում նրանց նմանությունները։ Սակայն բանաստեղծի սիրտը ուրախ է, ցնծում է նա, որովհետև իր «հոգիի ոիբերով» տեսել է, որ արդեն հարալեղները հաշտվել են մեզ հետ. «...Իզո՞ւր է փնտրել զանոնք կերպարանքի մը մեջ քարեղեն։ Շունչ են անոնք ու ոգի։ ...Ոգի՛ն են անկողոպուտ առատության, Արտաշատի այգիներուն մեջ ու գաշտերուն Շի-

բակի։ ...Ներկա են անոնք ամեն տեղ և ամեն ժամ, հանքերուն մեջ ու գործարանները, Այավերդիեն մինչև Ղափան, Լենինականեն մինչև Նոր-Արարիր ու Երևան։ ...Հայոց վերածնած Հայրենիքին են հարալեզները, որ որբեր են դարավոր անեծքը մեր պատմության։ (էջ 475—476)։

Վահե-Վահյանի դիրքը ավարտվում է մի ոիմվոլիկ վերջաբանով, ուր իմաստավորված է Հայրենիքի միասնականության գաղափարը։ Հեղինակի հայրենասիրական վառ պաթոսով գրված խոսքերը այսօր էլ հնչում են որպես խրոխտ ու զգուշացուցիչ մարտակոչ ոիյուրքահայության համար.

«Հայոց Հայրենիքն է ավազանը հայ հանճարին և ուժին։

Հայր տեր է և իշխան՝ իր հողին վրա միայն։

Մի՛ հավատար։ Չկա Հայրենիք՝ առանց հողի, և ազգ՝ առանց Հայրենիքի»։

***

Որո՞նք են գրքի էական արժանիքները։—

Ամենից առաջ, հեղինակը էպիկական լայն կտավի վրա կարողացել է ընդգրկել իր առջև դրած ամբողջ նյութը։— Նրա աչքից չի վրիպում ո՛չ մի մանրուք։ Առօրյա ամենափոքր երևույթները նա կարողանում է խորը և համոզեցուցիչ կերպով ըմբռնել և նրանց վրա կառուցել իր եզրակացությունները։ Հեղինակը նրբազգաց է, զգայուն և խորհող։

Գրքի սկզբից մինչև վերջ, կարմիր թելի պես, անցնում է հեղինակի հայրենասիրական շունչը։ Առանց երևակայությունների և չափազանցությունների դիրքն ընկնելու, նա ակնառության անաչառ աչքով տալիս է այն, ինչ որ իրոք կա իր Հայրենիքում։ Հեղինակի խանդավառությունն ու ոգևորությունը իզուր չեն, նրանք բխում են ռեալ իրականությունից— նրանք ճշմարիտ հայրենասերի սրտի բարախյունն են. հեղինակը ո՛չ միայն տեսնում է իր Հայրենիքի այսօրվա անահման վերելքն ու առաջընթացը, այլև հենց այդ ներկայի մեջ տեսնում է իր Հայրենիքի շքեղ ու փառավոր ապագան։

Գրքի ամեն մի վերնագրի տակ կարելի է հանդիպել ուշադրավ նկարագրություններ։ Հեղինակը վարպետ գրչով տիպականացնում է Հայրենիքում իր հանդիպած մի շարք մասավորականների։ Այսպիսիներից են, օրինակ, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Նախրի Զարյանը, Հ. Գրիգորյանը, Հրաչյա Քոչարը, Շիրազը և ուրիշները։

Լեզուն ճոխ է, պատկերավոր, բանաստեղծական։ Շատ տեղեր ուղղակի նա վեր է ածվում արձակ բանաստեղծության։ Բնության պոետական շնչով գրված զմայլելի նկարագրությունները գրքին տալիս են առանձին երանգ, հաստատելով այն գեղարվեստական լայն կտավի գործերի աստիճանին։ Գիրքը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։ Հեղինակը կարողացել է նյութը դասավորել այնպես, որ առաջացրել է պատկերների և ասպավորությունների այլազան հաջորդականություն, որը և առաջ է բերում ավելի մեծ հետաքրքրություն։

Գիրքը ծանրաբեռնված չէ ավելորդ թվերով և պիտական խրթին մեկնաբանություններով։ Կազմված է այն վերին աստիճանի խնամքով։ Պատկերները ընտրված են գեղագետի նուրբ ճաշակով։

Այսպիսով, Վահե-Վահյանի «Հարալեզներու հաշտարյունը» գիրքը չեմ շնչով գրված, հայրենակարոտ մարդու տենչերով լեցուն, սիրուրքահայ գրականության լավագույն երկերից է և ոչնչանալի է ըստ ամենայնի։

ՌՈՒԲԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ